



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ

Թիվ 2

հունվար 2007 թվական

Բովանդակություն

26.01.2007թ.

1. Մկրտիչ և Գյուլիսանում Գասպարյաններ *v.* Քաղաքապետարան, Էրրորդ անձ ՀՀ ԿԱ ԱԳԿ ՊԿ Էրեբունու ՏՍ, քաղ. գործ թիվ 3-106/ՎԴ (սեփականության իրավունքը ճանաչելու պահանջով):

Խնդիրը. Արդյո՞ք ինքնակամ կառույցի նկատմամբ դատարանը կարող է ճանաչել հայցվորի սեփականության իրավունքը:

ՀՀ վճռաբեկ դատարանը որոշեց. ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 172-րդ հոդվածից հետևում է, որ անձը սեփականության իրավունք կարող է ձեռք բերել օրենքի և այլ իրավական ակտերի պահանջների պահպանմամբ ստեղծած գույքի նկատմամբ: Ինքնակամ կառույցի նկատմամբ սեփականության իրավունք կարող է ճանաչվել միայն, երբ այն օրենքի և այլ իրավական ակտերի պահանջների պահպանմամբ դառնում է օրինական:

**Միաժամանակ, վճռաբեկ դատարանն անդրադարձել է 1991 թվականի հողային օրենսգրքի կիրառման հարցերին, մասնավորապես վճռաբեկ դատարանը գտել է, որ 29.01.1991 թվականի ՀՀ հողային օրենսգրքի 9-րդ հոդվածի ուժով ծագել է հայցվորի սեփականության իրավունքը նշված հողամասի նկատմամբ:*

2. «Ապոգեյ» ԱԿ *v.* «Հրայր Սողոմոնյան» ՍՊԸ, Եվգենիա Պառավյան, քաղ. գործ թիվ 3-25/ՏԴ (գումարի բռնագանձման պահանջով):

Խնդիրը. Արդյո՞ք սնանկության գործով կառավարիչն ազատվում է պետական տուրքի վճարումներից՝ իր լիազորությունների շրջանակներում հայցադիմումներ, դիմումներ, վերաքննիչ և վճռաբեկ բողոքներ դատարան ներկայացնելիս:

ՀՀ վճռաբեկ դատարանը որոշեց. «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մասի «է» կետի համաձայն՝ դատարաններում պետական տուրքի վճարումից ազատվում են բոլոր հայցվորները՝ օրենքով նախատեսված դեպքերում այլ անձանց՝ օրենքով պաշտպանվող իրավունքների և շահերի պաշտպանության հարցերով դատարան տրվող դիմումների գծով: Սույն գործով սնանկության գործերով կառավարիչը հայց է ներկայացրել այլ անձի՝ «Ապոգեյ» արտադրական կոդպերատիվի՝ օրենքով պաշտպանվող իրավունքների և շահերի պաշտպանության համար, ուստի վճռաբեկ դատարանը գտնում է, որ սնանկության գործով կառավարիչն անվճարունակ ճանաչված անձի՝ օրենքով պաշտպանվող իրավունքների և շահերի պաշտպանության հարցերով հայցադիմումներ (դիմումներ) դատարան ներկայացնելիս ազատված է պետական տուրքի վճարման պարտականությունից:

3. Արմեն Մարգարյան v. Աշոտ Մարգարյան, քաղ. գործ թիվ 3-24/Ա (բաժնային սեփականության գույքից բաժինն առանձնացնելու և սեփականության իրավունքը դադարեցնելու պահանջներով):

Խնդիրը. Արդյո՞ք դատարանը ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 94-րդ հոդվածի առաջին մասով սահմանված ծանուցման ընթացակարգի պահպանմամբ գործը քննելով կարող է խախտել անձի ՀՀ Սահմանադրությամբ երաշխավորված իրավունքները:

ՀՀ վճռաբեկ դատարանը որոշեց. ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 94-րդ հոդվածի 1-ին մասը հնարավորություն է ընձեռում դատարանին պատասխանողի փաստացի գտնվելու վայրն անհայտ լինելու դեպքում գործը քննել պատասխանողի վերջին հայտնի բնակության վայրի համայնքի ղեկավարի կամ նրա վերջին հայտնի աշխատավայրի տնօրինության կողմից ծանուցում ստանալու փաստը հավաստող մակագրությամբ հաղորդագրություն ստանալուց հետո: Տվյալ դեպքում դատարանում ստացվել է Կենտրոն համայնքի ղեկավարի տեղակալի՝ դատարանին հասցեագրված 18.05.2006 թվականի թիվ 23/35-122-162 գրությունը, որով հայտնվել է, որ Աշոտ Մարգարյանին հնարավոր չէ ծանուցել քաղաքից բացակայելու պատճառով: Սակայն, **սույն գործի փաստերից ելնելով**, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ դատարանը, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 94-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված ծանուցման ընթացակարգի պահպանմամբ գործը քննելով, խախտել է պատասխանողի ՀՀ Սահմանադրության 8-րդ հոդվածով նախատեսված սեփականության իրավունքը, ինչպես նաև 19-րդ հոդվածով երաշխավորված արդար դատաքննության իրավունքը: Սույն եզրահանգումն ունի հետևյալ հիմնավորումը. պատասխանողի վերջին հայտնի բնակության վայրի համայնքի ղեկավարին կամ նրա վերջին հայտնի աշխատավայրի տնօրինությանը դատաքննության մասին ծանուցելու՝ օրենսդրի տրամաբանությունը կայանում է նրանում, որ այս երկու սուբյեկտների ենթադրյալ կապը պատասխանող ֆիզիկական անձի հետ հնարավոր է և իրատեսական, և ողջամտորեն ենթադրելի է, որ այս սուբյեկտներից որևէ մեկը կարող է անձի համար տեղեկատվության աղբյուր հանդիսանալ դատաքննության մասին: Սակայն ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 94-րդ հոդվածի 1-ին մասը կիրառելիս դատարանը պետք է ողջամտորեն գնահատի օրենսդրի այս կարգավորման նպատակի իրագործելիության հնարավորությունը՝ տվյալ գործի փաստերից ելնելով: Նման գնահատման ողջամիտ չափորոշիչներ կարող են լինել, մասնավորապես՝ համայնքի ղեկավարի և դրա բնակիչների համայնքային կապերի ակտիվության մակարդակը, վերջին հայտնի աշխատավայրից անձի հեռանալու ժամկետը և այլ հանգամանքներ: Բոլոր դեպքերում ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 94-րդ հոդվածի 1-ին մասի կիրառումը չպետք է և չի կարող սահմանափակել կամ ի չիք դարձնել՝ անձի արդար դատաքննության սահմանադրական իրավունքը:

4. Տատյանա Դավթյանի v.Նորայր Ոսկերչյան, քաղ. գործ թիվ 3-12/ՏԴ (ՄՊԸ-ից Նորայր Ոսկերչյանին հեռացնելու պահանջով):

Խնդիրը. Արդյո՞ք ՄՊԸ-ի մասնակցի Ընկերության մասնակիցների ցանկում նշված հասցեում ժամանակավորապես չբնակվելու հանգամանքը կարող է հիմք հանդիսանալ ընդհանուր ժողով հրավիրող մարմնի կողմից այդ մասնակցին ընդհանուր ժողովի անցկացման մասին ծանուցելու օրենքով սահմանված պարտականությունը չկատարելու համար:

ՀՀ վճռաբեկ դատարանը որոշեց. «Մահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 39-րդ հոդվածի համաձայն՝ Ընդհանուր ժողով հրավիրող մարմինը կամ անձինք պարտավոր են ժողովի անցկացման օրվանից ամենաուշը քսան օր առաջ այդ մասին ծանուցել ընկերության մասնակիցներին՝ պատվիրված նամակն ուղարկելով ընկերության մասնակիցների ցանկում նշված հասցեով: Քաղաքացու նշված հասցեում ժամանակավորապես չբնակվելու հանգամանքը ընկերության կողմից մասնակցին ընդհանուր ժողովի անցկացման մասին ծանուցելու օրենքով սահմանված պարտականությունը չկատարելու հիմք չի կարող հանդիսանալ, քանի որ քաղաքացու բացակայելը մշտական բնակության վայրից չի բացառում օրենքով սահմանված կարգով պատվիրված նամակի միջոցով մասնակիցների ցանկում նշված հասցեով ծանուցման դեպքում ընկերության մասնակցի՝ անձամբ կամ ներկայացուցչի միջոցով ընդհանուր ժողովին ներկայանալու և դրա աշխատանքներին մասնակցելու հնարավորությունը: Սույն գործով չներկայանալու պատճառը ժողովի վերաբերյալ պատշաճ կերպով ծանուցված չլինելն է հանդիսացել:

5. Մ.Խորենյան և Ա.Հակոբյան v. Ա.Խորենյան, Գ.Հակոբյան, քաղ. գործ թիվ 3-19/ԿԴ (Ժառանգության և սեփականության իրավունքի վկայագիրն անվավեր ճանաչելու, ժառանգական գույքի զանգվածը որոշելու, մտավոր գործունեության արդյունքների նկատմամբ հավասար բաժիններով ժառանգներ ճանաչելու պահանջներով):

Խնդիրը. Արդյո՞ք ստեղծագործության կրիչի՝ այս կամ այն անձին սեփականության իրավունքով պատկանելը կամ դրա փոխանցումը այլ անձի հանգեցնում է հեղինակային բացառիկ իրավունքների ծավալի փոփոխության:

ՀՀ վճռաբեկ դատարանը որոշեց. Ստեղծագործությունն իր վրա կամ իրենում մարմնավորող, առարկայական և շոշափելի դարձնող առարկան /կրիչը/ շարունակում է մնալ որպես գույք, հետևաբար՝ սեփականության իրավունքի օբյեկտ: Ստեղծագործության կրիչի՝ այս կամ այն անձին սեփականության իրավունքով պատկանելը կամ դրա փոխանցումը այլ անձի չի հանգեցնում հեղինակային բացառիկ իրավունքների ծավալի փոփոխության: Մտավոր սեփականության արդյունք հանդիսացող ստեղծագործությունը ինքնին գույք չէ, և այն գույքային շրջանառության օբյեկտ չի կարող լինել: Հեղինակի կողմից նյութական օբյեկտի օտարումը, որում արտահայտված է ստեղծագործությունը, ինքնին չի նշանակում հեղինակային իրավունքի օտարում: Գույքային շրջանառության օբյեկտ են հանդիսանում այն առարկաները, որոնք իրենց վրա կամ իրենց մեջ օբյեկտիվորեն ընկալելի են դարձնում ստեղծագործությունը, ինչպես նաև այդ ստեղծագործությունների նկատմամբ գույքային բացառիկ իրավունքները: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով վեճի առարկան ոչ թե բուն ստեղծագործության նկատմամբ մտավոր սեփականության, այսինքն՝ հեղինակային իրավունքն է, այլ այն նյութական օբյեկտի նկատմամբ սեփականության իրավունքը, որի վրա իր արտացոլումն է գտել ստեղծագործությունը:

6. Վաղուշ Մովսիսյան v. «Բազրատունյաց-13» համատիրություն, քաղ. գործ թիվ 3-9/Ա (սեփականության իրավունքը ճանաչելու պահանջով):

Խնդիրը. Արդյո՞ք համատիրության նախագահի և բազմաբնակարան շենքի մի քանի բնակիչների համաձայնությունը բավարար են նույն շենքի նկուղային հարկից 80 քմ տարածքը սեփականության իրավունքով բնակիչներից մեկին օտարելու համար:

ՀՀ վճռաբեկ դատարանը որոշեց. «Բազմաբնակարան շենքի կառավարման մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի համաձայն՝ ընդհանուր բաժնային սեփականության

կառավարման բարձրագույն մարմինը շինությունների սեփականատերերի ժողովն է (այսուհետ՝ ժողով), որին պատկանում է բազմաբնակարան շենքի ընդհանուր բաժնային սեփականության կառավարման բնագավառում ցանկացած հարցի լուծման իրավունքը, այդ թվում նաև՝ ընդհանուր բաժնային սեփականություն հանդիսացող անշարժ գույքի մի մասի առանձնացման, դրա օտարման, գրավադրման մասին որոշումների ընդունումը, որպիսիք պետք է ընդունվեն բոլոր սեփականատերերի կողմից միաձայն:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 224-րդ հոդվածը, ամրագրելով բազմաբնակարան շենքի շինությունների սեփականատերերի բաժնային սեփականության իրավունքը, չի նախատեսում բազմաբնակարան շենքի համասեփականատերերի մի մասի համաձայնությամբ, չունենալով մյուս բնակիչների համաձայնությունը, նրանց բաժնային սեփականությունից առանձնացնել բաժին և այն սեփականության իրավունքով փոխանցել նույն շենքի բնակիչներից մեկին: Ավելին, դատարանը «Բագրատուկյաց-13» համատիրության բոլոր սեփականատերերին մասնակից չի դարձրել գործի քննությանը՝ վճիռ կայացնելով նրանց իրավունքների և պարտականությունների վերաբերյալ:

7. Էդվարդ Մկրտչյան v. ՀՀ ԿԱ ՀՊԾ Մաշտոցի ՏՍ, քաղ. գործ թիվ 3-1/ՏԴ (որոշումներն անվավեր ճանաչելու պահանջով):

Խնդիրը. Հարկային պետական ծառայությունը, վարչական վարույթի հարուցման մասին ծանուցումն ուղարկելով արդյո՞ք ապահովել է վարչական պատասխանատվության ենթարկվող անձին լսելու հնարավորությունը (օրենքով հետապնդվող նպատակը):

ՀՀ վճռաբեկ դատարանը որոշեց. Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 267-րդ հոդվածի համաձայն՝ վարչական իրավախախտման վերաբերյալ գործը քննվում է վարչական պատասխանատվության ենթարկվող անձի ներկայությամբ:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ վարչական մարմինն իր նախաձեռնությամբ վարչական վարույթ հարուցելիս վարույթի մասնակիցներին կամ նրանց ներկայացուցիչներին պատշաճ ձևով ծանուցում է վարչական վարույթ հարուցելու մասին, եթե վարչական վարույթի հարուցումից մինչև վարչական ակտն ընդունելու միջև ընկած ժամանակահատվածը երեք օրից ավելի է: Տվյալ դեպքում վարչական մարմինը (*տեսչություն*) ունի պատշաճ ծանուցման ձևի ընտրության հայեցողություն: Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում արձանագրել, որ տեսչության հայեցողությունը՝ ընտրելու ծանուցման ձևը պետք է համապատասխանի «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջներին, որի համաձայն հայեցողական լիազորություններ իրականացնելիս վարչական մարմինը պարտավոր է առաջնորդվել մարդու և քաղաքացու՝ ՀՀ Սահմանադրությամբ ամրագրված իրավունքների և ազատությունների պաշտպանության անհրաժեշտությամբ, նրանց իրավահավասարության, վարչարարության իրականացման համաչափության և կամայականության արգելքի սկզբունքով, ինչպես նաև հետապնդել օրենքով կանխորոշված այլ նպատակներ: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ վարչական պատասխանատվության ենթարկելու մասին գործերի քննության մասին վարույթի մասնակիցներին ծանուցելը պետք է նպատակ հետապնդի ապահովել պատասխանատվության ենթարկվող անձին լսելու հնարավորությունը, ինչը

հնարավորություն կտա վերջինիս լիարժեք իրականացնել իր իրավունքների պաշտպանությունը: Հետևաբար, ընտրվող պատշաճ ծանուցման ձևը պետք է լինի այնպիսին, որ հնարավորություն ընձեռնի ապահովել վերոհիշյալ պահանջները: Նույնաբովանդակ պահանջ է ներառում նաև «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) 13-րդ հոդվածով ամրագրված՝ իրավական պաշտպանության արդյունավետ միջոցի իրավունքը: Մասնավորապես, Մարդու իրավունքների եվրոպական դատարանը Կուդլան ընդդեմ Լեհաստանի գործով նշել է, որ Կոնվենցիայի 13-րդ հոդվածն ուղղակիորեն արտահայտելով պետությունների պարտավորությունը առաջինը պաշտպանել մարդու իրավունքները, անձի համար ստեղծում է լրացուցիչ երաշխիք՝ ապահովելու համար, որ նա արդյունավետորեն օգտվի իր այդ իրավունքներից:

8. Էդուարդ Գևորգյան v. ՀՀ ԿԱ ԱԳԿ ՊԿ Զեյթուն SU, քաղ. գործ թիվ 3-101/ՎԴ (անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքի պետական գրանցման ժամկետը բաց թողնելու պատճառը հարգելի համարելու և պետական գրանցում կատարելու պահանջներով):

Խնդիրը. Քաղաքապետի որոշմամբ իր կողմից նախկինում կայացված որոշումն ուժը կորցրած ճանաչելու և նոր որոշում կայացնելու դեպքում, որ որոշումն է համարվում սկզբնական ներկայացված դիմումին վերջնական լուծում տվող ակտ:

ՀՀ վճռաբեկ դատարանը որոշեց. Սույն գործով դեռևս 2004 թվականին Մարի Գևորգյանը դիմել է Երևան քաղաքի Ն.Զեյթուն 2-րդ փողոց, 19 հասցեում գտնվող ընդհանուր համատեղ սեփականություն հանդիսացող 1750 քմ հողամասին կից ինքնակամ զբաղեցված 101,4 քմ մակերեսով հողատարածքի նկատմամբ սեփականության իրավունքի ճանաչման խնդրանքով, համասեփականատիրոջ համաձայնության բացակայության պատճառով Երևանի քաղաքապետի 28.12.2004 թվականի թիվ 2463-Ա որոշմամբ այն մերժվել է: Մերժման հիմքերի վերանալուց հետո նույն խնդրանքով Մարի Գևորգյանը դիմել է Երևանի քաղաքապետարան, և Երևանի քաղաքապետի «Երևան քաղաքում ինքնակամ կառուցված շենքերի, շինությունների և ինքնակամ զբաղեցրած հողամասերի կարգավիճակի վերաբերյալ Երևանի քաղաքապետի համապատասխան որոշումներում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 05.09.2005 թվականի թիվ 1884-Ա որոշմամբ (կետ 43) ուժը կորցրած է համարվել Երևանի քաղաքապետի 28.12.2004 թվականի թիվ 2463-Ա որոշման 2-րդ հավելվածի 63-րդ տողի 10-րդ սյունակը, և ճանաչվել է հողատարածքի նկատմամբ Մարի Գևորգյանի սեփականության իրավունքը՝ հողի օտարման պայմանով: Այսինքն՝ Երևանի քաղաքապետի 05.09.2005 թվականի որոշմամբ ոչ թե բավարարվել է հողամասի նկատմամբ սեփականության իրավունքը ճանաչելու մասին Մարի Գևորգյանի նոր հայտը, այլ նշված որոշմամբ վերանայվել է համասեփականատիրոջ համաձայնության բացակայության պատճառով սեփականության իրավունքը չճանաչելու մասին քաղաքապետի 28.12.2004 թվականի սկզբնական որոշումը: Փաստորեն, սեփականության իրավունքը ճանաչելու վերաբերյալ Մարի Գևորգյանի 2004 թվականին ներկայացված դիմումի վերջնական լուծումը տրվել է միայն 05.09.2005 թվականին:

9. «Հրագդանի Էներգետիկ կազմակերպություն» ԲԲԸ v. ՀՀ ԿԱ ՀՊԾ, քաղ. գործ թիվ 3-2388/ՏԴ (ստուգման ակտը մասնակի անվավեր ճանաչելու պահանջով):

Խնդիրը. Ո՞ր դեպքում է ստուգումն իրականացնող մարմինը «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ իրացման շրջանառությունը

հաշվարկում ՀՀ կառավարության 18.09.1998 թվականի թիվ 580 որոշմամբ սահմանված կարգով:

ՀՀ վճարեկ դատարանը որոշեց. «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի 2-րդ կետը ընդամենը տվյալների անբավարարության դեպքում հնարավորություն է ընձեռնում հարկային տեսչությանը իրացման շրջանառությունը հաշվարկել ՀՀ կառավարության սահմանած կարգով: Ստուգումն իրականացնող մարմինն ինքն է որոշում, թե արդյոք ներկայացված փաստաթղթերը բավարար են իրացման շրջանառությունը հաշվարկելու համար թե ոչ: Սույն գործով ընկերությունը ստուգումն իրականացնող մարմինն ներկայացրել է, ստուգման համար անհրաժեշտ, բոլոր փաստաթղթերը և ստուգումն իրականացնող մարմինը գտել է, որ ներկայացված փաստաթղթերը բավարար են իրացման շրջանառությունը հաշվարկելու համար և կարիք չկա դա հաշվարկել ՀՀ կառավարության 18.09.1998 թվականի թիվ 580 որոշմամբ սահմանված կարգով: Նման պայմաններում հիմնավոր է վճարեկ բողոքի փաստարկն այն մասին, որ տվյալ պարագայում բացակայում են «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի 2-րդ մասով նշված նախապայմաններից և ոչ մեկը, հետևաբար ստուգող մասնագետները ընկերության կողմից ապօրինի գործունեության արդյունքում առաջացած իրացման շրջանառությունը չպետք է հաշվարկելին ՀՀ կառավարության 18.09.1998 թվականի թիվ 580 որոշմամբ հաստատված կարգով:

10. Շուշանիկ Գրիգորյան v. Արարատ Մովսիսյան, քաղ. գործ թիվ 3-2431/ՎԴ (գումարի բռնագանձման պահանջով):

Խնդիրը. Արդյո՞ք դատական պաշտպանության դիմելու արդյունքում իրավաբանական օգնություն ստանալու համար պատասխանողի կողմից կատարված ծախսերը կարող են դիտվել որպես հայցվորի կողմից հասցված և հատուցման ենթակա վնաս:

ՀՀ վճարեկ դատարանը որոշեց. ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 17-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ վնասներ են իրավունքը խախտված անձի ծախսերը, որ նա կատարել է կամ պետք է կատարի խախտված իրավունքը վերականգնելու համար, նրա գույքի կորուստը կամ վնասվածքը (իրական վնաս), ինչպես նաև չստացված եկամուտները, որոնք այդ անձը կստանար քաղաքացիական շրջանառության սովորական պայմաններում, եթե նրա իրավունքը չխախտվեր (բաց թողնված օգուտ): Քաղաքացիական իրավունքում վնաս պատճառելու հետևանքով ծագած պարտավորությունը պայմանավորված է վնասի առաջացման և վնաս պատճառած անձի գործողությունների պատճառահետևանքային կապով, մեղքի առկայությամբ, եթե օրենքով այլ բան նախատեսված չէ: Անձի՝ իրավունքների և ազատությունների (թեկուզև ենթադրյալ) դատական պաշտպանության իրավունքի իրականացումը ինքնին չի կարող դիտվել որպես ոչ իրավաչափ գործողություն կամ որպես այլ անձին (մասնավորապես, դատավարության մյուս կողմին) վնաս պատճառելու դրսևորում: Սույն գործով Արարատ Մովսիսյանը, դիմելով դատարան, իրականացրել է ՀՀ Մահմանադրության 19-րդ հոդվածով և «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետով երաշխավորված դատական պաշտպանության իր իրավունքը: Հետևաբար, Շուշանիկ Գրիգորյանի կատարած ծախսերը կապված տվյալ գործով իրավաբանական օգնություն ստանալու հետ, չեն կարող դիտվել որպես վնասներ: Միակ բացառությունն օրենսդիրը կատարել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 129-րդ հոդվածով, երբ արդար դատաքննության իրավունքից անբարեխիղճ օգտվելը կարող է վնասներ հատուցելու

պարտականությունն առաջացնել: Նման դեպքերում մեղքի առկայության և վնասների հատուցման հիմք է հանդիսանում դատարանի կողմից հայցն ակնհայտ անհիմն ճանաչելը: Այս դեպքում միայն պատասխանողն իրավունք ունի վնասների հատուցման պահանջով դիմելու դատարան:

11.Սուրիկ Մանվելյան v. Համազասպ Թադևոսյան, քաղ. գործ թիվ 3-28/ՎԴ (սեփականության իրավունքի գրանցման վկայականը մասնակի անվավեր ճանաչելու, առուվաճառքի պայմանագիրը վավեր ճանաչելու, բնակելի շինության և դրանով զբաղեցված հողամասի նկատմամբ սեփականության իրավունքը ճանաչելու պահանջներով):

Խնդիրը. Արդյո՞ք ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 300-րդ հոդվածի հիմքով կարող է վավեր ճանաչվել ինքնակամ կառույցի նկատմամբ կնքված առուվաճառքի պայմանագիրը:

ՀՀ վճռաբեկ դատարանը որոշեց. ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 300-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ եթե կողմերից մեկը լրիվ կամ մասնակի կատարել է նոտարական վավերացում պահանջող գործարքը, իսկ մյուս կողմը խուսափում է գործարքի նոտարական վավերացումից, դատարանն իրավունք ունի գործարքը կատարած կողմի պահանջով, այն վավեր ճանաչել: Նշված դրույթը կիրառելու համար պարտադիր է որպեսզի գործարքը նախ չհակասի օրենքին (տվյալ դեպքում գործարքը կնքելու պահին գործող ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 110-րդ հոդվածի պահանջին), ապա գործարքի պայմանները պետք է համապատասխանեն նոտարական վավերացում պահանջող գործարքի պահանջներին: Օրենքին հակասող գործարքների նկատմամբ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 300-րդ հոդվածը կիրառելի չէ: Սույն գործով վիճելի անօրինական կառույցի առուվաճառքի գործարքը ուղղակի արգելված է եղել գործարքի կնքման պահին գործող ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 110-րդ հոդվածով:

12. Նիկոլայ Մկրտչյան v. Սիլվա Մկրտչյան, քաղ. գործ թիվ 3-33/ՎԴ (գումարի բռնագանձման պահանջով):

Խնդիրը. Գործարքն անվավեր ճանաչելու դեպքում գործարքով վճարված գումարը որ պահից է համարվում անօրինական հիմքերով պահված:

ՀՀ վճռաբեկ դատարանը որոշեց. Սույն քաղաքացիական գործով Սիլվա Մկրտչյանի կողմից գումարը ստացվել և պահվել է 2000 թվականի մայիսի 17-ին կնքված գործարքի ուժով, հետևաբար մինչ այդ գործարքն անվավեր ճանաչելու պահը Սիլվա Մկրտչյանը գումարը պահել է օրինական հիմքերով: Վերջինս գումարն անօրինական պահել է նշված գործարքն անվավեր ճանաչելու մասին Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների առաջին ատյանի դատարանի 2005 թվականի ապրիլի 1-ի վճռի օրինական ուժի մեջ մտնելու պահից սկսած: Հետևաբար, բանկային տոկոսները պետք է հաշվարկվեն գումարի վերադարձման պարտավորության ծագման պահից: Նման մեկնաբանության համար Վճռաբեկ դատարանը հիմք է ընդունում այն հանգամանքը, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածով նախատեսված տոկոսների վճարման պարտավորությունը ոչ թե գործարքի անվավերության հետևանք է, այլ անվավերության հետևանքի չկատարման, այսինքն՝ պայմանագրով վճարված գումարի չվերադարձման արդյունքում առաջացած պարտավորությունը: Հետևաբար, բանկային տոկոսները պետք է հաշվարկվեն գումարի վերադարձման պարտավորության ծագման պահից:

13. Նունե Մանուկյան v. «ԱրմենՏել» ՓԲԸ, քաղ. գործ թիվ 3-34/ՎԴ (աշխատանքում վերականգնելու պահանջով):

Խնդիրը. Արդյո՞ք ընկերությունում աշխատողի մասնագիտական պատրաստվածությանը և որակավորմանը համապատասխան այլ աշխատանք չլինելու ապացուցման պարտականությունը դատարանում կրում է ընկերությունը:

ՀՀ վճռաբեկ դատարանը որոշեց. Գործին մասնակցող յուրաքանչյուր անձ պետք է ապացուցի իր պահանջների և առարկությունների հիմքում ընկած հանգամանքները: Սույն գործով որոշելու համար թե դատավարության որ կողմի վրա է ընկնում Ընկերությունում համապատասխան այլ աշխատանքի առկայության կամ բացակայության ապացուցման պարտականությունը, Վճռաբեկ դատարանը կարևորում է այն հանգամանքը, որ տվյալ դեպքում, հայցվորը կարող է նման ապացույց ձեռք բերել միայն պատասխանողից, քանի որ Ընկերությունում համապատասխան այլ աշխատանքի առկայության կամ բացակայության փաստը հավաստող ապացույցը պետք է առկա լիներ Ընկերության ներքին փաստաթղթերում: ՀՀ աշխատանքային օրենսգրքի 113-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ գործատուն չի կարող անմիջականորեն կիրառել աշխատանքից ազատելու իր լիազորությունը, քանի որ այդ լիազորության իրականացման համար անհրաժեշտ է աշխատողի հրաժարումը առաջարկված աշխատանքից: Հետևաբար, գործատուն կրում է անուղղակի ապացուցման պարտականություն աշխատողի հանդեպ նրան արտադրության ծավալների, տնտեսական, տեխնոլոգիական և աշխատանքի կազմակերպման պայմանների փոփոխման, ինչպես նաև արտադրական անհրաժեշտությամբ պայմանավորված աշխատողների թվաքանակի կրճատման դեպքում աշխատանքից ազատելիս ապացուցելու, որ իր մոտ բացակայում է նրա մասնագիտական պատրաստվածությանը, որակավորմանը, առողջական վիճակին համապատասխան այլ աշխատանք:

14. «Վասիլ» ՍՊԸ v. ՀՀ ԿԱ ՀՊԾ, քաղ. գործ թիվ 3-35/ՏԴ (ստուգման ակտը մասնակի անվավեր ճանաչելու պահանջով), «Տուֆ-քառյակ» ՍՊԸ v. ՀՀ ԿԱ ՀՊԾ, քաղ. գործ թիվ 3-36/ՏԴ (ստուգման ակտը մասնակի անվավեր ճանաչելու պահանջով), «Կ.Գորոյան և գործընկերներ» ՍՊԸ v. ՀՀ ԿԱ ՀՊԾ, քաղ. գործ թիվ 3-37/ՏԴ (ստուգման ակտը մասնակի անվավեր ճանաչելու պահանջով), «Նարվա» ՍՊԸ v. ՀՀ ԿԱ ՀՊԾ, քաղ. գործ թիվ 3-38/ՏԴ (ստուգման ակտը մասնակի անվավեր ճանաչելու պահանջով):

Խնդիրը. Արդյո՞ք անցումային ժամանակաշրջանում՝ 2004 թվականի մայիսի 4-ին, ստանալով հանքարդյունահանման հատուկ լիցենզիա՝ լիցենզառուն պարտավոր է լիազոր մարմնի հետ կնքել լիցենզային պայմանագիր 2001 թվականին կնքված պայմանագրի գոյության պայմաններում:

ՀՀ վճռաբեկ դատարանը որոշեց. 2002 թվականի դեկտեմբերի 21-ին ուժի մեջ մտած ՀՀ ընդերքի մասին օրենսգրքի 65-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ նույն օրենսգիրքը գործողության մեջ դրվելուց հետո մինչև 2004 թվականի հուլիսի 1-ը ընդերքօգտագործողները պարտավոր են վերագրանցելու ընդերքօգտագործման իրավունք սահմանող փաստաթղթերը՝ թույլտվությունը, լիցենզիաները և պայմանագրերը՝ համապատասխանեցնելով դրանք նույն օրենսգրքի պահանջներին: Նշված օրինադրույթի իմաստով «ընդերքօգտագործման իրավունք սահմանող փաստաթղթերը վերագրանցել» նշանակում է անցումային ժամանակաշրջանում՝ մինչև 2004 թվականի հուլիսի 1-ը այդ փաստաթղթերը՝ թույլտվությունները, լիցենզիաները և պայմանագրերը համապատասխանեցնել ՀՀ ընդերքի մասին օրենսգրքի պահանջներին, այն է՝ լիազոր մարմնից ստանալ հանքարդյունահանման կամ հանքարդյունահանման հատուկ լիցենզիա և դրա հիման վրա «Ընդերքն օգտակար հանածոների շահագործման նպատակով ուսումնասիրության և

արդյունահանման համար տրամադրելու (կոնցեսիայի) մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 6-րդ մասի ուժով լիազոր մարմնի հետ կնքել լիցենզային պայմանագիր: Լիցենզիա ստանալն ընդերքօգտագործողի իրավունքն է, իսկ փաստաթղթերի վերագրանցումը ՀՀ ընդերքի մասին օրենսգրքի անցումային դրույթների ուժով պարտականությունը: Բացի այդ, «Ընդերքն օգտակար հանածոների շահագործման նպատակով ուսումնասիրության և արդյունահանման համար տրամադրելու (կոնցեսիայի) մասին» ՀՀ օրենքի 76-րդ հոդվածի 3-րդ մասի 4-րդ պարբերության (անցումային դրույթներ) համաձայն՝ անցումային ժամանակաշրջանում տրված լիցենզիաների հետ կապված իրավահարաբերությունները կարգավորվում են նույն օրենքով: Հետևաբար, 2004 թվականի մայիսի 4-ին ընկերությանը տրված լիցենզիայի հետ կապված բոլոր իրավահարաբերությունները, այդ թվում նաև լիցենզային պայմանագիր կնքելու և լիցենզիայի ուժի մեջ մտնելու կարգը կարգավորվում է «Ընդերքն օգտակար հանածոների շահագործման նպատակով ուսումնասիրության և արդյունահանման համար տրամադրելու (կոնցեսիայի) մասին» ՀՀ օրենքով, որի 10-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ հանքային իրավունք կրողի և լիազոր մարմնի միջև կնքվում է լիցենզային պայմանագիր: Լիցենզային պայմանագիրը հանդիսանում է սովյալ հանքային իրավունքը հավաստող լիցենզիայի անբաժանելի մասը: Լիցենզիայի գործողության սկիզբ է համարվում լիցենզային պայմանագրի կնքման պահը:

02.03.2007թ.

15. Սասուն Խաչատրյան Վ. Արմեն Մարգարյան, Երևանի քաղաքապետարան, քաղ. գործ թիվ 3-118/ՎԴ (հողամասի ուղղակի վաճառքի պայմանագիրը մասնակի անվավեր ճանաչելու և որոշակի պայմանով այն կնքելու իրավունք վերապահելու պահանջներով):

Խնդիրը. Անձանց ո՞ր իրավունքներն են խախտվում, երբ դատարանը դատական նիստը սկսում է նշանակված ժամից ուշ:

ՀՀ վճռաբեկ դատարանը որոշեց. Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ դատական նիստը նշանակված ժամից ուշացումով սկսելը հանդիսանում է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 78-րդ հոդվածով նախատեսված՝ ծանուցման պահանջի չպահպանում, ինչը հանգեցնում է նաև «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածով երաշխավորված՝ յուրաքանչյուրի՝ արդար դատաքննության իրավունքի խախտման: Մարդու իրավունքների եվրոպական դատարանն իր նախադեպային իրավունքում արտահայտել է այն դիրքորոշումը, որ պայմանավորվող պետությունները ոչ միայն պետք է ամրագրեն քաղաքացիական իրավունքների դատական պաշտպանության իրավունքը, այլև կոնկրետ գործով պետք է ապահովեն անձի կողմից այդ իրավունքի իրականացման իրական հնարավորությունը: Տվյալ դեպքում դատական նիստի արձանագրության համակարգչային արձանագրման կրիչի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ 2006 թվականի սեպտեմբերի 29-ի ժամը 11:30-ին նշանակված դատական նիստը սկսվել է նույն օրը՝ ժամը 16:01-ին, ինչի արդյունքում Վերաքննիչ դատարանը փաստորեն զրկել է հայցվոր կողմին դատարանում իր իրավունքները պաշտպանելու իրական հնարավորությունից:

16. Մարինե Ալոյան Վ. ՀՀ տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողով, քաղ. գործ թիվ 3-185/ՏԴ (թիվ 21-Ա որոշումն անվավեր ճանաչելու պահանջով):

Խնդիրը. Արդյո՞ք վարչական ակտի ներդիրները, հավելվածները և լրացուցիչ այլ փաստաթղթերը վարչական ակտն ընդունած պաշտոնատար անձանց կողմից ստորագրված չլինելու փաստը, կարող է հանգեցնել վարչական ակտն առոչինչ համարելուն:

ՀՀ վճռաբեկ դատարանը որոշեց. «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 55-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ վարչական ակտը կարող է ունենալ ներդիրներ, հավելվածներ: Նույն հոդվածի համաձայն՝ հավելվածները վարչական ակտի բաղկացուցիչ մասն են և գործում են այնքանով, որքանով գործում է բուն վարչական ակտը: Ներդիրները, հավելվածները և լրացուցիչ այլ փաստաթղթերը ինքնուրույն վարչական ակտեր չեն, դրանք վարչական ակտի բաղկացուցիչ մասն են և գործում են այնքանով, որքանով գործում է բուն վարչական ակտը: Հանձնաժողովի 2006 թվականի փետրվարի 1-ի թիվ 7-Ա որոշումը ձևակերպված է հստակ և հասկանալի, շարադրված է այնպես, որ հասցեատիրոջ համար պարզ է, թե իր վրա ինչ պարտականություն է դրված, որոնց պայմաններում նշված ակտն առոչինչ համարելն ինքնին դատարանի կողմից նյութական իրավունքի նորմի ակնհայտ սխալ կիրառում է: ՀՀ տնտեսական դատարանը սխալ է մեկնաբանել նաև «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 55-րդ հոդվածի պահանջները, որի արդյունքում հանգել է սխալ եզրակացության այն մասին, որ որոշման անստորագիր թղթերը չեն կարող համարվել ակտի հավելվածներ: «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 55-րդ հոդվածի պահանջներից հստակ հետևում է, որ վարչական ակտին ներկայացվող պահանջները վերաբերում են բուն վարչական ակտին և ոչ թե բուն վարչական ակտի հավելվածներին կամ ներդիրներին, և քանի որ օրենքով նախատեսված չէ, որ իրավական ակտի բաղկացուցիչ մասերը պարտադիր պետք է կնքվեն և ստորագրվեն վարչական ակտն ընդունած վարչական մարմնի պաշտոնատար անձի կողմից, ապա այդ հիմքով վարչական ակտի առոչինչ լինելու մասին հետևությունները դառնում են իրավագուրկ:

17. Երևանի քաղաքապետարան v. Արթուր Խաչատրյան, քաղ. գործ թիվ 3-295/ՎԴ (պաշտոնատար անձի օրենքին հակասող ակտը մասնակիորեն անվավեր ճանաչելու պահանջով):

Խնդիրը. Իրավաչափ է արդյո՞ք հայեցողական լիազորության իրականացման արդյունքում կայացված Երևանի քաղաքապետի որոշումը, և արդյո՞ք դատարանը, անվավեր ճանաչելով նման որոշումը, իրավունք ունի պարտադրելու վարչական մարմնին իրականացնել իր հայեցողական լիազորությունը դատական ակտով սահմանված կարգով:

ՀՀ վճռաբեկ դատարանը որոշեց. Մույն գործով վիճարկվում է Երևանի քաղաքապետի որոշումը, որը կայացվել է նրա հայեցողական լիազորության իրականացման արդյունքում, և հետևաբար առաջին հերթին դատական ստուգման է ենթակա այդ լիազորության իրականացման իրավաչափությունը: Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Երևանի քաղաքապետի հայեցողությունը՝ որոշելու վարձակալության ժամկետը, պետք է համապատասխանի «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջներին, որի համաձայն՝ հայեցողական լիազորություններ իրականացնելիս վարչական մարմինը պարտավոր է առաջնորդվել մարդու և քաղաքացու՝ ՀՀ Սահմանադրությամբ ամրագրված իրավունքների և ազատությունների պաշտպանության անհրաժեշտությամբ, **նրանց իրավահավասարության,**

վարչարարության իրականացման համաչափության և **կամայականության արգելքի սկզբունքով**, ինչպես նաև հետապնդել օրենքով կանխորոշված այլ նպատակներ: Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 5-րդ հոդվածը, ամրագրելով իշխանությունների բաժանման և հավասարակշռման սկզբունքը, միաժամանակ օրենսդրին հասցեագրել է հիմնարար առաքելություն՝ օրենքների հիման վրա որոշելու պետական մարմինների և դրանց պաշտոնատար անձանց իրավասությունը (լիազորությունը)՝ իշխանությունն իրականացնելիս: ՀՀ հողային օրենսգրքի 76-րդ հոդվածի 2-րդ մասով սպառիչ և հստակ սահմանված է այն մարմինը (պաշտոնատար անձը), որը լիազորված է որոշելու հողամասը վարձակալության տալու ժամկետը: Դատարանը, հանդիսանալով դատական իշխանություն իրականացնող մարմին, իրավասու չէ որոշել հողամասը վարձակալության տրամադրելու ժամկետը: Սույն գործով նման որոշում դատարանի կողմից կարող էր կայացվել միայն այն դեպքում, երբ առկա կլինեին վարչական մարմնի ոչ թե հայեցողական լիազորություն, այլ օրենքի ուժով պարտադիր լիազորություն, որը կբացառեր նրա հայեցողությունը: Դատարանի կողմից կոնկրետ ժամկետի սահմանումը միջամտում է վարչական մարմնի հայեցողական լիազորությանը: Նման միջամտությունը թույլատրելի է միայն հայեցողական լիազորության իրավաչափության ստուգման տեսանկյունից: Միաժամանակ, Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում նշել, որ օրենսդիրը, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 14-րդ հոդվածում ամրագրելով դատական ակտերի պարտադիր և կատարման ենթակա լինելը, 163-րդ հոդվածի 2-րդ մասում իրավունք է վերապահել դատարանին պարտադրելու համապատասխան մարմնին կամ պաշտոնատար անձին՝ ընդունելու քաղաքացու՝ օրենքով երաշխավորվող իրավունքները և (կամ) ազատությունները վերականգնող ակտ այն դեպքում, երբ քաղաքացու կամ իրավաբանական անձի խախտված իրավունքը չի կարող վերականգնվել միայն պետական մարմնի, տեղական ինքնակառավարման մարմնի կամ դրանց պաշտոնատար անձի՝ օրենքին հակասող ակտն անվավեր ճանաչելու միջոցով: Տվյալ դեպքում միայն Երևանի քաղաքապետի որոշումը մասնակիորեն անվավեր ճանաչելով՝ չի վերականգնվում դիմողի իրավունքը, հետևաբար Երևանի քաղաքապետին դատարանը կարող է պարտադրել կայացնելու քաղաքացու խախտված իրավունքը վերականգնող ակտ: **Միաժամանակ, ՀՀ վճռաբեկ դատարանը անդրադարձել է այն հարցին, թե դատավարության ընթացքում ով է հանդիսանում վարչական մարմնի ցուցաբերած մոտեցման իրավաչափության ապացուցման պարտականությունը (բեռը) կրողը:*

18. «Էդալեքս» ՍՊԸ v. ՀՀ ԿԱ ՀՊԾ, քաղ. գործ թիվ 3-27/ՏԴ (թիվ 1017365 ստուգման ակտն անվավեր ճանաչելու պահանջով):

Խնդիրը. Արդյոք ոչ ռեզիդենտ Ընկերության կողմից ռեզիդենտ Ընկերության հետ ֆրախտի պայմանագրի կնքումը ինքնին համարվում է ոչ ռեզիդենտ Ընկերության կողմից ՀՀ տարածքում ձեռնարկատիրական գործունեության իրականացում, և դրանից ստացված եկամուտը ենթակա է հարկման «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի 53-րդ հոդվածի համաձայն:

ՀՀ վճռաբեկ դատարանը որոշեց. «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի 53-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության տարածքում ձեռնարկատիրական գործունեությունից ստացված եկամուտներ են համարվում, մասնավորապես Հայաստանի Հանրապետությունում արտադրանքի, ապրանքների իրացումից և ծառայությունների մատուցումից ստացված եկամուտը՝ անկախ վճարման վայրից: ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 857-րդ հոդվածով տրված ֆրախտի

պայմանագրի սահմանումից պարզ է դառնում, որ ֆրախտի պայմանագրի օբյեկտ է համարվում տրանսպորտային միջոցը, որը ֆրախտ տրամադրողի կողմից որոշակի վճարի դիմաց տրամադրվում է այլ անձի՝ մեկ կամ մի քանի չվերթների համար, իսկ փոխադրման պայմանագրի օբյեկտ է հանդիսանում փոխադրվող բեռը (ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 855-րդ հոդված): ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 777-րդ հոդվածի 1-ին մասում ամրագրված դրույթի համաձայն՝ ծառայությունների վճարովի մատուցման պայմանագրով կատարողը (սույն գործով »Էյր Մալթա« ընկերությունը) պարտավորվում է պատվիրատուի (սույն գործով »Էդալեքս« ՍՊԸ-ի) առաջադրանքով ծառայություններ մատուցել (կատարել որոշակի գործողություններ կամ իրականացնել որոշակի գործունեություն), իսկ պատվիրատուն պարտավորվում է վճարել այդ ծառայությունների դիմաց: Տվյալ պարագայում ծառայությունների մատուցման պայմանագրի՝ ֆրախտի (չարտերի) առարկան է կազմում ուղևորների և ուղեբեռների փոխադրման համար տրանսպորտային միջոցի ամբողջ տարողունակությունը կամ դրա մի մասը մեկ կամ մի քանի չվերթի համար տրամադրելը: Այսինքն՝ ֆրախտի (չարտերի) պայմանագիրը ոչ թե բեռների փոխադրման, այլև ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 777-րդ հոդվածի ուժով ծառայությունների մատուցման պայմանագիր է: «Ոչ ռեզիդենտի շահութահարկի հաշվարկման և վճարման կարգի մասին» հրահանգի (այսուհետ՝ հրահանգ) 2.2.2-րդ կետի համաձայն. «Ծառայությունների մատուցումից ստացված ոչ ռեզիդենտի եկամուտները որպես հայաստանյան աղբյուրներից ստացվող եկամուտներ բնորոշելու համար որպես ընդհանուր սկզբունք հիմք է ընդունվում այդ ծառայությունների՝ Հայաստանի Հանրապետության տարածքում մատուցման փաստի առկայությունը»: Հրահանգի վերոնշյալ կետի վերլուծությունից ակնհայտ է, որ տվյալ պարագայում դիմողի կողմից ֆրախտի (չարտերի) պայմանագրով «Էյր Մալթա» ընկերությանը վճարվող գումարից շահութահարկ պետք է հաշվարկվի միայն մատուցված ծառայությունների այն մասով, որոնք փաստացի մատուցվել են Հայաստանի Հանրապետության տարածքում, ինչպես և արել է դիմողը:

**Միաժամանակ, Վճռաբեկ դատարանն անդրադարձել է «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի իմաստով ծառայությունների մատուցման վայրի որոշման հարցերին:*

19.Երվանդ Ավետիքյան v. Գագիկ Հարությունյան, Երևանի քաղաքապետարան, ՀՀ ԿԱ ԱԳԿ ՊԿ «Մարաշ» ՏՄ, քաղ. գործ թիվ 3-26/ՎԴ (Երևանի քաղաքապետի 28.12.1998 թվականի թիվ 1192 որոշումը Երվանդ Ավետիքյանի հողամասի վրա գտնվող շինությունը Գագիկ Հարությունյանին օրինականացնելու մասով անվավեր ճանաչելու, Գագիկ Հարությունյանի և Երևանի քաղաքապետարանի միջև 24.12.1999 թվականին կնքված հողի վարձակալության պայմանագիրն անվավեր ճանաչելու, նշված հողամասի և դրա վրա կառուցված շինության նկատմամբ հայցվորի սեփականության իրավունքը ճանաչելու և Գագիկ Հարությունյանին, նրա հետ բնակվող մյուս անձանց շինությունից վտարելու պահանջներով):

Խնդիրը. Արդյո՞ք նոտարական կարգով վավերացված համաձայնագրով համաձայնությունը, հողամասի հատկացման ակտում և իրավունքի գրանցումը հավաստող գրանցման վկայականում առկա հողամասի չափերի տարբերությունը կարող է բավարար հիմք հանդիսանալ գնահատելու քաղաքացու կողմից հողամասի մասի նկատմամբ սեփականության իրավունքից հրաժարվելու համար:

ՀՀ վճռաբեկ դատարանը որոշեց. ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 279-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ սեփականության իրավունքը դադարում է սեփականատիրոջ կողմից իր գույքն օտարելու, **սեփականության իրավունքից**

հրաժարվելու, գույքը ոչնչացնելու և գույքի նկատմամբ սեփականության իրավունքի կորստի՝ օրենքով նախատեսված այլ դեպքերում: Իսկ սեփականությունից հրաժարման դեպքերը նախատեսված են նույն օրենսգրքի 280-րդ հոդվածում, որի համաձայն՝ քաղաքացին կամ իրավաբանական անձը կարող է հրաժարվել իրեն պատկանող գույքի սեփականության իրավունքից՝ այդ մասին **գրավոր հայտարարելով** կամ այնպիսի գործողություններ կատարելով, որոնք ակնհայտ վկայում են գույքի տիրապետումից, օգտագործումից և տնօրինումից նրա մեկուսացման մասին՝ առանց այդ գույքի նկատմամբ որևէ իրավունք պահպանելու մտադրության: «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի համաձայն՝ անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքի դադարման մասին որոշումները, վճիռները և դատավճիռները, **անշարժ գույքից կամ դրա մի մասից սեփականատիրոջ հրաժարվելու մասին դիմումները**, անշարժ գույքի վարձակալության, օգտագործման իրավունքի դադարման մասին որոշումները ենթակա են պետական գրանցման՝ կատարելով համապատասխան փոփոխություններ գրանցման մատյանի՝ տվյալ անշարժ գույքի միավորի գրանցման թերթիկում և կադաստրային քարտեզում: Տվյալ դեպքում սեփականատերը իր գույքից հրաժարվել է գրավոր նոտարական գրասենյակում իր կողմից տրված համաձայնագրով, որը գրանցվել է թիվ 16868 սեղանամատյանում: Հողամասի նկատմամբ իրավունքներից քաղաքացու հրաժարվելուց հետո քաղաքացուն տրամադրվել է սեփականության իրավունքի նոր վկայագիր, իսկ քաղաքացու հրաժարման փաստը կադաստրի մարմնին հիմք էր սահմանված չափով գրանցումը կատարելու համար: Հետևաբար, նոտարական կարգով վավերացված համաձայնագիրը, սեփականության իրավունքի գրանցամատյանում, ինչպես նաև՝ վկայագրում համապատասխան փոփոխություններ կատարելն ինքնին հաստատում են քաղաքացու սեփականության իրավունքից հրաժարվելու փաստի մասին:

20. Վահե Միմնյան v. Հարություն Զուլումյան, քաղ. գործ թիվ 3-152/ՎԴ (գումարի բռնագանձման պահանջով):

Խնդիրը. Արդյո՞ք ստացականը իրավական հետևանքներ կարող է առաջացնել բացառապես այն պարտապանի կողմից պարտատիրոջը տալու դեպքում:

ՀՀ վճռաբեկ դատարանը որոշեց. Ստացականը դա պարտապանի կողմից ի հավաստումն պարտավորության տրված պարտքային փաստաթուղթ է, որով պարտապանը ընդունում է իր պարտքը պարտատիրոջ հանդեպ: Ստացական տալը՝ դա պարտավոր անձի կողմից պարտքի ճանաչումը վկայող գործողություն է, որի առկայության պայմաններում էական է ոչ թե այն հանգամանքը, թե այդպիսի գործողությունը ու՞մ ներկայությամբ, կամ թե որտե՞ղ է կատարվել, այլ այն փաստը, որ պարտապանը ընդունել է (ճանաչել է) իր պարտքը պարտատիրոջ հանդեպ: Փոխառուի կողմից ստացականը բացառապես փոխատուին տալու (հանձնելու) իմպերատիվ պահանջ ՀՀ օրենսդրությամբ նախատեսված չէ: Ուստի պատասխանողի կողմից սույն բողոքի պատասխանում բերված այն փաստարկը, թե ստացականը փոխառուի /պարտապանի/ կողմից պետք է տրվի բացառապես փոխատուին /պարտատիրոջը/, իսկ պատասխանողի կողմից ուստիկանությունում տրված պարտավորագիրը չի տրվել հայցվորին, ուստի այն ստացական համարվել չի կարող, Վճռաբեկ դատարանն անհիմն է համարում:

21. ՀՀ ԿԱ ՀՊԾ Խորհրդայինի ՀՏ v. Արա Գասպարյան, քաղ. գործ թիվ 3-278/ՏԴ (գումար բռնագանձելու պահանջով):

Խնդիրը. Հարկային մարմնի կողմից «Հաստատագրված վճարների մասին» ՀՀ օրենքով նախատեսված ոլորտներում գործունեություն իրականացնելու մասին հայտարարության օրինակը հարկ վճարողին չվերադարձնելը կարող է արդյո՞ք այդ հայտարարության իրավական հետևանքները բացառող հանգամանք հանդիսանալ:

ՀՀ վճռաբեկ դատարանը որոշեց. «Հաստատագրված վճարների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վճարողները մինչև նույն օրենքով նախատեսված ոլորտներում գործունեություն իրականացնելը (սկսելը) իրենց գտնվելու (հաշվառման, բնակության) վայրի հարկային տեսչության մարմին են ներկայացնում Հայաստանի Հանրապետության հարկային տեսչության կողմից սահմանված ձևի տեղեկություններ (հայտարարություն-հաշվարկ, այսուհետ՝ հայտարարություն)՝ երկու օրինակից՝ հաստատագրված վճարի հաշվարկման համար անհրաժեշտ համապատասխան էլակետային տվյալների եւ ուղղիչ գործակիցների վերաբերյալ: Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ հարկային տեսչության մարմնի կողմից հաշվառվելուց և կնքվելուց հետո հայտարարության մեկ օրինակը վերադարձվում է վճարողին: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ հաստատագրված վճարի հայտարարության մեկ օրինակը հարկ վճարողին չվերադարձնելը չի կարող ազդել հարկ վճարողի իրավական կարգավիճակի վրա, բացառել նման հայտարարության իրավական հետևանքները և դրա հետևանքով բացառել հարկային պարտավորությունների հաշվարկումն ու վճարումը: Հայտարարությունը ընդունված և հաշվառված է համարվում այն հարկային մարմին ներկայացնելու պահից:

22. ՀՀ կրթության և գիտության նախարարության լեզվի պետական տեսչության դիմումը, քաղ. գործ թիվ 3-306/Ա («Էգա» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության տնօրեն Էդուարդ Գասպարյանին վարչական պատասխանատվության ենթարկելու պահանջով):

Խնդիրը. Արդյո՞ք օտարատառ բառային ապրանքանիշը կազմակերպության մուտքի ճակատային մասում տեղադրելը և այն փաստացի որպես ցուցանակ գործածելը հակասում է ՀՀ կառավարության 19.03.2002 թվականի «Արտադրողի (կատարողի, վաճառողի) կողմից տեղեկատվություն գետեղելու ցուցանակին ներկայացվող պահանջները հաստատելու մասին» թիվ 270 որոշման պահանջներին:

ՀՀ վճռաբեկ դատարանը որոշեց. Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ՀՀ կառավարության 19.03.2002 թվականի «Արտադրողի (կատարողի, վաճառողի) կողմից տեղեկատվություն գետեղելու ցուցանակին ներկայացվող պահանջները հաստատելու մասին» թիվ 270 որոշման պահանջները վերաբերում են ցուցանակում տեղադրվող տեղեկատվությանը, որի համար սահմանված կարգավորումները, այդ թվում նաև՝ սահմանափակումները, չեն կարող տարածվել ապրանքային նշանի օգտագործման համար օրենքով սահմանված կարգի վրա: Այդ նշանի օգտագործման առանձնահատկությունները սահմանված են «Ապրանքային և սպասարկման նշանների, ապրանքների ծագման տեղանունների մասին» ՀՀ օրենքով: ՀՀ կառավարության վերոհիշյալ որոշման 3-րդ կետի համաձայն՝ ցուցանակների վրա պետք է գետեղվեն հետևյալ տեղեկությունները. կազմակերպության ճակատային մասում փակցված ցուցանակի վրա՝ կազմակերպության (ֆիրմայի) անվանումը, կազմակերպական-իրավական ձևը, իսկ մուտքի դռան ցուցանակի վրա՝ աշխատանքային ռեժիմը:

Նշված նորմը սահմանում է միայն այն նվազագույն տեղեկատվությունը, որը պարտադիր պետք է պարունակի **ցուցանակը**: Հետևաբար, Որոշման 3-րդ կետում

սահմանված դրույթը չի կարող մեկնաբանվել որպես կազմակերպության ապրանքային նշանի տեղադրումը սահմանափակող նորմ:

**Միաժամանակ, ՀՀ վճռաբեկ դատարանը գտել է, որ ապրանքային նշանի՝ որպես գովազդ կամ վաճառքի առաջարկ օգտագործելու արգելք օրենքով նախատեսված չէ:*

23. «Ֆիրմա ՄՄ» ՍՊԸ-ի դիմումը, քաղ. գործ թիվ 3- 445/Ա (հողամասի նկատմամբ սեփականության իրավունքը ճանաչելու պահանջով):

Խնդիրը. Իրավաբանական նշանակություն ունեցող փաստերի հաստատման մասին դիմումի քննության ընթացքում, ո՞ր դեպքերը կարող են դատարանի կողմից գնահատվել **իրավունքի վերաբերյալ վեճ:**

ՀՀ վճռաբեկ դատարանը որոշեց. ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 103-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի համաձայն՝ դատարանը հայցը կամ դիմումը թողնում է առանց քննության, եթե իրավաբանական նշանակություն ունեցող փաստերի հաստատման մասին դիմումը քննելիս **վեճ է ծագել իրավունքի մասին:** Իրավաբանական նշանակություն ունեցող փաստերի հաստատման մասին հատուկ վարույթի կարգով քննվող գործերն այն գործերն են, որտեղ պետք է բացակայի նյութաիրավական վեճը: Հատուկ վարույթի հիմնական տարբերությունը հայցային վարույթից կայանում է հենց իրավունքի մասին վեճի բացակայության մեջ: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ յուրաքանչյուր դեպքում **իրավունքի վերաբերյալ վեճի առկայությունն ստուգելիս** դատարանը պարտավոր է պարզել, թե արդյո՞ք գործի փաստերից ելնելով առերևույթ առկա է փոխադարձ կապ քննարկվող փաստի և այլ անձի իրավունքների միջև, և արդյո՞ք նման փաստի հաստատումը կարող է որևէ կերպ ազդել այլ անձի իրավունքների ծավալի վրա: Նման կապի, ինչպես նաև այդ փաստի և այլ անձի իրավունքների ծավալի փոփոխության միջև պատճառահետևանքային կապի բացակայության դեպքում իրավունքի մասին վեճի վերաբերյալ հայտարարությունն ինքնին ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 103-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի իմաստով հայցն առանց քննության թողնելու հիմք չէ: Դատարանը, յուրաքանչյուր կոնկրետ դեպքում, վեճի առկայության կամ բացակայության հարցը պետք է պարզի ելնելով տվյալ գործի փաստերից, ինչպես նաև օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված պահանջներից:

24. «Աքիլես» ավտովարորդների իրավունքների պաշտպանության կենտրոն հասարակական կազմակերպություն v. ՀՀ ոստիկանություն, քաղ. գործ թիվ 3-355/ՎԴ (պաշտոնատար անձի գործողությունները վիճարկելու պահանջով):

Խնդիրը. Արդյո՞ք, վարորդական վկայական ստանալու համար հանձնվող տեսական քննությունների **հարցատոմսերը**, հանդիսանում են «տեղեկատվություն» «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի իմաստով:

ՀՀ վճռաբեկ դատարանը որոշեց. «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի մեկնաբանությանը, ըստ որի վարորդական վկայական ստանալու համար հանձնվող տեսական քննությունների հարցատոմսերը տեղեկատվություն պարունակող նյութական կրիչներ են, որոնք նույն օրենքի իմաստով չեն հանդիսանում «տեղեկատվություն»:

**ՀՀ վճռաբեկ դատարանը անդրադարձել է նաև, այն հարցին թե արդյո՞ք վարորդական վկայական ստանալու համար հանձնվող տեսական քննությունների հարցատոմսերում առկա տեղեկությունները կարող են համարվել ծառայողական գաղտնիք պարունակող տեղեկություններ:*

25. Անահիտ Ոսկանյանի դիմումը, քաղ. գործ թիվ 3-332/Ա (իրավաբանական նշանակություն ունեցող փաստը հաստատելու պահանջով):

Խնդիրը. Ինչպիսի՞ նախապայմաններ են անհրաժեշտ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով սահմանված իրավաբանական նշանակություն ունեցող փաստերի հաստատման վերաբերյալ հատուկ վարույթով գործերի քննության համար:

ՀՀ վճռաբեկ դատարանը որոշեց. Իրավաբանական նշանակություն ունեցող փաստերի հաստատման վերաբերյալ հատուկ վարույթի գործերն այն գործերն են որոնք ուղղված են անձի սուբյեկտիվ իրավունքների իրականացման խոչընդոտները վերացնելուն: Այդ իսկ պատճառով օրենսդիրը նշված գլխում սահմանել է, որ դիմումում պետք է նշվի թե ինչ նպատակի համար է դիմողին անհրաժեշտ տվյալ փաստի հաստատումը, ինչպես նաև պետք է բերվեն դիմողի կողմից պատշաճ փաստաթղթեր ստանալու կամ կորցրած փաստաթղթերը վերականգնելու անհնարինությունը հաստատող ապացույցներ (հոդված 191): Նշված նորմով օրենսդիրը դիմողների համար սահմանել է պատշաճ փաստաթղթեր ստանալու կամ կորցրած փաստաթղթերը վերականգնելու անհնարինությունը դատարանին ապացուցելու իրական և պարտադիր պահանջ: Տվյալ դեպքում անձի սեփականության իրավունքը ճանաչվել է վարչական ակտով, և այդ իրավունքները պետական գրանցման ենթարկելու անհնարինությունը սույն գործով ապացուցված չէ: Ինչ վերաբերում է այդ իրավունքների պետական գրանցման ենթարկելու օրենքով սահմանված ժամկետի խոչընդոտին, ապա այն բավարար հիմք չէ հատուկ վարույթի կարգով իրավաբանական նշանակություն ունեցող փաստերի հաստատման համար, քանի որ անձը դատարանին չի ապացուցել համապատասխան լիազոր պետական մարմնին դիմելու և դրա հետևանքով իրավունքի իրականացման իրական խոչընդոտի առկայությունը: Նման եզրահանգման համար Վճռաբեկ դատարանը հիմք է ընդունում նաև այն հանգամանքը, որ դիմողը զրկված չէ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով վիճարկելու համապատասխան պետական մարմնի գործողությունները:

26. Աիդա Գրիգորյան v. Հմայակ Միքայելյան, քաղ. գործ թիվ 3-311/Ա (բնակարանի նկատմամբ օգտագործման իրավունքը ճանաչելու պահանջով):

Խնդիրը. Արդյո՞ք ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 95-րդ հոդվածի առաջին մասով նախատեսված՝ հայցադիմումը ստանալու օրվանից հետո՝ երկշաբաթյա ժամկետում հայցադիմումի վերաբերյալ գրավոր պատասխան ներկայացնելու պատասխանողի պարտավորությունը (իրավունքը) կարող է այդ ժամանակահատվածում դատարանի կողմից դատական նիստ նշանակելու արգելք հանդիսանալ:

ՀՀ վճռաբեկ դատարանը որոշեց. Թեև ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 95-րդ հոդվածով հայցադիմումի վերաբերյալ պատասխան ներկայացնելը պատասխանողի դատավարական պարտականությունն է, սակայն միաժամանակ դա վերջինիս դատավարական իրավունքն է, քանի որ դատավարական այդ ինստիտուտը պատասխանողի դատավարական պաշտպանության եղանակներից մեկն է: Այդ իսկ պատճառով Վճռաբեկ դատարանը ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 95-րդ հոդվածի առաջին մասի առաջին պարբերությամբ սահմանված հայցադիմումին պատասխան ներկայացնելը դիտում է որպես դատավարական կարևոր իրավունք: Վերոգրյալից հետևում է, որ դատարանը պարտավոր է դատավարությունը կազմակերպել այնպես, որպեսզի ապահովվի պատասխանողի այս իրավունքի իրականացումը: Սույն գործով դատարանը 10.02.2005 թվականի արձանագրային որոշմամբ Պապիկ Միքայելյանին ներգրավել է քաղաքացիական գործի քննությանը որպես պատասխանող և նույն օրը՝ 10.02.2005 թվականին, վճիռ է կայացրել, կողմին

հնարավորություն չտալով հայցադիմումին ծանոթանալու և դրա դեմ երկշաբաթյա ժամկետում առարկություններ ներկայացնելու իր դատավարական իրավունքներից: Ունենալով հայցադիմումին ծանոթանալու և դրա վերաբերյալ գրավոր պատասխանը երկշաբաթյա ժամկետում դատարան ներկայացնելու իրավական հնարավորություն՝ անձը ողջամտորեն կարող էր դատարանից ակնկալել իր գործի քննության նշանակում առնվազն այդ երկշաբաթյա ժամկետի ավարտից հետո: Ավելին, նույն հողվածով սահմանված դրույթը անձին իրավունք է վերապահում ներկայացնել հիմնավորված միջնորդություն՝ մինչև երկու շաբաթ տևողությամբ լրացուցիչ ժամկետ խնդրելու վերաբերյալ: Մա ևս հիմնավորում է այն եզրակացությունը, որ դատարանը պարտավոր է դատական նիստ նշանակել ոչ շուտ, քան այդ երկշաբաթյա ժամկետի լրանալը:

27. «Ավանգարդ Մոթորս» ՍՊԸ v. Աշոտ Խլոյան, քաղ. գործ թիվ 3-223/ՎԴ (ապօրինի զբաղեցրած տարածքից վտարելու պահանջով):

Խնդիրը. Արդյո՞ք ՀՀ կառավարության 05.10.2001 թվականի թիվ 950 որոշմամբ հաստատված՝ «Երևան քաղաքի օտարման գոտիներում գտնվող հողամասերն ու անշարժ գույքը վերցնելու, փոխհատուցելու, գնային առաջարկը ձևավորելու և իրացնելու» կարգի համաձայն՝ իրացվող տարածքում հաշվառված անձին աջակցության գումարի վճարումը կարող է դիտվել որպես այդ անձին վտարելու նախապայման:

ՀՀ վճարելի դատարանը որոշեց. ՀՀ կառավարության 05.10.2001 թվականի թիվ 950 որոշմամբ հաստատված՝ «Երևան քաղաքի օտարման գոտիներում գտնվող հողամասերն ու անշարժ գույքը վերցնելու, փոխհատուցելու, գնային առաջարկը ձևավորելու և իրացնելու» կարգի 8-րդ կետի համաձայն՝ իրացվող տարածքում հաշվառված անձանց, նրանց՝ անձնագրային տարիքի չհասած երեխաներին տրամադրվում է աջակցություն՝ առանձին 2.0 մլն ՀՀ դրամի չափով՝ հիմք ընդունելով հաշվառման փաստը հաստատող փաստաթուղթը: ՀՀ կառավարության վերոհիշյալ որոշմամբ սահմանված չէ աջակցության գումարի վճարման պարտավորության ժամկետ, մասնավորապես՝ նման պարտավորությունը պատճառահետևանքային կապի մեջ չի գտնվում անձի վտարման հետ: Հետևաբար, աջակցության գումարի վճարումը չի կարելի դիտել որպես տվյալ տարածքում հաշվառված անձին վտարելու նախապայման: Այն ըստ էության կառավարության կողմից սահմանված պարտավորություն է տարածքը իրացնող սուբյեկտի համար:

28. Արմեն Շահբազյան, Քրիստինա Տոնոյան v. ՀՀ ԿԱ ԱԳԿ ՊԿ անշարժ Շենգավիթ ՏՄ, քաղ. գործ թիվ 3-65/ՎԴ (պետական մարմնի գործողությունը վիճարկելու պահանջով):

Խնդիրը. Արդյո՞ք «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածով նախատեսված 30-օրյա ժամկետը բաց թողնելը հիմք է Կադաստրի կողմից սեփականության իրավունքի գրանցումը մերժելու համար:

ՀՀ վճարելի դատարանը որոշեց. ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի 135-րդ, 301-րդ, 563-րդ հոդվածներով և 449-րդ հոդվածի 3-րդ մասի նորմերով տրված իրավունքի և «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածով գույքի նկատմամբ պետական գրանցման իրավունքի միջև առկա է տրամաբանական հակասություն, որը դատարանի և պետական մարմնի կողմից որևէ պարագայում չպետք է մեկնաբանվի ի վնաս մասնավոր անձի: «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածով նախատեսված «գործարքի (պայմանագրի) կնքման օր (պահ)» արտահայտության

տառացի նշանակության հարցում «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքը ստորադաս է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի նկատմամբ և պետք է համապատասխանի վերջինիս, իսկ նշված օրենքի 23-րդ հոդվածում նշված՝ «գործարքների կնքման օրվանից սկսած 30-օրյա ժամկետում» արտահայտությունը կարող է մեկնաբանվել միայն դրանում պարունակվող բառերի տառացի նշանակությամբ՝ հիմք ընդունելով ավելի բարձր իրավաբանական ուժ ունեցող քաղաքացիական օրենսգրքի 449-րդ հոդվածի 3-րդ մասով ամրագրված դրույթը: Հետևաբար, գույքի հետ կատարվող գործարքներից ծագող իրավունքները պետական գրանցման ներկայացնելու 30-օրյա ժամկետը սույն գործի փաստերից էլնելով Վճռաբեկ դատարանը համարում է իրավական հետևանքներ չառաջացնող:

29. «Արարատ բանկ» ՓԲԸ v. Միսակ, Նաիրա և Մարի Ադուլյաններ, երրորդ անձ ՀՀ ԿԱ ԱԳԿ ՊԿ Մարաշ ՏՍ, քաղ. գործ թիվ 3-52/ՎԴ (Երևան քաղաքի Այգեստան 11-րդ փողոցի թիվ 89 շենքի թիվ 28 բնակարանի նկատմամբ Միսակ Ադուլյանի համատեղ սեփականության իրավունքը ճանաչելու, նրա բաժնի չափը որոշելու, դատավճռով սահմանված գումարի բռնագանձումն այդ բաժնի վրա տարածելու, ընդհանուր գույքից այն առանձնացնելու և հրապարակային սակարկություններով վաճառելու պահանջներով):

Խնդիրը. Արդյո՞ք բնակչինարարական կոոպերատիվի այն անդամը, որը լրիվ մուծել է իր փայր բնակարանի համար, օրենքի ուժով ձեռք է բերում այդ գույքի սեփականության իրավունք:

ՀՀ վճռաբեկ դատարանը որոշեց. «Հայաստանի Հանրապետությունում սեփականության մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ բնակարանային, բնակչինարարական և այլ կոոպերատիվների այն անդամը, որը լրիվ մուծել է իր փայր բնակարանի կամ իր օգտագործմանը տրված այլ շինության համար, ձեռք է բերում այդ գույքի սեփականության իրավունք: Մյասնիկյանի շրջխորհրդի գործկումի 1989 թվականի մայիսի 14-ի թիվ 13/90 որոշման հիման վրա Միսակ և Մարի Ադուլյանների վեճի առարկա հանդիսացող բնակարանի փայտերեր ճանաչվելը և նշված բնակարանի համար հաշվարկված փայր վճարված լինելը, ինչպես նաև պարտքի բացակայությունը հավաստող սույն գործով հաստատված փաստերը հիմք են տալիս հանգելու հետևության, որ Միսակ Ադուլյանը «Հայաստանի Հանրապետությունում սեփականության մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի 2-րդ մասի ուժով նշված բնակարանի նկատմամբ ձեռք է բերել համատեղ սեփականության իրավունք:

**Միաժամանակ, ՀՀ վճռաբեկ դատարանն անդրադարձել է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 14-րդ հոդվածի առաջին մասի մեկնաբանությանը, արձանագրելով, որ նախատեսված քաղաքացիական իրավունքների ճանաչումը որպես իրավունքի պաշտպանության եղանակ, կարող է գործի դրվել միայն համապատասխան իրավունքի սուբյեկտի կողմից:*

30. Վարդուհի Խաչատրյան, Սամվել Սարգսյան v. ՀՀ ԿԱ պետական գույքի կառավարման վարչություն, քաղ. գործ թիվ 3-375/Ա («պարտավորագիր» վերնագրված փաստաթղթերն անվավեր ճանաչելու պահանջով):

Խնդիրը. Արդյո՞ք պարտավորագիրը հանդիսանում է նոտարական վավերացում պահանջող գործարք:

ՀՀ վճռաբեկ դատարանը որոշեց. ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 297-րդ հոդվածի առաջին մասի համաձայն՝ բացառությամբ նոտարական վավերացում պահանջող գործարքների, հասարակ գրավոր ձևով պետք է կնքվեն իրավաբանական

անձանց՝ միմյանց միջև և քաղաքացիների հետ գործարքները, իսկ նույն օրենսգրքի 299-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ գործարքի նոտարական վավերացումը պարտադիր է օրենսգրքում նշված դեպքերում, ինչպես նաև կողմերից որևէ մեկի պահանջով: ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 299-րդ հոդվածի 3-րդ մասում նշված երկու հատկանիշների բացակայության պայմաններում պարտավորագիրը համարվում է հասարակ գրավոր ձևով կնքվող միակողմանի գործարք: Սույն գործով հաստատված փաստերից ելնելով՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ պարտավորագրերի հասարակ գրավոր ձևը պահպանված լինելու հանգամանքը բավարար է պարտավորագրերը ստորագրած անձանց նկատմամբ դրանցում նշված պարտավորությունների ծագման համար: Հետևաբար, անհիմն է Դատարանի եզրահանգումն այն մասին, որ Վարդուհի Խաչատրյանի և Սամվել Մարգարյանի կողմից ստորագրված պարտավորագրերը հանդիսանում են տարածքի առուվաճառքի պայմանագրի փոփոխություն և ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 468-րդ հոդվածի առաջին մասի ուժով պետք է նոտարական վավերացում ստանային:

31. «Էֆ-Լայն Թրեյդինգ» ՍՊԸ v. «Եվիլա» ՍՊԸ, քաղ. գործ թիվ 3-378/ՏԴ (գումար բռնագանձելու պահանջով):

Խնդիրը. Արդյո՞ք ապացույցների ներկայացման և իրավական պաշտպանության կազմակերպման համար ողջամիտ ժամկետի տրամադրման անհրաժեշտությունը դատարանի համար պարտադիր հիմք է գործի քննությունը հետաձգելու համար:

ՀՀ վճռաբեկ դատարանը որոշեց. ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 119-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ դատարանն իրավունք ունի հետաձգել գործի քննությունը, եթե դա թելադրված է լրացուցիչ ապացույցներ ներկայացնելու անհրաժեշտությամբ: Այս հիմքով դատարանի կողմից գործի քննությունը հետաձգելը դատարանի իրավունքն է և ոչ պարտականությունը, և դատարանն իր այդ իրավունքն իրականացնում է հայեցողական իրավագործությամբ՝ ելնելով կոնկրետ գործի հանգամանքներից: Միաժամանակ, դատարանի կողմից բողոք բերած անձին ապացույցների ներկայացման և իրավական պաշտպանության կազմակերպման համար ողջամիտ ժամկետի տրամադրման անհրաժեշտությունը Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն քաղաքացիական գործով գործի քննությունը հետաձգելու անհրաժեշտությունն առկա էր, և որ արդար դատաքննության իրավունքի ամբողջ ծավալով իրականացնելու օբյեկտիվ հնարավորությունների բացակայությունը մեկնաբանվում է որպես անձին դատաքննությանը մասնակից չդարձնել:

32. Նիկոլայ Իսկանդարյան v. ՀՀ ԿԱ ԱԳԿ ՊԿ, Վեհանուշ Գրիգորյան, քաղ. գործ թիվ 3-169/ՎԴ (պետական մարմնի պաշտոնատար անձի գործողություններն անօրինական ճանաչելու, օրենքով սահմանված կարգով ստեղծված բնակելի տան նկատմամբ սեփականության իրավունքը ճանաչելու, տնով զբաղեցված ու սպասարկման տարածք հանդիսացող հողամասը տիրագուրկ ճանաչելու, ձեռքբերման վաղեմության ուժով սեփականության իրավունքը ճանաչելու և Վեհանուշ Գրիգորյանի անվամբ տրված սեփականության իրավունքի գրանցման վկայականն անվավեր ճանաչելու պահանջներով):

Խնդիրը. Արդյո՞ք առաջին աստիճանի դատարանում գործի վարույթը կարճված լինելու պայմաններում Վերաքննիչ դատարանը իրավասու է վերաքննիչ բողոքի հիման վրա վերաքննելու նույն գործը և կայացնելու այլ դատական ակտ:

ՀՀ վճռաբեկ դատարանը որոշեց. ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 109-րդ հոդվածի 6-րդ կետի համաձայն՝ դատարանը կարճում է գործի վարույթը, եթե հայցվորը հրաժարվել է հայցից: Հիմք ընդունելով քաղաքացիական դատավարության հիմնարար սկզբունքները, Վճռաբեկ դատարանն արձանագրում է իրավական այն դիրքորոշումը, որ գործի վարույթի կարճումն իրենից ներկայացնում է քաղաքացիական գործի վարույթի ավարտ՝ առանց դատարանի կողմից գործն ըստ էության քննելու և վեճը լուծող վերջնական դատական ակտ կայացնելու: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Վերաքննիչ դատարանը գործն ըստ էության կրկնակի քննող դատարան է, իսկ սույն քաղաքացիական գործն առաջին աստիճանի դատարանում ըստ էության չի քննվել, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն քաղաքացիական գործը չէր կարող կրկնակի քննվել Վերաքննիչ դատարանում, քանի որ գործում առկա է քաղաքացիական գործի վարույթի կարճման հիմքը, այն է՝ դիմումը հայցից հրաժարվելու մասին:

30.03.2007թ.

33. Զոյա Ծատրյան v. «ԱրմենՏել» ՓԲԸ, քաղ. գործ թիվ 3-496/ՎԴ (աշխատանքում վերականգնելու և հարկադիր պարապուրդի գումարի բռնագանձման պահանջներով):

Խնդիրը. Արդյո՞ք դատարանը պետք է վերականգնի աշխատողին իր նախկին պաշտոնում այն դեպքում, երբ Ընկերության գործող վարչակազմակերպչական կառուցվածքում գոյություն չունի այնպիսի հաստիքային միավոր, որտեղ նախկինում աշխատել է հայցվորը:

ՀՀ վճռաբեկ դատարանը որոշեց. Ընկերությունը դատարանին ներկայացրել է բավարար ապացույցներ, որոնք հաստատում են հայցվորի նախկին հաստիքի ստեղծման անհնարինությունը: Հետևաբար, տվյալ դեպքում կիրառելի է ՀՀ աշխատանքային օրենսգրքի 265-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված աշխատողին աշխատանքում չվերականգնելու դեպքը: Դատարանի կողմից Ընկերության վրա չի կարող դրվել այնպիսի պարտավորություն, որի փաստացի կատարումն օբյեկտիվորեն անհնար է: Նման դեպքերում դատարանի կողմից վերոգրյալ հոդվածի չկիրառումը կհանգեցնի գործատուի համար լրացուցիչ պարտավորության՝ ստեղծելու կառուցվածքային նոր միավոր, նոր հաստիք: Նման պարտավորության սահմանումը կհանգեցնի գործատուի՝ ՀՀ Սահմանադրության իրավաբանական անձանց նկատմամբ կիրառելի երաշխիքային նորմերի և օրենքով նախատեսված իրավունքների սահմանափակման: Այդ իսկ նպատակով օրենսդիրը ՀՀ աշխատանքային օրենսգրքի 265-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանել է աշխատանքում չվերականգնելու գործատուի իրավական հնարավորությունը՝ վերապահելով դատարանին այդ վարքագծի իրավաչափության գնահատման իրավասություն՝ որոշելու տնտեսական, տեխնոլոգիական, կազմակերպչական կամ այլ պատճառներով կամ գործատուի և աշխատողի հետագա աշխատանքային հարաբերությունների վերականգնման անհնարինությունը՝ կոնկրետ գործի փաստերից ելնելով:

**Միաժամանակ, Վճռաբեկ դատարանն անդրադարձել է աշխատողի ժամանակավոր անաշխատունակության, աշխատողին վճարվող տուժանքի հետ կապված իրավական հարցերին:*

34. Թագուշ Պետրոսյան v. Ժաննա Ղազարյան, քաղ. գործ թիվ 3-459/ՏԴ («Բիզնես կենտրոն» ԲԲԸ-ի բաժնետոմսերի 16.08.2004 թվականի առուվաճառքի պայմանագիրն

անվավեր ճանաչելու և անվավերության հետևանքներ կիրառելու պահանջով): Երրորդ անձ Յուլիա Միլիտոյան v. Թագուշ Պետրոսյան և Ժաննա Ղազարյան (ընկերության բաժնետոմսերի 16.08.2004 թվականի առուվաճառքի պայմանագիրն անվավեր ճանաչելու պահանջով):

Խնդիրը. Արդյո՞ք ընդհանուր սեփականության տնօրինման գործարքն անվավեր ճանաչելու համար բավարար է համատեղ սեփականության մասնակիցների՝ ամուսիններ հանդիսանալու մասին գործարքի մյուս կողմի, մասնավորապես՝ գնորդի տեղեկացված լինելու փաստը:

ՀՀ վճռաբեկ դատարանը որոշեց. Համատեղ սեփականության մասնակիցներից մեկի կողմից կնքված՝ ընդհանուր սեփականության տնօրինման գործարքն անվավեր ճանաչելու համար բավարար չէ համատեղ սեփականության մասնակիցների՝ ամուսիններ հանդիսանալու մասին գործարքի մյուս կողմի, մասնավորապես, գնորդի տեղեկացված լինելու փաստը: Նման պահանջը դատարանի կողմից կարող է բավարարվել միայն, եթե միաժամանակ առկա են երկու պայմաններ՝ 1) համատեղ սեփականության մասնակցի մոտ վիճելի գործարքը կնքելու համար անհրաժեշտ լիազորությունների բացակայություն, 2) գործարքի մյուս կողմի՝ այդ մասին իմանալը կամ դրա մասին ողջամտորեն ենթադրելու ակնհայտ հնարավորության առկայությունը: Վճռաբեկ դատարանը, հաշվի առնելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 198-րդ հոդվածի 3-րդ մասը, գտնում է, որ միայն համատեղ սեփականության մասնակիցների՝ ամուսիններ հանդիսանալու փաստի հաստատումը բավարար հիմք չէ ենթադրելու, որ ամուսիններից մեկը համատեղ գույքը տնօրինելու լիազորություն չի ունեցել, քանի որ համասեփականատերերից յուրաքանչյուրն իրավունք ունի տնօրինելու համատեղ գույքը, եթե համասեփականատերերից ոչ մեկը չի առարկում նրա նման գործողությունների դեմ, ընդ որում, ընդհանուր սեփականության մասնակիցներից մեկի կողմից կնքված ընդհանուր սեփականության տնօրինման գործարքը մնացած մասնակիցների պահանջով կարող է անվավեր ճանաչվել միայն այն դեպքում, եթե ապացուցվի, որ գործարքի մյուս կողմն իմացել է կամ ակնհայտորեն պետք է իմանար այդ մասին:

35. ՀՀ ԿԱ ՀՊԾ Հրագրանի ՀՏ v. «Կոճոռ-Տելեկոմ» ՓԲԸ, քաղ. գործ թիվ 3-706/ՏԴ (գումար բռնագանձելու պահանջով):

Խնդիրը. Արդյո՞ք «Հարկերի մասին» ՀՀ օրենքը կարգավորում է նաև պետական տուրքի հետ կապված իրավահարաբերությունները:

ՀՀ վճռաբեկ դատարանը որոշեց. «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետի համաձայն՝ Հայաստանի Հանրապետությունում հարկային հարաբերությունները կարգավորվում են հարկային օրենսդրությամբ, որը բաղկացած է «Հարկերի մասին» ՀՀ օրենքից և առաձին հարկատեսակների մասին օրենքներից: Նույն օրենքի 3-րդ հոդվածի համաձայն՝ **հարկը** պետական և հասարակական կարիքների բավարարման նպատակով համապարտադիր և անհատույց վճար է, որը գանձվում է ֆիզիկական և իրավաբանական անձանցից, հիմնարկներից, տեղական ինքնակառավարման մարմիններից՝ հարկային օրենսդրությամբ նախատեսված կարգով, չափերով և սահմանված ժամկետներում: Պետական տուրքի հասկացությունը, տուրքերի տեսակները և դրույքաչափերը, տուրք վճարողներին, տուրքը գանձելու, վերադարձնելու, արտոնություններ տրամադրելու կարգն ու պայմանները և պետական տուրքի հետ կապված մյուս հարաբերությունները կարգավորվում են «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքով: «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի համաձայն՝ Հայաստանի Հանրապետությունում

պետական տուրքը պետական մարմինների լիազորությունների իրականացմամբ պայմանավորված՝ նույն օրենքով սահմանված ծառայությունների կամ գործողությունների համար ֆիզիկական և իրավաբանական անձանցից Հայաստանի Հանրապետության պետական և (կամ) համայնքների բյուջեներ մուծվող օրենքով սահմանված պարտադիր վճար է: Վերոգրյալ իրավանորմերի համաձայն կարելի է հանգել հետևության, որ «Հարկերի մասին» ՀՀ օրենքը տարածվում է միայն հարկային իրավահարաբերությունների և հարկերի նկատմամբ, իսկ պետական տուրքի հետ կապված հարաբերությունները կարգավորվում են «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքով:

36. Գարիկ Կուրդիյան v. Թագուհի Կուրդիյան, Հովհաննես և Տիգրան Այվազյաններ, քաղ. գործ թիվ 3-506/ՎԴ (Ժառանգությունն ընդունած համարելու և ընդհանուր սեփականության իրավունքում բաժիններն որոշելու պահանջներով):

Խնդիրը. Արդյո՞ք բնակարանի սեփականաշնորհման (1993 թվական) հետևանքով սեփականության իրավունքը ծագում է միայն տվյալ բնակարանի վարձակալի համար:

ՀՀ վճռաբեկ դատարանը որոշեց. Հայկական ԽՍՀ Մինիստրների խորհրդի և Արհեստակցական միությունների հայկական հանրապետական խորհրդի 13.06.1989 թվականի «Պետական ու հանրային բնակարանային ֆոնդի տներում բնակարաններն որպես անձնական սեփականություն քաղաքացիներին վաճառելու մասին» թիվ 272 որոշմամբ հաստատված կանոնադրության 20-րդ կետի համաձայն՝ պետական և հանրային բնակարանային ֆոնդի տներում բնակարաններն որպես անձնական սեփականություն վաճառվում են տվյալ բնակարանը զբաղեցնող վարձակալին կամ Հայկական ԽՍՀ բնակարանային օրենսգրքի 54-րդ հոդվածում նշված նրանց ընտանիքի անդամներին՝ ընտանիքի բոլոր չափահաս անդամների գրավոր համաձայնության առկայության դեպքում: Նրանց համաձայնությամբ բնակարանը կարող է վաճառվել որպես նրանց ընդհանուր սեփականություն: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ իրավական ակտի հիշատակված դրույթը պետք է մեկնաբանել սեփականաշնորհման ողջ հայեցակարգի լույսի ներքո: Տվյալ դեպքում, պետական և հանրային բնակարանային ֆոնդի տների սեփականաշնորհման համար ընտրվել էր վաճառքի ձևը, որի հիմնական նպատակը պետական և հանրային բնակարանային ֆոնդից յուրաքանչյուր քաղաքացու որոշակի սեփականության բաժնի հատկացումն է: Այսինքն չէր կարող ողջ ընտանիքին բնակվելու համար հատկացված բնակարանը վաճառվել ընտանիքի մեկ անդամին՝ մյուսներին զրկելով բնակարանի նկատմամբ սեփականության իրավունքից: Հետևաբար, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Երևանի Մայաթ-Նովա թաղամասի 1/2 շենքի թիվ 20 երկու սենյականոց բնակարանը Թագուհի Կուրդիյանին վաճառելիս տվյալ բնակարանի նկատմամբ ծագել է նրա և նրա ընտանիքի բոլոր 5 անդամների՝ Մանյա, Գարիկ և Ալեքսանդր Կուրդիյանների, Հովհաննես և Տիգրան Այվազյանների սեփականության իրավունքը:

37. ՀՀ ԿԱ ՀՊԾ Արմավիրի ՀՏ v. «Նարոզ» ԱԿ, քաղ. գործ թիվ 3-460/ՏԴ (գումար բռնագանձելու պահանջով):

Խնդիրը. Կասեցման ժամանակահատվածի ավարտից հետո արտոնագրերը, թույլտվությունները կամ լիցենզիաներն ուժը կորցրած ճանաչվելու դեպքերում հերթական տարեկան պետական տուրքերի գումարները ենթակա են արդյո՞ք վճարման:

ՀՀ վճռաբեկ դատարանը որոշեց. «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 6.1-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ արտոնագրի, թույլտվության կամ լիցենզիայի

գործողությունը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով կասեցվելու դեպքում (բացառությամբ կասեցված լինելու ժամանակահատվածում դիմումի համաձայն ՀՀ օրենսդրությամբ արտոնագրի, թույլտվության կամ լիցենզիայի գործողության ուժը կորցրած ճանաչման դեպքերի) հերթական տարեկան պետական տուրքերի գումարները ենթակա են վճարման անկախ արտոնագրի, թույլտվության կամ լիցենզիայի գործողության կասեցման հիմքերից ու ժամկետներից: Նշված հոդվածի վերլուծության հիման վրա Վճռաբեկ դատարանը գտնում է, որ կասեցման ժամանակահատվածի ավարտից հետո արտոնագրերը, թույլտվությունները կամ լիցենզիաներն ուժը կորցրած ճանաչվելու դեպքերում հերթական տարեկան պետական տուրքերի գումարները ենթակա են վճարման:

38. Հերիքնազ Կարապետյան v. «ՀՀ Գեղարքունիքի մարզի Ծովինար գյուղի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի տնօրեն, քաղ. գործ թիվ 3-608/ՎԴ (ազատման հրամանն անվավեր ճանաչելու և նախկին աշխատանքում վերականգնելու պահանջով):

Խնդիրը. ՀՀ աշխատանքային օրենսգրքով սահմանված՝ աշխատանքային վեճերով դատարան դիմելու մեկամսյա ժամկետը համարվում է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի հայցային վաղեմության ժամկետ, և արդյո՞ք աշխատանքային վեճերով դատարան դիմելու մեկամսյա ժամկետը բաց թողնելու դեպքում անձը կորցնում է իրավական ակտը դատարանում վիճարկելու իրավական հնարավորությունը:

ՀՀ վճռաբեկ դատարանը որոշեց. Սույն գործի փաստերի համաձայն՝ Հերիքնազ Կարապետյանն աշխատանքից ազատվել է տնօրենի 01.07.2005 թվականի հրամանով: Նշված հրամանը Հերիքնազ Կարապետյանը ստացել է 07.07.2005 թվականին, մինչդեռ իր իրավունքների պաշտպանության հայցով դատարան դիմել է 27.11.2005 թվականին, այսինքն՝ 01.07.2005 թվականի հրամանը ստանալուց չորս ամիս հետո՝ բաց թողնելով ՀՀ աշխատանքային օրենսգրքով սահմանված դատարան դիմելու վաղեմության ժամկետը: Սույն վեճի նկատմամբ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 342-րդ հոդվածը կիրառելի չէ, քանի որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1-ին հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ ընտանեկան, աշխատանքային, բնական պաշարների օգտագործման ու շրջակա միջավայրի պահպանության հարաբերությունները կարգավորվում են քաղաքացիական օրենսդրությամբ և այլ իրավական ակտերով, եթե այլ բան նախատեսված չէ ընտանեկան, աշխատանքային, հողային, բնապահպան և այլ հատուկ օրենսդրությամբ: Տվյալ դեպքում աշխատանքային օրենսդրությամբ աշխատանքի պայմանների փոփոխման, գործատուի նախաձեռնությամբ աշխատանքային պայմանագիրը դադարեցնելու կամ աշխատանքային պայմանագիրը լուծելու հետ կապված վեճերով աշխատողին տրված է համապատասխան հրամանը (փաստաթուղթը) ստանալու օրվանից հետո մեկամսյա ժամկետում դատարան դիմելու իրավունք: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ **ՀՀ աշխատանքային օրենսգրքի 265-րդ հոդվածով սահմանված՝ աշխատանքային վեճերով դատարան դիմելու մեկամսյա ժամկետը ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 332-րդ հոդվածի իմաստով հայցային վաղեմության ժամկետ չի կարող համարվել**, քանի որ այն ըստ էության սահմանում է դատարան դիմելու իրավունքի իրականացման ժամկետ: Իսկ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 332-րդ հոդվածով սահմանված հայցային վաղեմության ժամկետն ընդամենն այնպիսի ժամկետ է, որի ընթացքում հայցվորը կարող է ակնկալել իր իրավունքների դատական պաշտպանություն: Այդ ժամկետը չի սահմանափակում դատարան դիմելու հայցվորի իրավունքը: ՀՀ քաղաքացիական օրենսգրքով սահմանված հայցային վաղեմությունը կարող է կիրառվել միայն

պատասխանողի համապատասխան միջնորդության հիման վրա, մինչդեռ աշխատանքային վեճերով դատարան դիմելու՝ **աշխատանքային օրենսգրքով սահմանված մեկամսյա ժամկետը գործում է ուղղակիորեն**, անկախ պատասխանողի կողմից միջնորդություն ներկայացված լինելու հանգամանքից **և այդ ժամկետի բացթողումը հայցադիմումի ընդունումը մերժելու կամ գործի վարույթը կարճելու անվերապահ հիմք է հանդիսանում**: Փաստորեն, Հ.Կարապետյանի կողմից վիճելի հրամանն ի սկզբանե վիճարկվել է ՀՀ աշխատանքային օրենսգրքի 265-րդ հոդվածով դատարան դիմելու համար օրենքով սահմանված մեկամսյա ժամկետի ավարտից հետո: Այսինքն՝ մինչև ժամկետի բացթողնման պատճառ հանդիսացող հանգամանքների առաջանալը, հայցվորն արդեն բաց էր թողել դատարան դիմելու օրենքով սահմանված մեկամսյա ժամկետը, հետևաբար **կորցրել է տվյալ հրամանը դատարանում վիճարկելու իրավական հնարավորությունը**:

39. ՀՀ ԿԱ ՀՊԾ Արտաշատի ՀՏ v. «Անի-6» ԱԿ, քաղ. գործ թիվ 3-498/ՏԴ (անվճարունակ ճանաչելու պահանջով):

Խնդիրը. Առանց դատական նիստ հրավիրելու դատարանի կողմից պարտապանին սնանկ ճանաչելու մասին վճիռ կայացնելու համար պարտադիր է արդյո՞ք պարտապանի կողմից հայցադիմումը վարույթ ընդունելու մասին դատարանի որոշումը ստանալու փաստը:

ՀՀ վճռաբեկ դատարանը որոշեց. Սույն գործով կիրառելի 2003 թվականի դեկտեմբերի 17-ին ընդունված «Անվճարունակության (սնանկության) մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ եթե դատարանի հայցադիմումը վարույթ ընդունելու մասին որոշումը ստանալուն հաջորդող 7 օրվա ընթացքում պարտապանը գրավոր չի առարկում իր սնանկությունը, ապա 8-րդ օրը դատավորն առանց դատական նիստ հրավիրելու վճիռ է կայացնում պարտապանին սնանկ ճանաչելու մասին: Տվյալ նորմի կիրառելիության համար պարտադիր է պարտապանի կողմից հայցադիմումը վարույթ ընդունելու մասին դատարանի որոշումը ստանալու փաստը: Սույն քաղաքացիական գործի նյութերից երևում է, որ պարտապանը ոչ միայն չի ստացել նշված որոշումը, այլև դատարանի բոլոր ծանուցագրերը, հետևաբար սույն վեճի նկատմամբ վերոգրյալ հոդվածը կիրառելի չէ:

40. Վերգինե Բեզլարյան և Երջանիկ Բադալյան v. Գուրգեն Ասատրյան, քաղ. գործ թիվ 3-733/ՎԴ (անշարժ գույքի առուվաճառքի պայմանագիրն անվավեր ճանաչելու, դրա հիման վրա տրված սեփականության իրավունքի գրանցման վկայականն անվավեր ճանաչելու և բնակարանից վտարելու պահանջներով):

Խնդիրը. Արդյո՞ք պարտավորության կատարման ընդունումից խուսափելը կարող է արտահայտվել միայն պայմանագրով սահմանված ժամկետի ընթացքում, և արդյո՞ք պարտավորության կատարման ժամկետից հետո պարտավորության կատարումը չընդունելը կարող է գնահատվել որպես պարտավորության կատարման ընդունումից խուսափելու դեպք:

ՀՀ վճռաբեկ դատարանը որոշեց. ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 421-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ եթե պարտապանի կետանցի հետևանքով կատարումը պարտատիրոջ համար կորցրել է իր հետաքրքրությունը, ապա նա կարող է հրաժարվել կատարումն ընդունելուց և պահանջել հատուցելու վնասները: Սույն քաղաքացիական գործով հաստատված փաստերից ակնհայտ է, որ պատասխանողը թույլ է տվել կետանց:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ հիմնավոր է բողոք բերած անձի փաստարկն այն մասին, որ դատարանը սխալ է գնահատել գործում եղած ապացույցները:

Մասնավորապես, պարտավորության կատարման ընդունումից խուսափելը կարող է արտահայտվել միայն պայմանագրով սահմանված ժամկետի ընթացքում: Պայմանագրով սահմանված ժամկետում պարտավորության կատարման կետանցը, որն առկա է տվյալ դեպքում, արդեն իսկ հնարավորություն է տալիս պարտատիրոջը հրաժարվելու պարտավորության կատարումն ընդունելուց: ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 366-րդ հոդվածի 1-ին կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ պարտապանն իրավունք ունի իրենից գանձվելիք դրամը կամ արժեթղթերը մուծել նոտարի դեպոզիտ, իսկ օրենքով սահմանված դեպքերում՝ դատարանի դեպոզիտ, եթե նա չի կարողանում կատարել պարտավորությունը, քանի որ պարտատերը խուսափել է կատարումն ընդունելուց կամ թույլ է տվել կետանց: Պայմանագրով սահմանված ժամկետում պարտավորության կատարման կետանցը, որն առկա է տվյալ դեպքում, արդեն իսկ հնարավորություն է տալիս պարտատիրոջը հրաժարվելու պարտավորության կատարումն ընդունելուց: Ակնհայտ է, որ **հայցվորների կողմից թույլ չի տրվել կետանց և նրանց գործողությունները չի կարելի գնահատել որպես պարտավորության կատարումն ընդունելուց խուսափել, քանի որ նրանք ոչ թե խուսափել, այլ հրաժարվել են կատարումն ընդունելուց**, քանի որ այն կորցրել է իրենց համար իր նշանակությունը պատասխանողի կողմից թույլ տրված կետանցի հետևանքով:

41. Արա Միրզախանյան v. Դիանա Խաչատրյան, քաղ. գործ թիվ 3-432/ՏԴ (անչափահաս երեխայի խնամքն ու դաստիարակությունն իրեն հանձնելու պահանջով):

Խնդիրը. Արդյո՞ք դատարանը կարող է հայցը մերժել՝ նշելով, որ երեխայի բնակվելը մոր հետ բխում է երեխայի շահերից, քանի որ հայցվորը չի ներկայացրել որևէ ապացույց այն մասին, որ երեխան կապվածություն չունի մոր հետ, մոր բարոյական և անձնական այլ հատկանիշները վնաս են պատճառում երեխայի ֆիզիկական և հոգեկան առողջությանը, նրա բարոյական զարգացմանը:

ՀՀ վճռաբեկ դատարանը որոշեց. ՀՀ ընտանեկան օրենսգրքի 53-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ ծնողների միմյանցից առանձին ապրելու դեպքում երեխաների բնակության վայրը ծնողների համաձայնության բացակայության դեպքում որոշվում է դատարանի կողմից: Ընդ որում, դատարանը հաշվի է առնում երեխայի կապվածությունը ծնողներից յուրաքանչյուրի, քույրերի ու եղբայրների հետ, երեխայի տարիքը, ծնողներից յուրաքանչյուրի և երեխայի միջև գոյություն ունեցող հարաբերությունները, ծնողների բարոյական և այլ անձնական հատկանիշներ, երեխայի դաստիարակության ու զարգացման համար պայմաններ ստեղծելու հնարավորությունը: Տվյալ իրավանորմի իմպերատիվ պահանջն առաջացնում է ծնողներից յուրաքանչյուրի հետ երեխայի կապվածությունը ստուգելու դատարանի պարտականություն, այնինչ տվյալ դեպքում դատարանն անդրադարձել է այս հարցին միայն հայցվորի մասով: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ծնողների՝ միմյանցից առանձին ապրելու դեպքում երեխաների բնակության վայրը ծնողների համաձայնության բացակայության դեպքում որոշելիս դատարանը պետք է համեմատական գնահատական տա և պատճառաբանի, թե, որ ծնողի հետ բնակվելն է բխում երեխայի շահերից և նպաստում երեխայի դաստիարակությանն ու զարգացմանը:

42. Լիդիա Ժուրավյովա v. Աստղիկ և Մարիամ Գյուլամիրյաններ, քաղ. գործ թիվ 3-739/ՎԴ (փոխհատուցմամբ սեփականության իրավունքը դադարեցնելու պահանջով):

Խնդիրը. Արդյո՞ք դատարանը բաժնային սեփականության ներքո գտնվող գույքի բաժինն առանձնացնելու ակնհայտ աննպատակահարմարության փաստը ապացուցված չլինելու պայմաններում իրավունք ունի վճիռ կայացնել գույքը հրապարակային սակարկություններով վաճառելու մասին:

ՀՀ վճռաբեկ դատարանը որոշեց. ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 197-րդ հոդվածի 4-րդ և 5-րդ կետերի համաձայն՝ բաժնային սեփականության մասնակցի բաժինը բնեղենով առանձնացնելու փոխարեն մյուս սեփականատերերը կարող են այդ մասնակցի համաձայնությամբ նրան փոխհատուցում վճարել: Այն դեպքերում, երբ սեփականատիրոջ բաժինն աննշան է, չի կարող իրապես առանձնացվել և ընդհանուր գույքի օգտագործման մեջ այդ սեփականատերն էական շահ չունի, դատարանը կարող է նաև այդ սեփականատիրոջ համաձայնության բացակայության դեպքում բաժնային սեփականության մյուս մասնակիցներին թույլատրել վճարելու փոխհատուցում: Նույն հոդվածին համապատասխան՝ փոխհատուցումն ստանալու պահից սեփականատերը կորցնում է ընդհանուր գույքում բաժնի նկատմամբ իրավունքը: Օրենսդիրը ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 197-րդ հոդվածի 4-րդ կետի դրույթով բաժնային սեփականության մասնակցին իրավունք է ընձեռել մյուս սեփականատերերի համաձայնությամբ, նրանց փոխհատուցում վճարելու միջոցով դադարեցնել ընդհանուր գույքում նրանց բաժնի նկատմամբ ունեցած իրավունքը: Այս նորմը, դատարանի թույլտվությամբ, կարող է գործել նաև այն պարագայում, երբ ընդհանուր գույքի համասեփականատերերը փոխհատուցմանը համաձայն չեն: Այդ դեպքում, փոխհատուցման նախապայման է հանդիսանում սեփականատիրոջ (կամ սեփականատերերի) բաժինն աննշան լինելը, բաժինը բնեղենով առանձնացնել հնարավոր չլինելը և ընդհանուր գույքի օգտագործման մեջ այդ սեփականատիրոջ (կամ սեփականատերերի) էական շահ չունենալը: Նույն հոդվածի 6-րդ կետի համաձայն՝ ընդհանուր գույքը բաժանելու կամ դրանից սույն հոդվածի 3-5-րդ կետերում սահմանված կանոններով բաժին առանձնացնելու ակնհայտ աննպատակահարմարության դեպքում դատարանն իրավունք ունի վճիռ կայացնել գույքը հրապարակային սակարկություններով վաճառելու մասին՝ ստացված գումարը հետագայում բաշխելով ընդհանուր սեփականության մասնակիցների միջև՝ նրանց բաժիններին համաչափ: Սույն գործով Լիդիա Ժուրավյովան դիմել է դատարան ընդդեմ Աստղիկ և Մարիամ Գյուլամիրյանների՝ փոխհատուցմամբ սեփականության իրավունքը դադարեցնելու պահանջի մասին, մինչդեռ վերաքննիչ դատարանը ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 197-րդ հոդվածի 3-5-րդ կետերում սահմանված կանոններով բաժին առանձնացնելու ակնհայտ աննպատակահարմարության փաստը ապացուցված չլինելու պայմաններում վճիռ է կայացրել վիճելի բնակարանը հրապարակային սակարկություններով վաճառելու և ստացված գումարը ընդհանուր սեփականության մասնակիցների միջև՝ նրանց բաժիններին համաչափորեն բաշխելու մասին: Հետևաբար դատարանն ըստ էության սխալ է մեկնաբանել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 197-րդ հոդվածի պահանջները:

** Միաժամանակ, Վճռաբեկ դատարանն անդրադարձել է այն իրավական հարցադրմանը, թե արդյո՞ք դատարանը իրավունք ունի վճիռ կայացնել գույքը հրապարակային սակարկություններով վաճառելու մասին, համապատասխան հայցապահանջի բացակայության պայմաններում:*

43. ՀՀ ԿԱ ՀՊԾ Էրեբունու ՀՏ v. անհատ ձեռներեց Վյաչեսլավ Պետրոսյան, քաղ. գործ թիվ 3-436/ՎԴ (գույքից բաժինն առանձնացնելու և դրա վրա բռնագանձում տարածելու պահանջներով):

Խնդիրը. Արդյո՞ք միայն դատարանն է կրում գործի քննությանը պատշաճ պատասխանողին ներգրավելու պարտականությունը

ՀՀ վճռաբեկ դատարանը որոշեց. ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 6-րդ հոդվածի համաձայն՝ քաղաքացիական դատավարությունը մրցակցային է: Այսինքն՝ գործին մասնակցող յուրաքանչյուր անձ ունի հավասար իրավունքներ և կրում է հավասար պարտականություններ, նրանցից յուրաքանչյուրը պետք է ապացուցի իր պահանջների և առարկությունների հիմքում ընկած հանգամանքները, հայցը կամ դիմումը պետք է ներկայացվի պատշաճ հայցվորի կողմից, բավարար հիմնավորված լինի և ուղղված լինի պատշաճ պատասխանողի դեմ: Դատաքննության ընթացքում կողմերն ունեն ակտիվ դիրք, իսկ դատարանին վերապահված է չեզոք գնահատողի դեր: Դատարանն ընդամենը հետազոտում և գնահատում է կողմերի ներկայացրած ապացույցները և վճիռ կայացնելով իրականացնում է արդարադատություն՝ դուրս չգալով ներկայացված հայցապահանջի շրջանակներից և հիմնվելով միմիայն կողմերի ներկայացրած և դատաքննության ընթացքում հետազոտված ու գնահատված ապացույցների վրա: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ մրցակցային դատավարությունում պատշաճ պատասխանող ներգրավելը պետք է լինի միմիայն հայցվորի պարտականությունը, կամ նման ներգրավում պիտի կատարվի հայցվորի միջնորդության հիման վրա: Ոչ պատշաճ պատասխանողի դեմ ներկայացված հայցը ենթակա է մերժման: Այս հարցում դատարանի ակտիվ դերակատարությունը կարող է վտանգել դատավարության մրցակցությունը և խաթարել դրա էությունը: Բոլոր դեպքերում այս տրամաբանությունից ելնելով դատարանները պետք է մեկնաբանեն և կիրառեն ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 31-րդ հոդվածը: Միաժամանակ, Վճռաբեկ դատարանը՝ հաշվի առնելով ներկա անցումային ժամանակաշրջանում Հայաստանի Հանրապետությունում առկա իրավագիտակցության դեռևս ցածր մակարդակը, հասարակական հարաբերությունների օրենսդրական կարգավորման անբավարար աստիճանը, գտնում է, որ յուրաքանչյուր կոնկրետ գործի քննությունն իրականացնելիս դատարանից պահանջվում է մարդու և քաղաքացու ՀՀ Սահմանադրությամբ և միջազգային-իրավական փաստաթղթերով ամրագրված իրավունքների և ազատությունների առավելագույնս արդյունավետ ապահովում և պաշտպանություն: Հետևաբար, նաև Վճռաբեկ դատարանը գտնում է, որ առանձնահատուկ դեպքերում, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 31-րդ հոդվածի հիման վրա, այնուամենայնիվ դատարանը պետք է կրի գործի քննությանը պատշաճ պատասխանողին ներգրավելու պարտականություն:

44. Մուրադ Խաչատրյան v. Դոնարա Խաչատրյան, քաղ. գործ թիվ 3-249/ՎԴ (փոխհատուցում վճարելու թույլտվություն տալու և հակընդդեմ հայցով՝ բաժնեմասն առանձնացնելու, բաժնեմասում բնակվելու հնարավորություն ընձեռնելու և գումարի պահանջներով):

Խնդիրը. Ինչպիսի՞ հանգամանքներ դատարանը պետք է հաշվի առնի ընդհանուր գույքի օգտագործման մեջ սեփականատիրոջ «էական շահի» առկայության կամ բացակայության հարցը քննելիս:

ՀՀ վճռաբեկ դատարանը որոշեց. ընդհանուր գույքի օգտագործման մեջ սեփականատիրոջ էական շահի առկայության կամ բացակայության հարցին անդրադառնալիս դատարանը պետք է հաշվի առնի սեփականատիրոջ շահագրգռվածության համաչափությունը բաժնային սեփականության իրավահարաբերություններում մյուս սեփականատերերին պատճառված

անհարմարություններին, սեփականության իրավունքով համանման այլ ունեցվածք ունենալը (սույն քաղաքացիական գործով այդպիսին կարող է լինել Դոնարա Խաչատրյանի մոտ փաստացի բնակվելու համար պիտանի այլ բնակտարածության առկայությունը), այդ բաժնի նկատմամբ սեփականատիրոջ շահագրգրվածության առկայությունը և այլն:

45. «Մուրադյան եղբայրներ» ՍՊԸ v. Երևանի քաղաքապետարան, քաղ. գործ թիվ 3-656/ՎԴ (պաշտոնատար անձի ակտն անվավեր ճանաչելու և հակընդդեմ հայցով՝ հողի վարձակալության պայմանագիրը վաղաժամկետ լուծելու, հողի վարձակալության նկատմամբ իրավունքների գրանցման վկայականն անվավեր ճանաչելու և տարածքից վտարելու պահանջներով):

Խնդիրը. 1. Արդյոք, Երևանի քաղաքապետարանի գրությունը հանդիսանում է վարչական ակտ:

2. Արդյոք, հողի վարձակալության իրավունք սովոր դրոշումն ուժը կորցրած ճանաչելու փաստը բավարար է վարձակալության պայմանագիրը լուծելու համար:

1. ՀՀ վճռաբեկ դատարանը որոշեց. Սույն քաղաքացիական գործով Քաղաքապետարանի 2005 թվականի հուլիսի 18-ի թիվ 18-11/476 գրությունը հանդիսանում է վարչական ակտ, քանի որ դրանում արտացոլված են վարչական ակտին բնորոշ բոլոր տարրերը: Մասնավորապես, այն ընդունվել է հանրային իրավունքի բնագավառում կոնկրետ գործի կարգավորման համար՝ այն է շինարարական աշխատանքները կանոնակարգելու և քաղաքաշինական նորմերին համապատասխանեցնելու նպատակով և ուղղված է Ընկերության համար պարտականություններ սահմանելուն՝ Ընկերությունից պահանջվել է կատարել գրունտների հետլիցքի աշխատանքներ, իսկ դրա կամավոր չկատարման դեպքում նախատեսվել է հարկադրանքի միջոցների կիրառում:

2. ՀՀ վճռաբեկ դատարանը որոշեց. Վարձակալության պայմանագիրը, հանդիսանալով քաղաքացիաիրավական գործարք, որով դրսևորվում են կողմերի կամքը և կամաարտահայտությունը՝ քաղաքացիական իրավունքներ և պարտականություններ առաջացանելու առնչությամբ, չի կարող լուծվել միայն մեկ կողմի կամքի դրսևորման հետևանքով: Այսինքն՝ սույն քաղաքացիական գործով վարչական ակտի վերացումը չի կարող որևէ իրավական հետևանք ունենալ գործարքի կողմերի նկատմամբ, քանի որ նման գործարքի կնքման պահից կողմերի հարաբերությունները վարչաիրավական հարաբերությունների իրավական կարգավորման դաշտից անցնում են քաղաքացիաիրավական հարաբերությունների կարգավորման դաշտ, հետևաբար նրանց միջև հարաբերությունները կարգավորվում են համապատասխան քաղաքացիաիրավական պայմանագրով և քաղաքացիական իրավահարաբերությունները կարգավորող նորմատիվ իրավական ակտերով:

46. Ջուլիետա Պետրոսյան, Կարեն Դավթյան և Արման Դավթյան v. Թևոս Սաֆարյան, քաղ. գործ թիվ 3-691/ՎԴ (պատճառված վնասների հատուցման պահանջով):

Խնդիրը. Ինչպիսի հանգամանքներ դատարանը պետք է հաշվի առնի բաց թողնված օգուտի առկայությունը պարզելու համար:

ՀՀ վճռաբեկ դատարանը որոշեց. ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 17-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ վնասներ են իրավունքը խախտված անձի ծախսերը, որ նա կատարել է կամ պետք է կատարի խախտված իրավունքը վերականգնելու համար, ինչպես նաև չստացված եկամուտները, որոնք այդ անձը կստանար քաղաքացիական

շրջանառության սովորական պայմաններում, եթե նրա իրավունքը չխախտվեր: Այսպիսով, բաց թողած օգուտն այն եկամուտն է, որը սեփականատերը քաղաքացիական շրջանառության սովորական պայմաններում կստանար, եթե չխախտվեր նրա իրավունքը: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ բաց թողած օգուտի առկայությունը, այսինքն՝ անձի իրավունքի չխախտման պարագայում եկամուտի ստացման իրական հնարավորությունը որոշելը յուրաքանչյուր գործով ինքնուրույն գնահատման ենթակա հարց է, որի ընթացքում պետք է հաշվի առնվեն տվյալ գործի առանձնահատկությունները: Մասնավորապես, բաց թողած օգուտի առկայությունը որոշելու համար նախ և առաջ պետք է հաշվի առնվի մինչև իրավունքի խախտումը քաղաքացիական շրջանառությունում համապատասխան գույքի ունեցած կարգավիճակը, (մասնավորապես, սույն քաղաքացիական գործով այդպիսին կարող է լինել իրավունքի ենթադրյալ խախտման պահին, այսինքն՝ բնակարանը հետ պահանջելու պահին, այլ անձի հետ բնակարանի վարձակալության պայմանագիր կնքված լինելը) կամ սեփականատիրոջ **իրական** մտադրության և հնարավորության միաժամանակյա առկայությունը այդ գույքի տնօրինման եղանակների առնչությամբ (այդպիսին կարող է լինել, օրինակ՝ իրավունքը խախտված անձի կողմից այլ անձանց ուղարկված համապատասխան օֆերտան):

47. Ռոբերտ Միմոնյան v. Գայանե Փարսյան, Արմեն, Մարինե և Անդրանիկ Թադևոսյաններ, Երևանի քաղաքապետարան և Էրեբունու թաղապետարան, ՀՀ ԿԱ ԱԳԿ ՊԿ «Մարաշ» ՏՄ, քաղ. գործ թիվ 3-464/ՎԴ (Երևան քաղաքի Երկաթգծի փողոցի թիվ 28 շենքի թիվ 21 բնակարանը սեփականաշնորհելու վերաբերյալ Երևանի Էրեբունու շրջխորհրդի գործկոմի 1995 թվականի օգոստոսի 25-ի թիվ 32/54 որոշումը և դրա հիման վրա տրված սեփականության իրավունքի գրանցման վկայականը մասնակի անվավեր ճանաչելու պահանջներով):

Խնդիրը. Արդյո՞ք լիազորված անձի լիազորությունները դադարած լինելու պայմաններում նրա կողմից հակընդդեմ հայցի ընդունումը լիազորողի նկատմամբ իրավական հետևանքներ կարող է առաջացնել:

ՀՀ վճռաբեկ դատարանը որոշեց. ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 41-րդ հոդվածի առաջին մասի համաձայն՝ ներկայացուցչի լիազորությունները պետք է ամրագրվեն օրենքին համապատասխան տրված և ձևակերպված լիազորագրում: ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 324-րդ հոդվածի առաջին մասի առաջին կետի համաձայն՝ լիազորագրի գործողությունը դադարում է, եթե լիազորագրի ժամկետը լրացել է: Հիմք ընդունելով վերոնշյալը և հաշվի առնելով այն հանգամանքը, որ 2006 թվականի մարտի 22-ին Անահիտ Զոհրաբյանին տրված լիազորագրի ժամկետը 2006 թվականի օգոստոսի 24-ի դրությամբ լրացած էր, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Անահիտ Զոհրաբյանի լիազորությունների դադարած լինելու պայմաններում նրա կողմից հակընդդեմ հայցի ընդունումը Ռոբերտ Միմոնյանի նկատմամբ իրավական հետևանքներ չի կարող առաջացնել:

48. Անահիտ Թորոսյան v. ՀՀ ԿԱ ՀՊԾ, քաղ. գործ թիվ 3-500/ՏԴ (2006 թվականի հոկտեմբերի 19-ի թիվ 1303288 ակտն անվավեր ճանաչելու պահանջով):

Խնդիրը. Արդյո՞ք ստուգման հանձնարարագրի բացակայությամբ ստուգման ակտի հիմքում կարող էր դրվել անձից վերցրած բացատրությունը:

ՀՀ վճռաբեկ դատարանը որոշեց. «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի առաջին պարբերության համաձայն՝ **ստուգումն սկսելուց առաջ** համապատասխան պետական մարմնի ղեկավարն ստուգում իրականացնելու մասին

հրապարակում է հրաման կամ հանձնարարագիր: Նույն հոդվածի 2-րդ մասի 4-րդ պարբերության համաձայն՝ հարկային մարմնի կողմից առանց պետական գրանցման, առանց համապատասխան լիցենզիայի գործունեություն իրականացնող տնտեսավարող սուբյեկտների հայտնաբերմանն ուղղված ստուգումների ժամանակ ստուգման հրամանում (հանձնարարագրում) նշվում են ստուգումն իրականացնող մարմնի անվանումը, **ստուգումն իրականացնող պաշտոնատար անձի** պաշտոնը, անունը, ազգանունը, ստուգման նպատակը, ստուգմամբ ընդգրկվող ժամանակաշրջանը, ստուգման իրավական հիմքերը: «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի «բ» կետի համաձայն՝ ստուգումն իրականացնող անձինք **իրենց լիազորություններն իրականացնելիս** իրավունք ունեն պահանջել փաստաթղթեր, տվյալներ և այլ տեղեկություններ, բացատրություններ, տեղեկանքներ, որոնք անմիջականորեն առնչվում են իրենց իրավասության շրջանակներում իրականացվող ստուգման նպատակներին: Վերոնշյալ օրինադրույթներից հետևում է, որ ստուգումն իրականացնող պաշտոնատար անձը ստուգումների բնագավառը կարգավորող օրենսդրությամբ նախատեսված գործողություններ կարող է իրականացնել (այդ թվում՝ բացատրություններ վերցնել) միայն համապատասխան հանձնարարագրի առկայության դեպքում և այդ հանձնարարագրում նշված շրջանակներում: Հիմք ընդունելով վերոնշյալը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն քաղաքացիական գործով ստուգման ակտի հիմքում չէր կարող դրվել ստուգման հանձնարարագրի բացակայությամբ Անահիտ Թորոսյանից վերցրած բացատրությունը, քանի որ այդ ժամանակաշրջանում ստուգում իրականացնող անձինք դիմողից բացատրություն վերցնելու լիազորությամբ օժտված չէին:

**Միաժամանակ, ՀՀ վճռաբեկ դատարանն անդրադարձել է «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 4-րդ մասին, որի իմաստով հարկային ծառայողը, օրենքով սահմանված ընթացակարգով ստուգում իրականացնելու լիազորության բացակայության պայմաններում, չունի անձից բացատրություն վերցնելու իրավունք, անկախ նման գործողության նպատակից:*

49. «Միկրոէլեկտրաշարժիչ» ԲԲԸ v. «Լիլիթ» ՍՊԸ, Գյումրու քաղաքապետարան ՀՀ ԿԱ ԱԳԿ ՊԿ Գյումրու ՏՍ, քաղ. գործ թիվ 3-592/ՏԴ (ոչ հիմնական օբյեկտները քանդելու, տնօրինման և օգտագործման իրավունքների խախտումները վերացնելու, Գյումրու քաղաքապետի 2005 թվականի հոկտեմբերի 07-ի թիվ 2041 որոշումը՝ Գյումրի քաղաքի Մայակովսկի փողոցի 70ա հասցեում գտնվող 156.65քմ մակերեսով հողամասի առուվաճառքի մասով անվավեր ճանաչելու և որպես որոշման անվավերության հետևանք այդ մասով Գյումրու քաղաքապետի և Կազմակերպության միջև 2005 թվականի հոկտեմբերի 12-ին կնքված առուվաճառքի պայմանագիրն ու Կադաստրի կողմից 2005 թվականի հոկտեմբերի 14-ին տրված թիվ 1997325 սեփականության իրավունքի գրանցման վկայականն անվավեր ճանաչելու պահանջներով):

Խնդիրը. Արդյո՞ք վարչական ակտի վիճարկման ժամանակ դիմողը կրում է ակտի իրավաչափության ապացուցման պարտականությունը:

ՀՀ վճռաբեկ դատարանը որոշեց. Ակտի՝ ՀՀ օրենքներին հակասելու դատական ստուգման կարգը սահմանված է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 162-րդ հոդվածի 5-րդ մասում: Դատարանի կողմից ակտն օրենքին հակասելը բացի ակտն ընդունող մարմնի (դրա պաշտոնատար անձի) իրավասության տեսանկյունից ստուգման ենթարկելիս, այն պետք է ստուգման ենթարկվի նաև նյութական

իրավաչափության տեսանկյունից: Ակտի նյութական իրավաչափությունը գնահատելիս դատարանը պետք է ստուգի գործի փաստերը և յուրաքանչյուր փաստի իրավական հետևանքը: Սույն քաղաքացիական գործով Գյումրու քաղաքապետի 2005 թվականի հոկտեմբերի 07-ի թիվ 2041 որոշման իրավաչափությունը ստուգելիս Դատարանն էական նշանակություն է տվել այն հանգամանքին, որ վեճի առարկա հողամասի՝ բնակավայրերում ընդհանուր օգտագործման տարածք լինելու փաստը հայցվորի կողմից չի ապացուցվել: Մինչդեռ հողամասի ընդհանուր օգտագործման տարածք լինելու կամ չլինելու ապացուցման պարտականությունը, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 162-րդ հոդվածի 6-րդ մասի ուժով, կրում է Գյումրու քաղաքապետարանը:

50. Սամվել Դերձյան v. Տատյանա Մարդանյան, քաղ. գործ թիվ 3-664/ՎԴ (ալիմենտի չափը նվազեցնելու պահանջով):

Խնդիրը. Արդո ք ալիմենտի չափը փոփոխելը ՀՀ ընտանեկան օրենսգրքի 107-րդ հոդվածի իմաստով հանդիսանում է դատարանի պարտականությունը:

ՀՀ վճռաբեկ դատարանը որոշեց. ՀՀ ընտանեկան օրենսգրքի 107-րդ հոդվածի առաջին մասի համաձայն՝ եթե ալիմենտ վճարելու վերաբերյալ համաձայնության բացակայությամբ ալիմենտի չափը դատական կարգով որոշելուց հետո փոփոխվել է կողմերից մեկի գույքային և ընտանեկան դրությունը, ապա դատարանը կարող է յուրաքանչյուր կողմի պահանջով փոփոխել ալիմենտի սահմանված չափը կամ ալիմենտ վճարելու պարտավոր անձին ազատել դա վճարելուց: Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ՀՀ ընտանեկան օրենսգրքի 107-րդ հոդվածի առաջին մասի հիմքով ալիմենտի չափը փոփոխելը դատարանի իրավունքն է և ոչ պարտականությունը և դատարանն իր այդ իրավունքն իրականացնում է հայեցողական իրավագործությամբ՝ ելնելով կոնկրետ գործի հանգամանքներից և առաջնորդվելով մարդու և քաղաքացու՝ ՀՀ Սահմանադրությամբ և Հայաստանի Հանրապետության կողմից վավերացված միջազգային պայմանագրերով ամրագրված իրավունքների և ազատությունների պաշտպանության անհրաժեշտությամբ:

51. ՀՀ առողջապահության նախարարության պետական հիգիենիկ և հակահամաճարակային տեսչության Կոտայքի մարզային կենտրոն v. Մեդա Ադամյան, քաղ. գործ թիվ 3-690/ՎԴ (վարչական տուգանքը բռնագանձելու պահանջով):

Խնդիրը. Վարչական պատասխանատվության իմաստով անհատ ձեռնարկատերը պետք է որակվի որպես պաշտոնատար անձ, թե որպես ֆիզիկական անձ:

ՀՀ վճռաբեկ դատարանը որոշեց. «Անհատ ձեռնարկատիրոջ մասին» ՀՀ օրենքի առաջին հոդվածի համաձայն՝ անհատ ձեռնարկատիրոջ ձեռնարկատիրական գործունեության նկատմամբ կիրառվում են օրենքով առևտրային կազմակերպություններ համարվող իրավաբանական անձանց գործունեությունը կարգավորող կանոնները, եթե այլ բան չի բխում օրենքից, այլ իրավական ակտերից կամ իրավահարաբերության էությունից: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ դատարանը յուրաքանչյուր դեպքում պաշտոնատար անձին պատասխանատվության ենթարկելու մասին որոշման իրավաչափությունը ստուգման ենթարկելիս պետք է հաշվի առնի Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 14-րդ հոդվածի պահանջները, որում ամրագրված **պաշտոնեական պարտականություն** հասկացությունը գործող ՀՀ օրենսդրության շրջանակում պետք է մեկնաբանել որպես կազմակերպչական ու կառավարչական (ղեկավար) գործառույթներ: Նշված մեկնաբանության համար Վճռաբեկ դատարանը հիմք է ընդունում այն հանգամանքը, որ թեև անհատ ձեռնարկատերերը ձևականորեն որևէ պաշտոն չեն զբաղեցնում,

սակայն իրենց գործունեությունն իրականացնելիս նրանք ապահովում են դրա կազմակերպումն ու կառավարումն այնպես, ինչպես դա կիրականացներ նման գործունեությամբ զբաղվող որևէ կազմակերպության իրավասու ղեկավարը՝ պաշտոնատար անձը: «Անհատ ձեռնարկատիրոջ մասին» ՀՀ օրենքը պահանջում է անհատ ձեռնարկատիրոջ գործունեության նկատմամբ կիրառել այդ նույն կանոնները, հետևաբար նաև նույն տրամաբանությունը, որը կիրառվում է իրավաբանական անձանց գործունեության նկատմամբ: Եթե ընկերության գլխավոր տնօրենը կամ գործադիր տնօրենը որակվում է որպես պաշտոնատար անձ, ապա անհատ ձեռնարկատերը վարչական պատասխանատվության իմաստով նույնպես պետք է որակվի որպես պաշտոնատար անձ այն հանգամանքի ուժով, որ նա իրականացնում է առաջինի հետ բնույթով նույնանման կազմակերպչական ու կառավարչական գործառույթներ:

18.05.2007թ.

52. Գոհար Հակոբյան v. Հրաժին Վարդանյան, քաղ. գործ թիվ 3-410/ՎԴ (ուրիշի ապօրինի տիրապետումից գույքը հետ պահանջելու և հակընդդեմ հայցով՝ սեփականության վկայականը մասնակի անվավեր ճանաչելու, ձեռքբերման վաղեմության ուժով հողամասի նկատմամբ սեփականության իրավունքը ճանաչելու պահանջներով):

Խնդիրը. Արդյո՞ք պետության սեփականությունը հանդիսացող վեճի առարկա հողամասը ձեռքբերման վաղեմության ուժով կարող է ճանաչվել որպես անձի սեփականություն:

ՀՀ վճռաբեկ դատարանը որոշեց. ՀՀ հողային օրենսգրքի 1-ին հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ ՀՀ քաղաքացիական օրենսգիրքը հողերին վերաբերող մասով հողային հարաբերությունների նկատմամբ կիրառվում է նույն օրենսգրքի դրույթների՝ հաշվառմամբ: Նույն օրենսգրքի 72-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի համաձայն՝ քաղաքացիները և իրավաբանական անձինք պետության ու համայնքների հողերի այն հողամասերի նկատմամբ, որոնց տիրապետում են առանց իրավաբանական ձևակերպման և որոնցից օգտվում են անընդմեջ ու բացահայտ ավելի քան տասը տարի, ունեն օգտագործման իրավունքի ձեռքբերման վաղեմության իրավունք և/կամ այդ հողերից սեփականության իրավունքով հողամասեր ձեռք բերելու նախապատվության իրավունք: Նշված հոդվածի բովանդակությունից հստակ երևում է, որ խոսքը գնում է ոչ թե գույքի նկատմամբ սեփականության իրավունք ձեռք բերելու մասին, այլ գույքի օգտագործման և/կամ սեփականության իրավունքով հողամասեր ձեռք բերելու նախապատվության իրավունքի մասին: Ավելին, նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ **այլ սեփականատիրոջը** պատկանող հողամասի նկատմամբ ձեռքբերման վաղեմության ուժով սեփականության իրավունքի ծագումը կարգավորվում է ՀՀ քաղաքացիական օրենսգրքով: Փաստորեն, սույն գործով քննվող վեճի կարգավորումը տրված է ոչ թե ՀՀ քաղաքացիական օրենսգրքով, այլ՝ ՀՀ հողային օրենսգրքի 72-րդ հոդվածով:

53. «Գյումրի-հաց» ՍՊԸ v. Գյումրու քաղաքապետարան, քաղ. գործ թիվ 3-20/ՏԴ (օրենքին հակասող ակտերն անվավեր ճանաչելու պահանջով):

Խնդիրը. Արդյո՞ք շինարարության թույլտվության համար հիմք հանդիսացող փաստաթղթերի բացակայության պայմաններում, դատարանը կարող է պարտավորեցնել քաղաքապետարանին տալ համապատասխան շինարարության թույլտվություն:

ՀՀ վճռաբեկ դատարանը որոշեց. Կառուցապատողը մինչև համայնքի վարչական տարածքում շինարարության իրականացման համար շինարարական թույլտվություն պահանջելը, պարտավոր է նախապես սահմանված կարգով տեղական ինքնակառավարման մարմնին դիմել և ստանալ ճարտարապետահատակագծային առաջադրանք, որը համայնքի ղեկավարի կողմից տրվում է, եթե հայտով ներկայացված պահանջները համապատասխանում են օրենսդրությամբ, տարածական պլանավորման փաստաթղթերով, բնակավայրի քաղաքաշինական կանոնադրությամբ, ինչպես նաև քաղաքաշինական փաստաթղթերով սահմանված պահանջներին: Առաջադրանքով սահմանված պայմանները հիմք են հանդիսանում նախագծային փաստաթղթերի մշակման համար և պարտադիր են քաղաքաշինական գործունեության բոլոր մասնակիցների համար: Հետևաբար, առանց նշված առաջադրանքի առկայության ընկերությունը չի կարող մշակել և նախապատրաստել նախագծային փաստաթղթերի փաթեթը, որի համաձայնեցման պարագայում միայն համայնքի ղեկավարը կարող է կառուցապատողին տրամադրել շինարարական թույլտվություն: Սույն գործի փաստերի համաձայն՝ Ընկերությունը ճարտարապետահատակագծային առաջադրանքի հայտ չի ներկայացրել Գյումրու քաղաքապետարան, սահմանված կարգով չի ստացել նշված առաջադրանքը, վերջինիս որևէ նախագիծ չի ներկայացրել համաձայնեցման: Նշանակում է նման պայմաններում Գյումրու քաղաքապետարանի կողմից Ընկերությանը գազայման կայանի շինարարության թույլտվություն չէր կարող տրվել:

54. «Դավիթ Երթուղային Տաքսի» ՓԲԸ-ի բաժնետեր Ալբերտ Հակոբյան v. «Դավիթ Երթուղային Տաքսի» ՓԲԸ, քաղ. գործ թիվ 3-346/ՏԴ գումար բռնագանձելու և հակընդդեմ հայցով՝ Ալբերտ Հակոբյանից հօգուտ Ընկերության 337.720 ՀՀ դրամ գումար բռնագանձելու պահանջներով):

Խնդիրը. Արդյո՞ք դատարանը մերժելով Ընկերության ներկայացուցչի միջնորդությունը, գործի քննությունը հետաձգելու վերաբերյալ խախտել է անձի՝ Սահմանադրության 19-րդ հոդվածով և «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածով երաշխավորված արդար դատաքննության իրավունքը:

ՀՀ վճռաբեկ դատարանը որոշեց. ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 6-րդ հոդվածի համաձայն քաղաքացիական դատավարությունն իրականացվում է կողմերի մրցակցության և իրավահավասարության հիման վրա: ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 119-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն դատարանն իրավունք ունի հետաձգել գործի քննությունը, եթե դա թելադրված է լրացուցիչ ապացույցներ ներկայացնելու անհրաժեշտությամբ: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ այս կամ այն հայեցողական լիազորությունն իրականացնելու դատարանի իրավունքը բացարձակ բնույթ չի կրում, և դրա իրականացման նպատակահարմարության հարցն անհրաժեշտ է որոշել ելնելով դատավարության մրցակցության և կողմերի իրավահավասարության դատավարական սկզբունքների էությունից: Այսինքն, եթե դատական նիստում կողմը ներկայացրել է լրացուցիչ ապացույց(ներ), իսկ մյուս կողմը միջնորդում է դատական նիստը հետաձգել՝ դրան(ց) ծանոթանալու և դրա(նց) դեմ առարկություններ ներկայացնելու նպատակով, ապա

դատարանը գործի քննությունը հետաձգելու իր դատավարական լիազորությունն իրականացնելիս պետք է պարզի, թե արդյո՞ք միջնորդություն ներկայացնող կողմը ունի ողջամիտ հնարավորություն դատական նույն նիստի ընթացքում ծանոթանալու և առարկություններ ներկայացնելու այդ ապացույցների առնչությամբ, թե՞ ոչ: Հակառակ պարագայում դատարանը պարտավոր է ողջամիտ ժամկետով հետաձգել գործի քննությունը՝ կողմին հնարավորություն տալով ծանոթանալու լրացուցիչ ապացույցներին և առարկություններ ներկայացնելու դրանց դեմ: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ դատավարությունում կողմերի իրավահավասարության սկզբունքը, որը հանդիսանում է արդար դատաքննության հիմնական տարրերից մեկը, պահանջում է որպեսզի յուրաքանչյուր կողմին տրամադրվի ողջամիտ հնարավորություն՝ արտահայտելու իր դիրքորոշումը տվյալ գործի վերաբերյալ, այդ թվում ներկայացնելու ապացույցներ՝ այնպես, որ կողմերից որևէ մեկը մյուսի նկատմամբ առավելություն չունենա:

55. «Կուռամուս» ՍՊԸ v. ՀՀ առողջապահության նախարարություն, ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարություն, «Դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» ՓԲԸ և «Ալֆա-ֆարմ» ՍՊԸ, քաղ. գործ թիվ 3-538/ՏԴ (ՀՀ առողջապահության նախարարության կողմից 16.10.2006 թվականին տրված թիվ 001286 ներմուծման հավաստագիրը մասնակի անվավեր ճանաչելու պահանջով):

Խնդիրը. Արդյո՞ք փաթեթի կամ պիտակի վրա դեղն արտադրող ընկերության ՀՀ տարածքում ներկայացուցիչ ունենալու վերաբերյալ գրառման և նույնականացման նկարի բացակայությունը, ինչպես նաև ներկրվող նմուշների ներդիր թերթիկների ռուսերեն լեզվով կազմված լինելը կարող են բավարար հիմք հանդիսանալ ներմուծման հավաստագիր տալը մերժելու համար:

ՀՀ վճռաբեկ դատարանը որոշեց. Սույն գործով խոսքը գնում է միայն դեղի և դեղանյութի նույնականացման, դրանց՝ ՀՀ-ում ընդունված դեղագրքերի և(կամ) տեխնիկական պայմանների պահանջներին համապատասխանության մասին, այլ ոչ թե դեղի և դեղամիջոցների փաթեթների, պիտակների, ներդիր թերթիկների կամ արտաքին ձևավորման այլ տարրերի կամ մատուցման ձևերի լիակատար նույնականության մասին: Փաթեթի կամ պիտակի վրա դեղն արտադրող ընկերության ՀՀ տարածքում ներկայացուցչի վերաբերյալ գրառման բացակայությունը, փաթեթի վրա աչքի նկարի բացակայությունը, ներկրվող նմուշների ներդիր թերթիկների ռուսերեն լեզվով կազմված լինելը չեն կարող հիմք հանդիսանալ ներմուծման հավաստագրի մերժման համար, քանի որ դրանք չեն կարող ազդել դեղի կամ դեղանյութի որակական ցուցանիշների վրա: Բացի այդ, վերը նշված գրառումները ՀՀ օրենքներով կամ այլ իրավական ակտերով սահմանված չեն որպես պարտադիր գրառումներ, որոնց չպահպանելը կարող է հիմք հանդիսանալ դեղերի ներմուծման հավաստագրի տրամադրումը մերժելու համար:

56. Հասմիկ Բլուրցյան, Տիգրան Թերզյան և Գոհար Գզողյան v. Վահե Այվազյան, Գառնիկ և Գոհար Փանոսյաններ, քաղ. գործ թիվ 3-793/ՎԴ (անշարժ գույքի առուվաճառքի գործարքն անվավեր ճանաչելու և բնակարանից վտարելու պահանջներով):

Խնդիրը. Արդյո՞ք գործարքի մեկ կողմի մոտ խաթարված կամքի առկայությունը հիմք է գործարքը շինծու գնահատելու համար:

ՀՀ վճռաբեկ դատարանը որոշեց. ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 306-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ շինծու գործարքը, այսինքն՝ մեկ այլ գործարքի քողարկման

նպատակով կնքված գործարքն առոչինչ է: Տվյալ դեպքում, քաղաքացիական գործում առկա ապացույցներով չի հիմնավորվում ոչ այն հանգամանքը, որ Տիգրան Թերզյանի, Գոհար Գգոդյանի և Վահե Այվազյանի միջև 16.10.1999 թվականին կնքված գործարքի կողմ (կամ կողմեր) իրականում հանդիսանում են այլ անձինք, ոչ էլ այն հանգամանքը, որ վերոհիշյալ պայմանագիրը կնքած Վահե Այվազյանի կամքն իրականում ուղղված է եղել մեկ այլ պայմանագիր կնքելուն, որը քողարկվել է վեճի առարկա պայմանագրով: Հետևաբար, երկկողմ գործարքը կնքողներից միայն մեկ կողմի մոտ խաթարված կամքի առկայության դեպքում, չի կարող այդ գործարքը գնահատվել շինծու, քանի որ նման փաստերի առկայությունը հնարավոր հիմք է տալիս հանգելու հետևության, որ հարցը վերաբերում է խաբեությանը կնքված գործարքին (**վիճահարույց գործարք**), որի համար օրենսդիրը (ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 313-րդ հոդված) սահմանել է անվավեր ճանաչելու այլ հիմքեր և դրանից բխող հետևանքներ:

57. Գազիկ Խաչիկյան v. Հայկ Մայիլյան, քաղ. գործ թիվ 3-719/ՎԴ (վնասը հատուցելու պահանջով):

Խնդիրը. ՀՀ կառավարության որոշումներով նախատեսված **հատկացումը** հանդիսանում է նպաստ, թե պատճառված վնասի փոխհատուցում:

ՀՀ վճռաբեկ դատարանը որոշեց. ՀՀ կառավարության 27.11.2000 թվականի թիվ 778 որոշման 16-րդ կետի «բ» ենթակետի, ՀՀ կառավարության 18.08.1997 թվականի թիվ 341 որոշման 1-ին կետի, «Հայաստանի Հանրապետության կառավարության 1997 թվականի օգոստոսի 18-ի թիվ 341 որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության 11.04.2000 թվականի թիվ 160 որոշման 2-րդ պարբերության «դ» կետի սահմանված **հատկացումները** չեն կարող հանդիսանալ վնասի փոխհատուցում, քանի որ տվյալ փոխհատուցումների տրամադրումը ՀՀ կառավարության նշված որոշումների համաձայն չի պայմանավորվում տվյալ վնասը պետական պաշտոնատար անձի կողմից հասցվելու հետ, այլ դրանք հատկացվում են պետության կողմից նշված ցանկացած դեպքերում: Սույն գործով Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության կողմից Գարիկ Խաչիկյանի ընտանիքին 18.08.1997 թվականի թիվ 341 որոշման համաձայն՝ 500 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամ հուղարկավորության ծախսերի փոխհատուցումը և 11.04.2000 թվականի թիվ 650 որոշման համաձայն՝ 1000 ԱՄՆ դոլարին համարժեք դրամ գերեզմանի բարեկարգման, տապանաքարի պատրաստման, տեղադրման համար տրամադրված գումարներն ըստ էության հանդիսանում են նպաստի տեսակ, որը պետությունը վճարում է զինծառայողներին՝ անկախ հասցված վնասում պաշտոնատար անձի մեղքի առկայության:

58. Նունիկ Պետրոսյանի դիմումը, քաղ. գործ թիվ 3-676/ՎԴ (իրավաբանական նշանակություն ունեցող փաստի հաստատման պահանջով):

Խնդիրը. Արդյո՞ք պահանջվող ապահովագրական ստաժի առկայության պայմաններում ստաժը կարող է հաստատվել դատարանում հատուկ վարույթի կարգով:

ՀՀ վճռաբեկ դատարանը որոշեց. «Պետական կենսաթոշակի մասին» ՀՀ օրենքի 47-րդ հոդվածի համաձայն՝ աշխատանքային գրքույկի կամ դրանում համապատասխան գրառումների կամ աշխատանքային ստաժը հաստատող՝ օրենսդրությամբ սահմանված այլ փաստաթղթերի բացակայության դեպքում աշխատանքային ստաժը հաստատվում է արխիվային տեղեկանքով, իսկ դրա բացակայության դեպքում՝ դատական կարգով: Պահանջվող ապահովագրական ստաժի առկայության դեպքում ստաժը դատական կարգով չի հաստատվում:

Դատական կարգով կարող է հաստատվել պահանջվող ստաժի պակասող մասը, սակայն տասը տարվա ստաժից ոչ ավելի: Սույն գործի փաստերի համաձայն՝ 15.09.1964 թվականից մինչև 01.10.2001 թվականն ընկած ժամանակահատվածի համար Նունիկ Պետրոսյանի ընդհանուր ապահովագրական ստաժը կազմում է 33 տարի, 8 ամիս, 16 օր: Այսինքն՝ ըստ դիմումատուի կենսաթոշակային գործում առկա տվյալների, վերջինիս ապահովագրական ստաժը գերազանցում է ապահովագրական կենսաթոշակի իրավունք ունենալու համար պահանջվող 25 տարվա ապահովագրական ստաժը: Հետևաբար «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի 47-րդ հոդվածի ուժով Նունիկ Պետրոսյանի 1952 թվականից մինչև 1963 թվականն ընկած ժամանակահատվածի ապահովագրական ստաժը վերականգնելու պահանջի մասին դատարանն ներկայացված դիմումը հատուկ վարույթի կարգով դատարանում քննության ենթակա չէ:

59. Սուսաննա Բաղդասարյան v. Սպարտակ Հակոբյան, քաղ. գործ թիվ 3-831/ՎԴ (գործարքն անվավեր ճանաչելու և բնակարանից վտարելու պահանջներով, և հակընդդեմ հայցով՝ գործարքը վավեր ճանաչելու պահանջով):

Խնդիրը. Արդյո՞ք անշարժ գույքի վերաբերյալ բանավոր համաձայնությունը, կարող է վավեր ճանաչվել որպես անշարժ գույքի առուվաճառքի գործարք:

ՀՀ վճռաբեկ դատարանը որոշեց. ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 295-րդ հոդվածի 1-ին կետի իմաստով բանավոր կարող է կնքվել այն գործարքը, որի համար օրենքով կամ կողմերի համաձայնությամբ սահմանված չէ գրավոր ձև, իսկ անշարժ գույքի վաճառքի համար ՀՀ քաղաքացիական օրենսգրքով սահմանված է գործարքի կնքման գրավոր ձևը: Նույն օրենսգրքի 296-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ գրավոր գործարքը պետք է կնքվի փաստաթուղթ կազմելու միջոցով, որն արտահայտում է գործարքի բովանդակությունը և ստորագրված է գործարք կնքող անձի կամ անձանց կողմից: Քանի որ վեճի առարկան անշարժ գույք է հանդիսանում, ապա պայմանագիրը ոչ միայն պետք է կնքվեր գրավոր, այլ նաև պետք է համապատասխաներ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 562-րդ հոդվածով սահմանված կանոններին, ըստ որոնց՝ անշարժ գույքի վաճառքի պայմանագիրը կնքվում է գրավոր՝ կողմերի ստորագրությամբ մեկ փաստաթուղթ կազմելու միջոցով, անշարժ գույքի առուվաճառքի պայմանագիրը ենթակա է նոտարական վավերացման: Տվյալ դեպքում կողմերը նշված հոդվածով սահմանված պահանջները չեն պահպանել, հետևաբար բանավոր համաձայնությունը, որի պայմանները վիճարկում են կողմերը, չի կարող վավեր ճանաչվել որպես անշարժ գույքի առուվաճառքի գործարք:

60. «Հայգազարդ» ՓԲԸ v. Բարմիկ Աբրահամյան, քաղ. գործ թիվ 3-843/ՎԴ (գումարի բռնագանձման պահանջով):

Խնդիրը. Արդյո՞ք հանցագործության հետևանքով իրենց պատճառված նյութական վնասի փոխհատուցման վերաբերյալ հայցերով պետական տուրքի վճարումից ազատված հայցվորներն ազատվում են վճռաբեկ բողոքներ բերելու համար սահմանված պետական տուրքի վճարումից:

ՀՀ վճռաբեկ դատարանը որոշեց. «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մասի «ե» կետը սահմանում է, որ դատարաններում պետական տուրքի վճարումից ազատվում են բոլոր հայցվորները՝ հանցագործության հետևանքով իրենց պատճառված նյութական վնասի փոխհատուցման վերաբերյալ հայցերով: Նույն հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ նույն հոդվածի առաջին մասում նշված անձինք տուրքի վճարումից ազատվում են նաև դատարանի վճիռների և որոշումների դեմ վերաքննիչ և վճռաբեկ բողոքների համար: Այսպիսով, Վճռաբեկ դատարանն

արձանագրում է, որ հայցվորն օրենքի ուժով ազատված է ինչպես հայցադիմում ներկայացնելու համար սահմանված պետական տուրքի վճարումից, այնպես էլ դատարանի կողմից կայացված վճիռների դեմ վերաքննիչ և վճռաբեկ բողոքներ բերելու համար սահմանված պետական տուրքի վճարումից:

61. Հերմինե և Հասմիկ Փիլոսյաններ v. «Վանակար» ՍՊԸ, քաղ. գործ թիվ 3-561/ՎԴ (գումարի բռնագանձման և մեքենայի առուվաճառքի պայմանագիր կնքելուն հարկադրելու պահանջներով):

Խնդիրը. Ընկերության դրամարկղի մուտքի օրդերը կարող է արդյո՞ք դիտվել որպես գույքի առուվաճառքի նախնական պայմանագիր:

ՀՀ վճռաբեկ դատարանը որոշեց. ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 470-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է, որ առուվաճառքի պայմանագրով կողմերից մեկը պարտավորվում է մյուս կողմից որպես սեփականություն հանձնել ապրանք, իսկ գնորդը պարտավորվում է ընդունել այդ ապրանքը և դրա համար վճարել որոշակի գումար: Սույն նորմը նախատեսում է, որ առուվաճառքի պայմանագրում պետք է նշված լինի կողմերի կամաարտահայտությունը համապատասխանաբար գույք հանձնելու և դրա դիմաց վճարելու և գույքը ստանալու պարտավորությունը ստանձնելու վերաբերյալ: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ «Վանակար» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության դրամարկղի մուտքի 04.02.2005 թվականի թիվ 2 օրդերը չի կարող դիտվել որպես գույքի առուվաճառքի նախնական պայմանագիր, քանի որ չի պարունակում առուվաճառքի պայմանագրի ձևին առաջադրվող էական պայման: Տվյալ դեպքում որպես էական պայման Վճռաբեկ դատարանը դիտում է կողմերի պարտավորություն ստանձնելու կամաարտահայտության բացակայությունը: Հետևաբար, նշված պայմանագիրն առոչինչ է և չի կարող իրավական հետևանքներ ունենալ:

62. ՀՀ ԿԱ ՀՊԾ հանքարտադրող ոլորտային ՀՏ v. «Կոմպյուտեր» ԱԿ, քաղ. գործ թիվ 3-627/ՏԴ (գումարի բռնագանձման պահանջով):

Խնդիրը. Արդյո՞ք ուժի մեջ չմտած լիցենզիայի առկայությունն առաջացնում է պետական տուրք վճարելու պարտավորություն:

ՀՀ վճռաբեկ դատարանը որոշեց. Լիցենզիան հանդիսանում է բարենպաստ վարչական ակտ, քանի որ դրանով Կոռպերատիվին տրվել է հանքարդյունահանման գործունեությամբ զբաղվելու իրավունք: «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 60-րդ հոդվածի 2-րդ մասերի համաձայն՝ եթե վարչական ակտը պարունակում է այնպիսի դրույթներ, որոնք ակտի որևէ մասով ուժի մեջ մտնելը կապում են որոշակի պայմանների կամ հանգամանքների առաջացման հետ, ապա վարչական ակտն այդ մասով ուժի մեջ է մտնում համապատասխան պայմանի կամ հանգամանքի առաջացման պահից (պայմանով ակտ): Տվյալ դեպքում հիշատակված լիցենզիան տրվել է (ընդունել է) պայմանով, որի ուժի մեջ մտնելու հանգամանքը կապել է որոշակի պայմանի առաջացման հետ, այն է՝ համապատասխան լիցենզային պայմանագրի կնքման պահը: Սույն գործով հաստատված փաստերի հիման վրա ՀՀ բնապահպանության նախարարության հետ լիցենզային պայմանագիրը կնքվել է 29.07.2005 թվականին, հետևաբար Կոռպերատիվին տրված Լիցենզիան ուժի մեջ է մտել պայմանագրի կնքման պահին (29.07.2005 թվականին): «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդվածի 17.3-րդ կետի համաձայն՝ լիցենզավորման ենթակա գործունեություն իրականացնելու նպատակով լիցենզիաներ, արտոնագրեր (թույլտվություններ) **տալու** համար պետական տուրքը գանձվում է հետևյալ դրույքաչափերով՝ շինանյութերի արտադրության հումքի, այդ թվում՝ երեսապատման,

շինարարական քարերի, լցանյութերի և բալաստային հումքի յուրաքանչյուր հանքավայրի **օգտագործման (շահագործման) համար**՝ տարեկան բազային տուրքի 500-ապատիկի չափով:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ նշված հողվածով սահմանված «լիցենզիաներ տալու համար» ձևակերպումը պետք է մեկնաբանել նույն հողվածի՝ պետական տուրքի վճարման պարտավորության իմաստով: Վերջինիս իմաստով Կոռպերատիվն ունի պետական տուրքի վճարման պարտավորություն՝ **«օգտագործման (շահագործման) համար»**: Հետևաբար, Լիցենզիա **տալու** համար պետական տուրքը կարող է գանձվել այն դեպքում, երբ այն տալով արդեն իսկ վերապահվում է իրավունք (ապահովվում է իրավաբանական հնարավորություն) **«օգտագործման (շահագործման) համար»**: Տվյալ դեպքում Կոռպերատիվին նման իրավաբանական հնարավորություն է տրվել ոչ թե լիցենզիա տալու, այլև՝ պայմանագրի կնքման պահից: Այսպիսով, շարադրված նորմերի տրամաբանությունից ելնելով Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Կոռպերատիվին 10.10.2003 թվականին տրված Լիցենզիան ուժի մեջ է մտել լիցենզային պայմանագրի կնքման պահից՝ 29.07.2005 թվականից, հետևաբար տնտեսավարող սուբյեկտի մոտ տարեկան պետական տուրքերը վճարելու պարտավորությունն առաջացել է 29.07.2005 թվականից սկսած, որպիսի փաստից էլ հետևում է, որ մինչև 29.07.2005 թվականն ընկած ժամանակահատվածի համար պետական տուրքի գծով տույժեր չէին կարող հաշվարկվել:

63. Հասմիկ Փիլիկյան v. Չարենցավանի քաղաքապետարան, քաղ. գործ թիվ 3-744/Ա (բնակարան հատկացնելու և վնասների փոխհատուցման պահանջներով):

Խնդիրը. Արդյո՞ք բնակտարածության օգտագործման իրավունք ունեցող անձը կարող է այդ իրավունքն ինքնուրույն դադարեցնելու դիմաց սեփականատիրոջից պահանջել փոխհատուցում:

ՀՀ վճռաբեկ դատարանը որոշեց. Համաձայն Օրենսգրքի 225-րդ հոդվածի 5-րդ մասի՝ բնակելի շենքի կամ բնակարանի նկատմամբ սեփականության իրավունքն այլ անձի փոխանցելը հիմք չէ բնակելի տարածության օգտագործման իրավունքի դադարման համար: Օրենսգրքի 225-րդ հոդվածի տրամաբանությունից հետևում է, որ բնակտարածության օգտագործման իրավունքը ենթակա է սեփականատիրոջ կողմից փոխհատուցման միայն իր ցանկությամբ այդ իրավունքը դադարեցնելու պահանջի դեպքում: Հետևաբար, բնակտարածության օգտագործման իրավունք ունեցող անձը չի կարող այդ իրավունքն ինքնուրույն դադարեցնելու դիմաց սեփականատիրոջից պահանջել փոխհատուցում:

64. Կատյա Թորոսյան v. ՀՀ ոստիկանության և ՀՀ ԿԱ մաքսային ՊԿ, քաղ. գործ թիվ 3-438/ՎԴ (գույքի նկատմամբ որպես բարեխիղճ ձեռք բերողի սեփականության իրավունքը ճանաչելու և ավտոմեքենան կրկնակի մաքսազերծումից ազատելու պահանջներով):

Խնդիրը. Գույքի նախկին սեփականատիրոջ կողմից գույքը հետ պահանջելու պահանջի բացակայության պայմաններում արդյո՞ք դատարանը կարող է գնահատման առարկա դարձնել անձի բարեխիղճ ձեռքբերող լինելու հանգամանքը:

ՀՀ վճռաբեկ դատարանը որոշեց. ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 275-րդ հոդվածի առաջին մասի համաձայն՝ եթե գույքը հատուցմամբ ձեռք է բերվել այդ գույքն օտարելու իրավունք չունեցող անձից, որի մասին ձեռք բերողը չգիտեր և չէր կարող իմանալ (բարեխիղճ ձեռք բերող), ապա սեփականատերն իրավունք ունի ձեռք բերողից տվյալ գույքը պահանջել միայն այն դեպքում, երբ գույքը կորցրել է

սեփականատերը կամ այն անձը, ում այդ գույքի սեփականատերը հանձնել է տիրապետման, կամ այն հափշտակվել է մեկից կամ մյուսից, կամ նրանց տիրապետումից դուրս է եկել այլ ճանապարհով՝ անկախ նրանց կամքից: Վերոնշյալ հոդվածից հետևում է, որ այն առաջին հերթին.

- սահմանում է բարեխիղճ ձեռք բերողից գույքը հետ պահանջելու սեփականատիրոջ իրավունքի իրականացման շրջանակները, իսկ այնուհետև,

- նախատեսում մի շարք նախապայմանների պարտադիր և միաժամանակյա առկայությունը, որոնց դեպքում անձը կարող է համարվել բարեխիղճ ձեռք բերող:

Այսինքն՝ բողոք բերած անձի բարեխիղճ ձեռք բերող լինելու կամ չլինելու հարցը Վերաքննիչ դատարանը պետք է գնահատման առարկա դարձնել և դրա արդյունքում կարող էր մերժել բողոք բերած անձի սեփականության իրավունքի ճանաչման պահանջը միայն գույքի սեփականատիրոջ կողմից հայցի դեմ առարկելու և գույքը հետ պահանջելու պահանջ ներկայացնելու դեպքում, ինչը սույն քաղաքացիական գործով չի կատարվել:

65. Արմեն Բաղդասարյան և Արմենուհի Մկրտչյան v. Սեդա Շահինյան, Աբել Համբարձումյան և Լիանա Բաբայան, քաղ. գործ թիվ 3-673/ՎԴ (գործարքներն անվավեր ճանաչելու հակընդդեմ հայցով գործարքների անվավերության հետևանքներ կիրառելու, գումարի բռնագանձման և բռնագանձումը գույքի վրա տարածելու պահանջներով):

Խնդիրը. Արդյո՞ք պայմանագրի շինծու լինելն ինքնին ենթադրում է պայմանագրով նախատեսված գումարն իրականում վճարված չլինելու հանգամանքը:

ՀՀ վճռաբեկ դատարանը որոշեց. ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 306-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ շինծու գործարքը, այսինքն՝ մեկ այլ գործարքի քողարկման նպատակով կնքված գործարքը, առաջինը է: Սույն քաղաքացիական գործով վեճի առարկա պայմանագիրն անվավեր է ճանաչվել ամբողջությամբ՝ 2000 թվականի փետրվարի 21-ին Արմեն Բաղդասարյանի և Աբել Համբարձումյանի միջև կնքված տան առուվաճառքի պայմանագրին գրավի պայմանագրի իրավական գնահատական տալու հիմքով: Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ բոլոր դեպքերում գործարքի անվավերության, մասնավորապես առաջինը լինելու հարցը, իրավական հարց է: Այն որևէ կերպ չի ազդում գործով փաստերի վրա և չի կարող հիմք հանդիսանալ որևէ փաստ հաստատված կամ չհաստատված գնահատելու համար: ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 304-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գործարքի անվավերության դեպքում կողմերից յուրաքանչյուրը պարտավոր է մյուս կողմին վերադարձնել գործարքով ամբողջ ստացածը: Այս կանոնը սույն վեճի նկատմամբ կիրառելու համար Վերաքննիչ դատարանը պետք է գործով պարզեր, արդյո՞ք առաջինը պայմանագրով նախատեսված գումարն իրականում վճարված եղել է, թե ոչ:

66. Դոնարա Բակարյան, Համլետ, Աննա, Նարինե, Վանո Աղայաններ v. Սամվել և Կարեն Ստեփանյաններ, քաղ. գործ թիվ 3-795/ՎԴ (առուվաճառքի պայմանագիրն անվավեր ճանաչելու պահանջով):

Խնդիրը. Համատեղ սեփականության ներքո գտնվող գույքը համասեփականատերերից մեկի կողմից տնօրինելու մասին մյուս համասեփականատերերի տրված նոտարական կարգով վավերացված համաձայնությունն արդյո՞ք հավասարազոր է լիազորագրին, որն անձը տալիս է այլ անձի՝ երրորդ անձանց առջև ներկայացվելու համար:

ՀՀ վճռաբեկ դատարանը որոշեց. ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 198-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ համատեղ սեփականության ներքո գտնվող գույքը տնօրինվում

է բոլոր մասնակիցների համաձայնությամբ, անկախ այն բանից, թե մասնակիցներից ով է կնքում գույքը տնօրինելու գործարքը: ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 321-րդ հոդվածի համաձայն՝ լիազորագիր է համարվում գրավոր լիազորությունը, որն անձը տալիս է այլ անձի՝ երրորդ անձանց առջև ներկայացվելու համար: Ներկայացվողը ներկայացուցչի կողմից գործարքներ կնքելու համար գրավոր լիազորություն կարող է անմիջականորեն տալ համապատասխան երրորդ անձին: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 198-րդ հոդվածի իմաստով՝ համատեղ սեփականության ներքո գտնվող գույքը համասեփականատերերից մեկի կողմից տնօրինելու մասին մյուս համասեփականատերերի կողմից տրված նոտարական կարգով վավերացված համաձայնությունը հավասար է լիազորագրին, որը անձը տալիս է այլ անձի՝ երրորդ անձանց առջև ներկայացվելու համար: ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 318-րդ հոդվածի առաջին մասի ուժով՝ սույն գործով վիճարկվող գործարքը քաղաքացիական իրավունքներ և պարտականություններ է ստեղծել կողմերի համար, իսկ գույքի տնօրինման գործարքը ներկայացուցչի միջոցով իրականացնելը համասեփականատերերի կողմից գործարքն անվավեր ճանաչելու պահանջը բավարարելու հիմք չի կարող հանդիսանալ:

67. Ռեզմիկ Գրիգորյան v. Ռիմա Մխիթարյան և Ալվարդ Եղիկյան, քաղ. գործ թիվ 3-725/ՎԴ (ապօրինի զբաղեցրած բնակարանից վտարելու պահանջով):

Խնդիրը. Արդյո՞ք դատարանը, բավարարելով պատասխանողին վեճի առարկա բնակարանից վտարելու մասին սեփականատիրոջ հայցապահանջը, կարող է պատասխանողի վտարումը պայմանավորել պետական մարմնի կողմից որոշակի իրավունքներ տրամադրելու հանգամանքի հետ:

ՀՀ վճռաբեկ դատարանը որոշեց. ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 274-րդ հոդվածի համաձայն՝ սեփականատերն իրավունք ունի իր գույքը հետ պահանջել ուրիշի ապօրինի տիրապետումից: ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 274-րդ հոդվածը որևէ պայման չի նախատեսում սեփականատիրոջ համար իր գույքը հետ պահանջելիս: Սույն գործով հայցվորը դատարանին ներկայացրել է անվերապահ պահանջ՝ գույքն ուրիշի ապօրինի տիրապետումից պահանջելու մասին, հետևաբար Վերաքննիչ դատարանը չէր կարող պատասխանողների վտարումն իրականացնել որոշակի պայմաններով: Սույն քաղաքացիական գործով, Վերաքննիչ դատարանը վճռել է Ալվարդ Եղիկյանին և Ռիմա Մխիթարյանին վտարել վեճի առարկա հանդիսացող բնակարաններից՝ ՀՀ Շիրակի մարզպետարանի կողմից նրանց բնակարանի գնման վկայագիր հատկացվելուց հետո: Այսինքն՝ Դատարանն Ալվարդ Եղիկյանի և Ռիմա Մխիթարյանի վտարումը պայմանավորել է ՀՀ Շիրակի մարզպետարանի կողմից նրանց բնակարանի գնման վկայագիր տալու հանգամանքով, առանց այդ եզրահանգումն հիմնավորող օրենքը կամ այլ իրավական ակտը նշելու: Հետևաբար, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Վերաքննիչ դատարանի կողմից չի հիմնավորվել պատասխանողներին վտարելու և բնակարանի գնման վկայագիր տրամադրելու միջև **իրավական** կապի առկայությունը:

68. Արտյոմ Ասլանյան v. ՀՀ ԿԱ ՀՊԾ, քաղ. գործ թիվ 3-779/ՏԴ (2006 թվականի հունիսի 23-ի թիվ 1302776 ակտն անվավեր ճանաչելու պահանջով):

Խնդիրը. Արդյո՞ք հարկատուի կողմից ներկայացված գրավոր բացատրության առկայությունը հիմք է «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածը չկիրառելու համար:

ՀՀ վճռաբեկ դատարանը որոշեց. «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածը սահմանում է այն դեպքերը երբ անհնար է հարկային օրենսդրությամբ սահմանված

կարգով հաշվարկել հարկ վճարողի հարկային պարտավորությունը: Այդ դեպքերում հարկային տեսչությունը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով, հարկվող օբյեկտները և հարկային պարտավորությունները հաշվարկում է՝ հիմնվելով հարկ վճարողի ակտիվների, հարկ վճարողի իրացման շրջանառության ծավալների, հարկ վճարողի արտադրության և շրջանառության ծախսերի, գույքագրման և չափագրման տվյալների, օրենքով սահմանված կարգով երրորդ անձից ստացված տեղեկությունների, համանման պայմաններում գործող այլ սուբյեկտների միջև կիրառված գների և այլ ցուցանիշների վրա: Բողոք բերած անձի պատճառաբանությունն այն մասին, որ «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի կիրառման անհրաժեշտությունը բացակայում է, քանի որ Արտյոմ Ասլանյանի իրացման շրջանառությունը որոշելիս հաշվի է առնվել նրա կողմից տրված գրավոր բացատրությունը, անհիմն է, քանի որ «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ նույն հոդվածով նախատեսված ապօրինի գործունեության իրականացման դեպքում իրացման շրջանառությունը (համախառն եկամուտը) և ակտիվների արժեքները որոշվում են հարկային մարմինների կողմից՝ կիրառելով նույն օրենքի 22-րդ հոդվածի դրույթները: Տվյալ դեպքում օրենսդիրը, հղում կատարելով նույն օրենքի 22-րդ հոդվածին, ի նկատի է ունեցել այն դեպքը (ապօրինի գործունեության իրականացում), երբ անհնար է հարկային օրենսդրությամբ սահմանված կարգով հաշվարկել հարկ վճարողի հարկային պարտավորությունը: Հետևաբար, նման դեպքերում հարկային տեսչության համար ծագում է պարտավորություն՝ հաշվարկելու հարկվող օբյեկտները և հարկային պարտավորությունները Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով՝ հիմնվելով օրենքով սահմանված չափանիշների վրա:

01.06.2007թ.

69.«Զարգացման հայկական բանկ» ԲԲԸ-ի դիմումը, քաղ. գործ թիվ 3-726/ՎԴ (ՀՀ բանկերի միությանն առընթեր մշտապես գործող միջնորդ դատարանի 01.04.2005 թվականի վճռի հարկադիր կատարման համար կատարողական թերթ տալու պահանջով):

Խնդիրը. Միջնորդ դատարանի վճիռների կատարման համար կատարողական թերթ տրամադրելու մասին դիմումներով առաջին աստիճանի դատարանի որոշման դեմ վերաքննիչ բողոք ներկայացնելու համար պետական տուրքը պետք է գանձվի որպես գույքային, թե որպես ոչ գույքային պահանջի համար վճարվող պետական տուրք:

ՀՀ վճռաբեկ դատարանը որոշեց. «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի նույն հոդվածի 7-րդ մասի «ա» կետի համաձայն՝ միջնորդ դատարանների վճիռների հարկադիր կատարման կատարողական թերթ տալու մասին դիմումների համար պետական տուրքը գանձվում է գույքային պահանջով բռնագանձման ենթակա գումարի երկու տոկոսի չափով: Սույն դիմումի ներկայացման համար հիմք է ծառայել Հայաստանի բանկերի միությանն առընթեր մշտապես գործող միջնորդ դատարանի 01.04.2005 թվականի գումարի բռնագանձման մասին վճիռը: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ վճիռը կայացվել է գույքային պահանջի հիման վրա և «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի վերը նշված հոդվածով այդպիսի դիմումների ներկայացման համար ուղղակիորեն նախատեսված է բռնագանձվող գումարի 2 տոկոսի չափով

պետական տուրքի վճարման դրույքաչափ, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ առաջին աստյանի դատարան սույն դիմումի ներկայացման համար ենթակա է գանձման 8851 ԱՄՆ դոլարին համարժեք պետական տուրքի գումար: Նույն հոդվածի 8-րդ մասի «ա» կետի համաձայն՝ դատարանի վճիռների և որոշումների դեմ վերաքննիչ բողոքների համար պետական տուրքը գանձվում է գույքային պահանջի գործերով վերաքննիչ բողոքում նշված վիճարկվող գումարի 3 տոկոսի չափով, իսկ եթե վիճարկվում են առաջին աստյանի դատարանի կողմից բավարարված կամ չբավարարված պահանջներն ամբողջությամբ կամ բավարարված կամ չբավարարված պահանջները չեն վիճարկվում, ապա առաջին աստյանի դատարան հարուցված և բողոքարկվող հայցի հայցագնի 3 տոկոսի չափով, իսկ ոչ գույքային բնույթի պահանջի գործերով՝ բազային տուրքի տասնապատիկի չափով: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ չնայած այն հանգամանքին, որ սույն գործով ներկայացված դիմումի հիմքում ընկած է գումար բռնագանձելու մասին միջնորդ դատարանի վճիռը, այնուամենայնիվ կատարողական թերթի պահանջը ոչ գույքային բնույթի պահանջ է՝ անկախ այն հանգամանքից, թե կատարողական թերթի հիման վրա հարուցված կատարողական վարույթով ինչպիսի գործողություններ են նախատեսվում իրականացնել: Հետևաբար, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ միջնորդ դատարանի վճիռների կատարման համար կատարողական թերթ տրամադրելու մասին դիմումներով առաջին աստյանի դատարանի որոշման դեմ վերաքննիչ բողոք ներկայացնելու համար պետական տուրքը պետք է գանձվի բազային տուրքի տասնապատիկի չափով:

70. Աշխեն Աբրահամյան v. ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարություն, Երևանի քաղաքապետարան, Շենգավիթի թաղապետարան, քաղ. գործ թիվ 3-994/ՎԴ (բնակարան հատկացնելու կամ փոխարժեքը վճարելուն պարտավորեցնելու պահանջով):

Խնդիրը. Արդյո՞ք համայնքը կարող է պատասխանատվություն կրել Հայաստանի Հանրապետության պարտավորությունների համար:

ՀՀ վճռաբեկ դատարանը որոշեց. ՀՀ Սահմանադրության 104.1-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ համայնքը իրավաբանական անձ է, ունի սեփականության իրավունք և գույքային այլ իրավունքներ: ՀՀ Սահմանադրության 105-րդ հոդվածի համաձայն՝ պետական իշխանության մարմինների լիազորությունների առավել արդյունավետ իրականացման նպատակով դրանք միայն օրենքով կարող են պատվիրակվել տեղական ինքնակառավարման մարմիններին: ՀՀ Սահմանադրության 104-րդ և Տեղական ինքնակառավարման եվրոպական խարտիայի 3-րդ հոդվածի իմաստով համայնքային մարմինները հանդիսանում են ոչ թե պետական, այլ տեղական ինքնակառավարման մարմիններ, որոնք չպետք է պատասխանատվություն կրեն Հայաստանի Հանրապետության ստանձնած պարտավորությունների համար: Այսպիսով, Վճռաբեկ դատարանը հանգում է այն եզրակացության, որ իրավաբանական անձ համարվող համայնքը Հայաստանի Հանրապետության պարտավորությունների համար չի կարող պատասխանատվություն կրել:

71. Գարեգին Ղույումյան v. «Վանաձորի պետական մանկավարժական ինստիտուտ» ՊՈԱԿ, քաղ. գործ թիվ 3-161/ՎԴ («Վանաձորի պետական մանկավարժական ինստիտուտ» ՊՈԱԿ-ի խորհրդի ստեղծման մասին ռեկտոր Ռ.Եդոյանի 07.12.2002 թվականի թիվ 178/Կ և ինստիտուտի գիտական խորհուրդ ստեղծելու մասին թիվ 18/Կ հրամաններն անվավեր ճանաչելու պահանջով):

Խնդիրը. Արդյո՞ք վճարել բողոք բերելու համար պարտադիր նախապայման է բողոք բերած անձի իրավունքի խախտման փաստի առկայությունը:

ՀՀ վճարել նատարանը որոշեց. ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 223-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ ստորադաս դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճիռները վճարել դատարանում բողոքարկելու իրավունք ունեն՝

1) գործին մասնակցող անձինք,

2) գործի քննությանը չմասնակցած այն անձինք, որոնց իրավունքների և պարտականությունների վերաբերյալ կայացվել է գործն ըստ էության լուծող դատական ակտ:

Քաղաքացիական դատավարությունում տնօրինչականության սկզբունքի հաշվառմամբ վերը նշված հոդվածների վերլուծությունը հիմք է տալիս եզրահանգելու, որ անձը վճարել բողոք իրավասու է ներկայացնելու կոնկրետ իր նյութական կամ (և) դատավարական իրավունքի խախտման հիմքով: Այս դիրքորոշումը հիմնավորվում է նաև ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 231.1-րդ հոդվածի 1-ին մասի պահանջով, ըստ որի՝ վճարել բողոքը վերադարձվում է, եթե բողոքը բերել է այն անձը, որի իրավունքը չի խախտվել: Այսինքն՝ անձն իրավասու է վճարել բողոք բերել կոնկրետ իր իրավունքի խախտման փաստի հիմքով և բողոք բերած անձի իրավունքի խախտման փաստի առկայությունը վճարել բողոքը վարույթ ընդունելու, հետևաբար՝ վճարել դատարանում քննության առարկա դառնալու համար պարտադիր նախապայման է համարվում:

06.07.07թ.

72. «Գյումրու տեքստիլ» ԲԲԸ-ի անվճարունակության գործով կառավարիչ v. ՀՀ ԱՆ ԴԱՀԿ ծառայության Շիրակի մարզի ԴԱՀԿ բաժին և երրորդ անձ Արփինե Արշակյան, քաղ. գործ թիվ 3-1118/ՏԴ (08.08.2005 թվականի անշարժ գույքի առուվաճառքի պայմանագրերն անվավեր ճանաչելու պահանջով):

Խնդիրը. Արդյո՞ք ընկերությանն անվճարունակ ճանաչելը հիմք է անվճարունակությանը նախորդող ժամանակաշրջանում հրապարակային սակարկությունների միջոցով վաճառված գույքի առուվաճառքի պայմանագիրն անվավեր ճանաչելու համար:

ՀՀ վճարել նատարանը որոշեց. Սույն գործով հաստատված փաստերի հիման վրա հարկադիր կատարողի կողմից կազմակերպվել է Ընկերության գույքի աճուրդ վաճառք, որն ուղղված է եղել պարտատերերի պահանջների բավարարմանը: Վճարել բողոք բերած անձը մասնակցել է սակարկություններին և ճանաչվել հաղթող: Դրա մասին կազմվել և ստորագրվել է արձանագրություն, հաղթող ճանաչված անձը կատարել է սակարկությունների արդյունքում ձեռք բերված գույքի համար նախատեսված վճարումը: Ընդ որում վկայակոչված բոլոր գործողությունները կատարվել են մինչև Ընկերությանը անվճարունակ ճանաչելու մասին դատարանի վճիռն օրինական ուժի մեջ մտնելը: Նշված փաստերի առկայության պայմաններում ակնհայտ է, որ վեճի կողմը՝ բողոք բերած անձը, չի հանդիսանում Ընկերության պարտատեր: Ինչ վերաբերում է 08.08.2005 թվականին (Ընկերությանը անվճարունակ ճանաչելուց հետո) հարկադիր կատարողի՝ որպես վաճառող և Արփինե Արշակյանի՝

որպես գնորդ, միջև կնքված առուվաճառքի չորս պայմանագրերին, ապա այդ գործողությունը (պայմանագրի կնքումը) ուղղված չէ **պարտապանի նկատմամբ պահանջների բավարարմանը**: Հետևաբար, տվյալ դեպքում բացակայել է Օրենքի 41-րդ հոդվածի կիրառման իրավական հիմքը: Ավելին, նշված պայմանագրի կնքումը, Ընկերության որևէ գույքային կազմի փոփոխության չի հանգեցրել, քանի որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 464-րդ հոդվածի 5-րդ մասի ուժով աճուրդն անցկացնելու մասին կնքված արձանագրությունն արդեն հանդիսացել է կողմերի միջև կնքված պայմանագիր, որը սույն գործով չի վիճարկվում:

73. Արթուր Սմբատյան v. Ջեմմա Խաչատրյան, քաղ. գործ թիվ 3-825/ՎԴ (բնակարանի 1/2 բաժնեմասի նկատմամբ սեփականության իրավունքը ճանաչելու պահանջով):

Խնդիրը. Արդյո՞ք հայցվորի անհայտ բացակայող ճանաչվելը հիմք է ամուսնությունը դադարած ճանաչելու համար:

ՀՀ վճռաբեկ դատարանը որոշեց. Այն հանգամանքը, որ հայցվորը և պատասխանողը 1999 թվականից ի վեր համատեղ տնտեսություն չեն վարել, ապրել են առանձին, որ հայցվոր Արթուր Սմբատյանը չի կատարել երեխաների դաստիարակության, խնամքի, երեխաների ապրուստը հոգալու պարտականություններ, ինչպես նաև որ Երևան քաղաքի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն համայնքների առաջին ատյանի դատարանի 13.06.2005 թվականի օրինական ուժի մեջ մտած վճռով Արթուր Սմբատյանը ճանաչվել է անհայտ բացակայող, հիմք չէ ամուսնությունը դադարած ճանաչելու համար, քանի որ այդ հանգամանքները սուկ հիմք են ենթադրելու, որ ամուսինների միջև անձնական հարաբերությունները ինչ-որ ժամանակահատվածում բացակայել են, իսկ անհայտ բացակայող ճանաչված լինելու հանգամանքը որևէ ձևով չի սահմանափակում Արթուր Սմբատյանի գույքային իրավունքները: Ամուսնությունը որպես քաղաքացիաիրավական ինստիտուտ, կնքված համարվելով, պետական գրանցման պահից ամուսինների համար ստեղծում է օրենսդրությամբ նախատեսված որոշակի անձնական գույքային և ոչ գույքային իրավունքներ ու պարտականություններ՝ անկախ ամուսինների միջև առկա անձնական հարաբերությունների բնույթից:

74. Աթանես Ստեփանյան v. Ռազմիկ Ստեփանյան, երրորդ անձինք Գառնիի գյուղապետարան և ՀՀ ԿԱ ԱԳԿ ՊԿ Աբովյանի ՏՍ, քաղ. գործ թիվ 3-753/ՎԴ (սեփականության իրավունքի վկայականն անվավեր ճանաչելու և ժառանգական գույքի նկատմամբ սեփականատեր ճանաչելու պահանջներով):

Խնդիրը. Արդյո՞ք կտակի մասին չիմանալը կարող է ժառանգությունն ընդունելու ժամկետը բաց թողնելու հարգելի պատճառ հանդիսանալ:

ՀՀ վճռաբեկ դատարանը որոշեց. Սույն գործով ժառանգության բացման պահից առաջացել է իրավահարաբերություն, որի բովանդակության տարրերից մեկը եղել է Ա.Ստեփանյանի սուբյեկտիվ իրավունքը ժառանգելու տատի ունեցվածքը: Եվ այդ սուբյեկտիվ իրավունքի դադարման փաստը եղել է ժառանգության ընդունման համար օրենքով նախատեսված ժամկետի ավարտը: Հետևաբար, Ա.Ստեփանյանն իրավունք ունի դիմելու դատարան ժառանգությունն ընդունած համարվելու պահանջով՝ հիմք ընդունելով ժառանգության համար նախատեսված ժամկետի բաց թողման հարգելի պատճառները, քանի որ նրա սուբյեկտիվ իրավունքը գոյություն է ունեցել, սակայն դրա մասին նա օբյեկտիվ պատճառներով չի իմացել:

75. Զարեհ Երիցյան v. Կարինե Հարությունյան, Նոր Նորքի թաղապետարան, ՀՀ ԿԱ ԱԳԿ ՊԿ Արաբկիրի ՏՍ, քաղ. գործ թիվ 3-141/ՎԴ (01.09.1993 թվականի «Հրատարակիչ» ԲՇԿ-ի և 23.12.1993 թվականի Խորհրդային շրջգործկոմի թիվ 27/24 որոշումները, Ազատության նրբանցքի 2-րդ շենքի թիվ 58 բնակարանի վերաբերյալ Կարինե Հարությունյանին տրված սեփականության իրավունքի գրանցման վկայականն անվավեր ճանաչելու, ժառանգության ընդունման փաստը հաստատելու և բնակարանի սեփականատեր ճանաչելու պահանջներով):

Խնդիրը. Արդյո՞ք ժառանգությունն ընդունած ժառանգ համարվելու համար ժառանգական գույքը փաստացի տիրապետելը կամ կառավարելը պետք է ապացուցվի ժառանգի կողմից:

ՀՀ վճռաբեկ դատարանը որոշեց. ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1226-րդ հոդվածի 3-րդ մասը սահմանում է, որ եթե այլ բան ապացուցված չէ, ապա ժառանգությունը ժառանգի կողմից ընդունված է համարվում, երբ նա սկսում է փաստացի տիրապետել կամ կառավարել ժառանգական գույքը:

Նշված նորմը ենթադրում է, որ ոչ թե ժառանգական գույքը տիրապետող ժառանգը պետք է ապացուցի իր կողմից այդ գույքի տիրապետումը, այլ այդպիսի փաստը վիճարկող անձը: Հետևաբար սույն քաղաքացիական գործի շրջանակներում հակառակը հիմնավորող ապացույցների բացակայության պարագայում պետք է հաստատված համարել այն հանգամանքը, որ Զարեհ Երիցյանը տիրապետել է իր մորը՝ Վ.Երիցյանին պատկանող ժառանգական գույքի մասը, իսկ Օրենսգրքի 1225-րդ հոդվածի 3-րդ մասի ուժով նաև ամբողջը, և այդ գույքի մաս է կազմել նաև Վ.Երիցյանին պատկանող «Հրատարակիչ» բնակչինկոոպի փայը: Սույն քաղաքացիական գործի նյութերով հիմնավորվում է այն հանգամանքը, որ Վարդանուշ Երիցյանը հանդիսացել է «Հրատարակիչ» բնակչինկոոպի փայատեր և այդ հիմքով տիրապետել է Երևանի Ազատության նրբանցքի 2-րդ շենքի թիվ 58 բնակարանը: Հետևաբար կողպերատիվի փայը հանդիսացել է վերջինիս գույքային իրավունքը և մտնում է ժառանգության զանգվածի մեջ:

**Միաժամանակ, Վճռաբեկ դատարանն անդրադարձել է բնակարանային շինարարական կոոպերատիվների օրինակելի կանոնադրության 29-րդ հոդվածի մեկնաբանությանը, ըստ որի՝ կոոպերատիվի փայն ամբողջությամբ վճարած կոոպերատիվի անդամը գույքի նկատմամբ ձեռք է բերում սեփականության իրավունք:*

76. ՀՀ ԿԱ ՀՊԾ հանքարտադրողների ոլորտային ՀՏ v. «Գևորգ-Ա» ՍՊԸ, քաղ. գործ թիվ 3-918/ՏԴ (11.191.000 ՀՀ դրամ բռնագանձելու և հակընդդեմ հայցը՝ Թալինի տարածքային ՀՏ 2006 թվականի սեպտեմբերի 05-ի թիվ ՍՍ-148469 ստուգման ակտն անվավեր ճանաչելու պահանջներով):

Խնդիրը. 1. Արդյո՞ք ստուգման ընթացքը կասեցնելու մասին հրամանը վարչական ակտ է:

2. Արդյո՞ք հարկային մարմինը պարտավոր է ստուգման ընթացքը կասեցնելու մասին հրամանը տնտեսվարող սուբյեկտին հանձնել կամ այդ մասին նրան տեղյակ պահել:

ՀՀ վճռաբեկ դատարանը որոշեց.

1. «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդվածի համաձայն՝ վարչական վարույթը վարչական ակտ ընդունելուն ուղղված գործունեություն է: Նույն օրենքի 20-րդ հոդվածի համաձայն՝ վարչական վարույթը բաղկացած է միմյանց հետ փոխկապակցված՝ հարուցման, ընթացիկ և

եզրափակիչ փուլերից: Վարչական վարույթը հարուցվում է անձի (անձանց) դիմումի կամ վարչական մարմնի նախաձեռնության հիման վրա (հարուցման փուլ): Դիմումին կամ վարչական մարմնի նախաձեռնությանը համապատասխան իրականացվում են վարչական գործի քննարկման հետ կապված՝ սույն օրենքով նախատեսված գործառույթները (ընթացիկ փուլ): Վարչական վարույթը եզրափակվում է վարչական ակտի ընդունմամբ (եզրափակիչ փուլ): Վերոնշյալ հոդվածների համադրումից հետևում է, որ վարչական վարույթը մի գործընթաց է, որը կարող է բաղկացած լինել մի քանի փուլերից, և այդ բոլոր փուլերը հետապնդում են միասնական նպատակ, այն է՝ վարչական ակտի ընդունում:

Ինչ վերաբերում է ստուգման ընթացքը կասեցնելու մասին որոշմանը, ապա այն հանդիսանում է վարչական վարույթի ընթացքում ընդունվող ընթացակարգային, այլ ոչ թե վարչական ակտ, քանի որ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 53-րդ հոդվածի իմաստով վարչական ակտի բնորոշման հատկանիշ է համարվում արտաքին ներգործությունը, հանրային իրավունքի բնագավառում կոնկրետ գործի կարգավորման նպատակ հետապնդելը, և այդ ակտը պետք է ուղղված լինի անձանց համար իրավունքներ և պարտականություններ սահմանելուն, փոփոխելուն, վերացնելուն կամ ճանաչելուն: Հիմք ընդունելով վերոնշյալը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ վերստուգման ընթացքը կասեցնելու մասին հրամանը «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի իմաստով չի կարող գնահատվել որպես վարչական ակտ, քանի որ այն իրենից ներկայացնում է վարչական վարույթի իրականացմանն ուղղված գործառույթ և անմիջականորեն ուղղված չէ այլ անձանց համար իրավունքներ կամ պարտականություններ սահմանելուն, փոփոխելուն, վերացնելուն կամ ճանաչելուն:

2. «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ առանձին տեսակի վարչական վարույթների առանձնահատկությունները սահմանվում են օրենքներով և Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով:

Վերոնշյալ հոդվածից հետևում է, որ «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքով կարգավորվում է ստուգումների իրականացման բնագավառում վարչական վարույթի իրականացման կարգը և առանձնահատկությունները, իսկ նման առանձնահատուկ կարգավորման բացակայության պայմաններում գործում են «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի դրույթները: Հետևաբար, եթե ստուգման ընթացքի կասեցման հրամանի մասին ստուգվող տնտեսավարող սուբյեկտին տեղյակ պահելու հարկային մարմնի պարտավորության վերաբերյալ հարաբերությունները չեն կարգավորվում «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքով, ապա կիրառվում են «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի դրույթները: «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 49-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանված է վարչական վարույթի կասեցման մասին որոշումը եռօրյա ժամկետում վարչական վարույթի մասնակիցներին պատշաճ ձևով ուղարկելու վարչական մարմնի պարտականությունը, որպիսին չիրականացնելը խախտել է տնտեսավարող սուբյեկտի այդ ակտին տեղյակ լինելու իրավունքը: Հետևաբար, վճռաբեկ բողոքի հիմքում ընկած այն փաստարկը, որ «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 2-րդ մասում բացակայում է ստուգման ընթացքի կասեցման

հրամանի մասին Ընկերությանը տեղյակ պահելու հարկային մարմնի պարտավորությունը, հետևաբար և Ծառայությունը գործել է օրենքի շրջանակներում, անհիմն է:

77. ՀՀ ԿԱ ՀՊԾ Խորհրդային ՀՏ v. «Ուրարտու-Ալեն» ՍՊԸ, քաղ. գործ թիվ 3-951/ՏԴ (811 350 ՀՀ դրամ բռնագանձելու պահանջով):

Խնդիրը. Արդյո՞ք հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման խախտումների բացահայտմանն ուղղված դեպքերում իրականացվող ստուգումների համար Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված բացառությունը վերաբերում է միայն ստուգման հրամանը ստուգվող տնտեսվարող սուբյեկտին հանձնելու ժամկետին:

ՀՀ վճռաբեկ դատարանը որոշեց. Դատարանը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 3-րդ մասը, եզրակացրել է, որ օրենսդիրը հսկիչ-դրամարկղային մեքենաների շահագործման կանոնների պահպանության ստուգումն իրականացնելու համար սահմանել է որոշակի կարգ, այն է՝ տնտեսավարող սուբյեկտի ղեկավարին կամ նրան փոխարինող պաշտոնատար անձին ստուգման անցկացման մասին ծանուցելը, որը պետք է կատարվի եթե ոչ երեք աշխատանքային օր առաջ, ապա գոնե ստուգումը սկսելուց անմիջապես առաջ: Վերոնշյալ եզրահանգումը հակասում է «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 3-րդ մասի բովանդակությանը և չի համապատասխանում հոդվածի պահանջներին հետևյալ պատճառաբանությամբ. «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 86-րդ հոդվածի առաջին մասի համաձայն՝ իրավական ակտը մեկնաբանվում է դրանում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությամբ՝ հաշվի առնելով օրենքի պահանջները: Իրավական ակտի մեկնաբանությամբ չպետք է փոփոխվի դրա իմաստը: «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 3-րդ մասը տնտեսավարող սուբյեկտին հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման խախտումների բացահայտմանն ուղղված ստուգումներից առաջ ստուգման անցկացման մասին ծանուցելու պարտավորություն չի նախատեսում: Իսկ ինչ վերաբերում է վերոնշյալ հոդվածով նախատեսված հանձնարարագրի մեկ օրինակի վրա տնտեսավարող սուբյեկտի կողմից ստորագրելու դրույթին, որը նախատեսվում է որպես ստուգվող տնտեսավարող սուբյեկտի կողմից ստուգման մասին ծանուցված լինելը հավաստող հանգամանք, և որը Դատարանի կողմից մեկնաբանվել է որպես հսկիչ-դրամարկղային մեքենաների շահագործման կանոնների պահպանման վերաբերյալ ստուգում իրականացնելուց առաջ տնտեսավարող սուբյեկտին ստուգման անցկացման մասին ծանուցելու պարտավորություն, ապա իրականում հոդվածի այդ կարգավորումը հանդիսանում է ստուգումների անցկացման ընդհանուր կանոնի տրամաբանական շարունակությունը և չի վերաբերում հսկիչ-դրամարկղային մեքենաների շահագործման կանոնների ստուգման դեպքերի համար նախատեսված բացառությանը:

Վճռաբեկ դատարանը նման եզրահանգման համար հիմք է ընդունում նաև այն հանգամանքը, որ «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 3-րդ մասը պետք է մեկնաբանվի՝ հաշվի առնելով հսկիչ-դրամարկղային մեքենաների շահագործման կանոնների պահպանության հետ կապված ստուգումների առանձնահատուկ բնույթը

և դրանց արդյունավետ իրականացումն ապահովելու համար որոշ պայմանների պարտադիր առկայության անհրաժեշտությունը: Մասնավորապես, հաշվի առնելով այն հանգամանքը, որ հսկիչ-դրամարկղային մեքենաների շահագործման հետ կապված խախտումների բացահայտումը պահանջում է վարչական մարմնի արագ գործելու անհրաժեշտություն, հետևաբար նման ստուգում իրականացնելուց առաջ տնտեսավարող սուբյեկտին ստուգման անցկացման մասին ծանուցելու դեպքում անհնար կդառնա օրենքով նախատեսված ստուգման նպատակների իրագործումը:

78. «Բինամ» ՍՊԸ v. ՀՀ ԿԱ ՀՊԾ, քաղ. գործ թիվ 3-1123/ՏԴ (պետական մարմնի և դրա պաշտոնատար անձի օրենքին հակասող ակտերն անվավեր ճանաչելու պահանջով):

Խնդիրը. Արդյո՞ք հաշիվ-ապրանքագրում «ՍիՓիԹի» (փոխադրումը վճարված է մինչև) տերմինի նշված լինելը կարող է վկայել այն մասին, որ մատակարարը վճարել է փոխադրման ծախսերը մինչև նշանավայրը, իսկ պատվիրատու Ընկերությունը ազատված այդ ծախսերը փոխհատուցելու պարտականությունից:

ՀՀ վճարեկ դատարանը որոշեց. Հաշիվ-ապրանքագիրն ապրանքների առաքման դեպքում օգտագործվող հաշվարկային փաստաթուղթ է (ՀՀ կառավարության 1997 թվականի «ՀՀ տարածքում առաքվող կամ տրամադրվող կամ տեղափոխվող արտադրանքի, ապրանքների գրանցման մասին» թիվ 314 որոշում, կետ 6), որը ոչ թե սահմանում է ապրանքները մատակարարող Կազմակերպության պարտավորությունը, այլ մի շարք տեղեկությունների հետ միասին (ապրանքի տեսակ, քանակ, գին, տեղափոխման ձև և վայր) նշում է մատակարարի կողմից տեղափոխող անձին ապրանքի տեղափոխման համար արդեն իսկ վճարված գումարի չափը: Հետևաբար, հաշիվ-ապրանքագրում «ՍիՓիԹի» (փոխադրումը վճարված է մինչև) տերմինի նշված լինելը վկայում է զուտ այն մասին, որ մատակարարը վճարել է փոխադրման ծախսերը մինչև նշանավայրը, և միաժամանակ չի կարող վկայել այդ ծախսերի հատուցման առնչությամբ Ընկերության պարտավորության բացակայության մասին:

01.08.2007թ.

79. Զոյա Բաղդասարյան v. Հասմիկ Սահակյան, քաղ. գործ թիվ 3-1051/ՎԴ (գումարի բռնագանձման և հակընդդեմ հայցը՝ 13.10.2005 թվականին կնքված համաձայնության նկատմամբ առոչինչ պայմանագրի անվավերության հետևանքներ կիրառելու պահանջներով):

Խնդիրը. Արդյո՞ք առուծախի իրավահարաբերության բացակայության պայմաններում կարող են առաջանալ նախավճարի հետ կապված լրացուցիչ իրավահարաբերություններ:

ՀՀ վճարեկ դատարանը որոշեց. Վճարեկ դատարանը գտնում է, որ Վերաքննիչ դատարանը սխալ է գնահատել Հասմիկ Սահակյանի և Զոյա Բաղդասարյանի միջև 13.11.2005 թվականին կնքված «Միջնորդական» պայմանագիրը, այն պատճառաբանությամբ, որ կողմերի միջև ըստ էության կնքվել է խառը պայմանագիր, որը պարունակում է նաև անշարժ գույքի առուծախի պայմանագրի տարրեր: Ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 300-րդ հոդվածի 1-ին մասով

և 562-րդ հոդվածով՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ կողմերի միջև 13.11.2005 թվականին կնքված «Միջնորդական» պայմանագիրը անշարժ գույքի առուծախի մասով առաջին է, քանի որ պայմանագիրը նոտարական վավերացում չի ստացել: Համաձայն ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 304-րդ հոդվածի 1-ին մասի՝ անվավեր գործարքը չի հանգեցնում իրավաբանական հետևանքների, բացառությամբ այն հետևանքների, որոնք կապված են գործարքի անվավերության հետ: Նման գործարքն անվավեր է կնքելու պահից: Հետևաբար Հասմիկ Սահակյանի և Զոյա Բաղդասարյանի միջև անշարժ գույքի առուծախի հետ կապված պարտավորական իրավահարաբերություններ չեն առաջացել: Ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 395-րդ հոդվածի 1-ին մասով՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ նշված կողմերի միջև չէր կարող առաջանալ նաև նախավճարի հետ կապված լրացուցիչ իրավահարաբերություն, քանի որ բացակայում է հիմնական՝ առուծախի իրավահարաբերությունը:

80. Արմեն Հայրապետյան v. Ռուբեն Հայրապետյան, Արմեն Ճուղուրյան և թիվ 1 նոտարական գրասենյակ, քաղ. գործ թիվ 3-1179/ՎԴ (Ժառանգության իրավունքի վկայագիրը, սեփականության իրավունքի վկայականը, բնակարանի առուվաճառքի պայմանագիրն ու դրա հիման վրա տրված սեփականության իրավունքի վկայականն անվավեր ճանաչելու և բնակարանի սեփականատեր ճանաչելու պահանջի մասին և հակընդդեմ հայքը՝ բնակելի տարածության օգտագործման իրավունքը փոխհատուցմամբ դադարեցնելու և բնակարանից վտարելու պահանջով):

Խնդիրը. Միևնույն գույքի նկատմամբ կարող է արդյոք ճանաչվել մեկ այլ անձի սեփականության իրավունքը, եթե այդ գույքի նկատմամբ որպես միակ սեփականատեր ժառանգության իրավունքի վկայագրում նշված է մեկ այլ անձ:

ՀՀ վճռաբեկ դատարանը որոշեց. Սույն գործի փաստերի համաձայն՝ Արմեն Հայրապետյանը հոր՝ Արսեն Հայրապետյանի մահվանից հետո, նախկին ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 549-րդ հոդվածին համապատասխան ընդունել է ժառանգությունը: Ինչ վերաբերում է Ռուբեն Հայրապետյանին, ապա վերջինս նախկին ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 549-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված ժամկետում չի ընդունել ժառանգությունը: Ասվածը հիմնավորվում է նրանով, որ Արմեն Հայրապետյանին 28.09.1998 թվականին տրված ժառանգության իրավունքի վկայագրում Երևանի Լեփսիուսի փողոցի 14 շենքի 22-րդ բնակարանի միակ ժառանգ է ճանաչվել Արմեն Հայրապետյանը: ՀՀ քաղաքացիական վերաքննիչ դատարանը վերը նշված կանոնը չի պահպանել մասնավորապես Արմեն Հայրապետյանին 28.09.1998 թվականին տրված ժառանգության իրավունքի վկայագրի առումով: Այսպես՝ նշված վկայագրով հաստատվում է այն հանգամանքը, որ Երևանի Լեփսիուսի փողոցի 14 շենքի թիվ 22 բնակարանի միակ սեփականատեր է հանդիսանում Արմեն Հայրապետյանը: Հետևաբար այդ վկայագրի առկայության պայմաններում այլ անձը այլևս չէր կարող ժառանգության իրավունքի վկայագիր ստանալ նույն գույքի նկատմամբ:

81. Նունե Սահակյան v. «Իտարկո Քոնսթրաքշն» ՓԲԸ, քաղ. գործ թիվ 3-1161/ՏԴ (ապօրինի տիրապետումից «Շինտրաստ» ՓԲԸ-ի 102.050 հատ բաժնետոմսերը հետ պահանջելու և վեճի առարկայի նկատմամբ ինքնուրույն պահանջ ներկայացնող երրորդ անձ Ստեփան Ախոյանի հայցի ընդդեմ «Իտարկո Քոնսթրաքշն» ՓԲԸ-ի՝ սեփականատիրոջ իրավունքի խախտումը վերացնելու նպատակով «Իտարկո Քոնսթրաքշն» ՓԲԸ-ի՝ ապօրինի տիրապետումից «Շինտրաստ» ՓԲԸ-ի 102.050 հատ բաժնետոմսերը հետ պահանջելու պահանջներով):

Խնդիրը. Արդյո՞ք ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 2-րդ հոդվածի տառացի մեկնաբանությունը թույլ է տալիս ամբողջությամբ բացահայտելու ձեռնարկատիրական գործունեության էությունը: Որո՞նք են ձեռնարկատիրական գործունեության հիմնական բնորոշիչ հատկանիշները:

ՀՀ վճռաբեկ դատարանը որոշեց. Համաձայն ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 2-րդ հոդվածի՝ ձեռնարկատիրական է համարվում անձի ինքնուրույն, իր ռիսկով իրականացվող գործունեությունը, որի հիմնական նպատակը գույք օգտագործելուց, ապրանքներ վաճառելուց, աշխատանքներ կատարելուց կամ ծառայություններ մատուցելուց շահույթ ստանալն է: Ձեռնարկատիրական գործունեությունը բնորոշող վերը թվարկված հատկանիշների սահմանափակ մեկնաբանությունը հնարավորություն չի ստեղծում ամբողջությամբ բացահայտելու ձեռնարկատիրական գործունեության էությունը, քանի որ յուրաքանչյուր գործունակ անձ իր գործողություններն իրականացնում է ինքնուրույն, բնականաբար՝ կրելով դրանց հետևանքների ռիսկը: Փաստորեն, վերը նշված հոդվածի սահմանափակ տառացի մեկնաբանության արդյունքում անձի ցանկացած գործունեություն, որի արդյունքում վերջինս եկամուտ է ստանում (այդ թվում նաև քաղաքացու կենցաղային գործարքները) կարող է մեկնաբանվել որպես ձեռնարկատիրական գործունեության տարր:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ քաղաքացու կողմից իրականացվող գործունեության բնույթը (այդ թվում նաև՝ ձեռնարկատիրական լինելը) որոշելիս, անհրաժեշտ է օրենքով սահմանված պարտադիր հատկանիշների առկայությունը որոշել մասնավորապես հետևյալ հանգամանքները բացահայտելուց հետո.

1. արդյո՞ք գործունեությունն իրականացվել է անձի նախաձեռնությամբ և կամքով,
2. արդյո՞ք գործունեությունը կրում է պարբերական բնույթ,
3. արդյո՞ք գործունեությունն ի սկզբանե իրականացվել է հատկապես շահույթ (եկամուտ) ստանալու նպատակով,
4. արդյո՞ք գործունեությունն իրականացվում է որպես մասնագիտություն (արհեստ), որի արտաքին դրսևորումներից կարելի է համարել առևտրի իրականացման կամ ծառայությունների մատուցման հատուկ տարածքի (խանութ, սրահ, արհեստանոց, այլ արտադրական տարածք, հատուկ հարմարեցված տրանսպորտային միջոց), տեղեկատվական-գովազդային բնույթի միջոցառումների, ապրանքի մեծ քանակության և տեսականու առկայությունը,
5. արդյո՞ք քաղաքացու տնտեսական գործունեությունը (քաղաքացիաիրավական գործարքը) վերաբերում է նրա անձնական գույքին,
6. այլ առանձնահատուկ հատկանիշներ:

Ելնելով սույն գործի փաստերից և ձեռնարկատիրական գործունեության վերը նկարագրված մեկնաբանությունից՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով բաժնետեր քաղաքացու կողմից իր բաժնետոմսերի օտարումն ինքնին չի կարող մեկնաբանվել որպես ձեռնարկատիրական գործունեություն:

82. ՀՀ բնապահպանության նախարարության աշխատակազմի բնապահպանական պետական տեսչություն v. «Հոկտեմբերյանի ֆերոսպլավ գործարան» ՍՊԸ, քաղ. գործ թիվ 3-1021/ՏԴ (հօգուտ ՀՀ պետական բյուջեի 4.561.200 ՀՀ դրամ վնասի գումար բռնագանձելու պահանջով):

Խնդիրը. Արդյո՞ք մինչև նոր կառուցվող օբյեկտների շահագործման հանձնելը արտադրական հոսքագծի տեխնոլոգիական փորձարկումների և ոչ արտադրական

նշանակության գործունեության համար անհրաժեշտ է վնասակար նյութերի արտանետումների ժամանակավոր թույլտվություն:

ՀՀ վճարելի դատարանը որոշեց. ՀՀ կառավարության «Մթնոլորտային օդն աղտոտող նյութերի սահմանային թույլատրելի արտանետումների և ֆիզիկական վնասակար ներգործությունների սահմանային թույլատրելի մակարդակների նորմատիվների և արտանետումներ կատարելու թույլտվություններ տալու մասին» 30.03.1999 թվականի թիվ 192 որոշման 5-րդ կետով սահմանվել է, որ նոր կառուցվող, ընդլայնվող և վերակառուցվող օբյեկտների համար կազմակերպություններին այդ օբյեկտները սահմանված կարգով շահագործման հանձնելու օրվանից 7 օրվա ընթացքում՝ մեկ տարի ժամկետով տրվում են արտանետումներ կատարելու թույլտվություններ՝ դրանց կառուցման, ընդլայնման և վերակառուցման նախագծային լուծումների հիման վրա: Վճարելի դատարանը գտնում է, որ նորաստեղծ ձեռնարկությունը արտադրական գործունեություն ծավալելու համար այն սահմանված կարգով շահագործման հանձնելու օրվանից 7 օրվա ընթացքում պետք է ստանա արտանետումների թույլտվություն, որի առկայության պայմաններում միայն վերջինս կարող է արտադրական գործունեություն իրականացնել: Այդ թույլտվությունը տրվում է օբյեկտի կառուցման, ընդլայնման և վերակառուցման նախագծային լուծումների հիման վրա: Մինչև գործարանի սահմանված կարգով շահագործման հանձնելն իրականացված փորձարկումների, ոչ արտադրական նպատակներով իրականացված գործունեության համար թույլտվություն տրամադրում վերը նշված որոշմամբ նախատեսված չէ: Հետևաբար, Տնտեսական դատարանի եզրահանգումն այն մասին, որ առանց համապատասխան թույլտվության ընկերությունը չէր կարող իրականացնել որևէ գործունեություն՝ կապված գործարանի շահագործման հետ, այդ թվում՝ փորձարկումներ, Վճարելի դատարանն անհիմն է համարում:

83. Գառնիկ Գևորգյան v. Սուսաննա Մանուկյան, Լյուդմիլա Գարանցյան և Վանաձորի քաղաքապետարան, քաղ. գործ թիվ 3-1324/Ա (բնակության իրավունքը ճանաչելու պահանջով):

Խնդիրը. Որ դեպքում պատասխանողի վերջին հայտնի բնակության վայրի համայնքի ղեկավարին ծանուցում ուղարկելը, համայնքի կողմից դատական ծանուցագիրն ստանալը, ինչպես նաև այն ստանալու փաստը հավաստող մակագրությամբ դատարանի կողմից հաղորդագրություն ստանալը կարող է գործի քննությունը սկսելու համար նախապայման հանդիսանալ:

ՀՀ վճարելի դատարանը որոշեց. ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 94-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պատասխանողի փաստացի գտնվելու վայրն անհայտ լինելու դեպքում դատարանը գործը քննում է պատասխանողի վերջին հայտնի բնակության վայրի համայնքի ղեկավարի կամ նրա վերջին հայտնի աշխատավայրի տնօրինության կողմից ծանուցում ստանալու փաստը հավաստող մակագրությամբ հաղորդագրություն ստանալուց հետո: ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 94-րդ հոդվածի 1-ին մասից հետևում է, որ պատասխանողի վերջին հայտնի բնակության վայրի համայնքի ղեկավարին ծանուցում ուղարկելը, համայնքի կողմից դատական ծանուցագիրն ստանալը և այն ստանալու փաստը հավաստող մակագրությամբ դատարանի կողմից հաղորդագրություն ստանալը հանդիսանում է գործի քննությունը սկսելու համար նախապայման միայն այն դեպքում, երբ անհայտ է պատասխանողի փաստացի գտնվելու վայրը, այսինքն՝ երբ դատարանը պատշաճ կերպով կատարում է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 78-րդ հոդվածի 3-րդ մասով

նախատեսված՝ ծանուցագիրը գործին մասնակցող անձի նշած հասցեով ուղարկելու պարտավորությունը, որի արդյունքում պարզվում է, որ ծանուցվող անձն այդ հասցեում չի գտնվում: Մինչդեռ, սույն քաղաքացիական գործով դատարանի կողմից չի կատարվել ծանուցագիրը գործին մասնակցող անձի նշած հասցեով ուղարկելու պարտավորությունը, հետևաբար, վերջինիս համար դեռևս չի ծագել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 94-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված՝ համայնքի ղեկավարին կամ պատասխանողի վերջին հայտնի աշխատավայրի տնօրինությանը ծանուցելու պարտականությունը:

84. «Պրոմ Տեստ» ՍՊԸ v. ՀՀ ԿԱ ՀՊԾ, քաղ. գործ թիվ 3-1210/ՏԴ (ստուգման ակտն անվավեր ճանաչելու պահանջով):

Խնդիրը. Արդյո՞ք «Հայաստանի Հանրապետության կառավարության և Գերմանիայի Դաշնային Հանրապետության կառավարության միջև ֆինանսական համագործակցության մասին» Համաձայնագրի 3-րդ հոդվածով սահմանված նորմը Համաձայնագրով սահմանված ծրագրերն իրականացնող կազմակերպության հետ մատակարարման պայմանագիր կնքած անձանց ազատում է տվյալ պայմանագրով ստացված եկամուտներից շահութահարկ վճարելու պարտականությունից:

ՀՀ վճարելի դատարանը որոշեց. Համաձայնագրի 3-րդ հոդվածի համաձայն՝ նույն Համաձայնագրի 1-ին հոդվածի 1-ին պարբերության 1-ին և 2-րդ կետերում նշված գումարների հաշվին ֆինանսավորվող ապրանքների մատակարարումը, ներմուծումը և ծառայությունների մատուցումը ազատվում են բոլոր հարկերից, տուրքերից և պարտադիր այլ վճարումներից: Այսպես, Համաձայնագրի 1-ին հոդվածի 1-ին պարբերության 2-րդ ենթակետի համաձայն՝ «Տուրքերկույրոգի դեմ պայքարի միջտարածաշրջանային ծրագիր» և «Աջակցություն տուրքերկույրոգով հիվանդների համար բանտային հիվանդանոցի վերակառուցմանը» ծրագրերի նպատակն է Առողջապահության համաշխարհային կազմակերպության կողմից հանձնարարված՝ ԴՈՏՍ (DOTS) (բուժման կարճատև կուրս անմիջական հսկողության ներքո) ռազմավարությանը համապատասխան՝ տուրքերկույրոգի տարբեր ձևերի ախտորոշման և բուժման բարելավման, ինչպես նաև տուրքերկույրոգով հիվանդ կալանավորների բժշկական սպասարկմանն օժանդակելու միջոցով նպաստել տարածաշրջանում տուրքերկույրոգի շղթայի ընդհատմանը: Համաձայնագրի 3-րդ հոդվածի բովանդակությունից բխում է, որ հարկումից ազատվում են միայն Համաձայնագրով նախատեսված ծրագրերի շրջանակներում ՀՀ տարածքում գործող իրավաբանական և ֆիզիկական անձինք ՀՀ տարածք ապրանքների ներմուծման, ՀՀ-ում ապրանքների մատակարարման և ծառայությունների մատուցման դեպքում ծրագիր իրականացնող կազմակերպության հետ կնքվող այն պայմանագրերից առաջացող հարկերից, որոնք կապված են տվյալ ծրագրի իրականացման հետ և անհրաժեշտ են դրա իրականացման համար: Միջազգային պայմանագրի դրույթները մեկնաբանելիս, «ՀՀ միջազգային պայմանագրերի մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ պարբերության համաձայն, հաշվի են առնվում նաև կողմերի հետագա վարքը: Այսպես, ՀՀ կառավարության 26.02.2004 թվականի «Հայաստանի Հանրապետության և Համաշխարհային բանկի, Հայաստանի Հանրապետության և Գյուղատնտեսության զարգացման միջազգային հիմնադրամի, Հայաստանի Հանրապետության Կառավարության ու Գերմանիայի Դաշնային Հանրապետության կառավարության միջև կնքված միջազգային պայմանագրերով նախատեսված հարկային և մաքսային վճարների գծով արտոնությունների կիրառման կարգը հաստատելու մասին» որոշման (այսուհետ՝ Կարգ) 7-րդ կետի «բ» ենթակետի

համաձայն՝ Համաձայնագրով իրականացվող ծրագրերի շրջանակներում տրամադրվող միջոցների հաշվին Հայաստանի Հանրապետության ռեզիդենտների ստացած եկամուտները ներառվում են նրանց համախառն եկամտի կազմում, և դրանց մասով շահութահարկի պարտավորությունները որոշվում են «Շահութահարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված ընդհանուր կարգով: Տվյալ դեպքում, Համաձայնագրի կնքումից հետո ՀՀ կառավարության կողմից ընդունված որոշման վերոհիշյալ դրույթը համադրելով Համաձայնագրի 3-րդ հոդվածի բովանդակության և ողջ Համաձայնագրի նպատակի հետ, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Համաձայնագրում ձևակերպած «ապրանքների մատակարարումը, ներմուծումը և ծառայությունների մատուցումը ազատվում են բոլոր հարկերից, տուրքերից և պարտադիր այլ վճարումներից» ձևակերպումը չի կարող մեկնաբանվել որպես ՀՀ ռեզիդենտների ստացած եկամտից շահութահարկ վճարելու պարտավորությունից ազատող դրույթ, ինչի արդյունքում ստացված եկամուտների նկատմամբ տարածվում է ՀՀ հարկային օրենսդրությամբ սահմանված հարկման ընդհանուր կարգը:

85. Աննա Գաբրիելյան v. ՀՀ ոստիկանության Արմավիրի մարզային վարչություն, քաղ. գործ թիվ 3-859/ՎԴ (նախկին աշխատանքում վերականգնելու և աշխատավարձի բռնագանձման պահանջներով):

Խնդիրը. Արդյո՞ք աշխատանքից ազատելիս աշխատողին նախապես գրավոր ծանուցման պարտականության չկատարումը գործատուի համար կարող է առաջացնել աշխատողին նախկին աշխատանքում վերականգնելու պարտավորություն:

ՀՀ վճռաբեկ դատարանը որոշեց. Դատարանի կողմից կիրառվել է Օրենսգրքի 115-րդ հոդվածի 1-ին մասը, համաձայն որի՝ օրենսգրքի 113-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով նախատեսված հիմքերով աշխատանքային պայմանագիրը լուծելու դեպքում գործատուն պարտավոր է աշխատողին գրավոր ծանուցել ոչ ուշ, քան երկու ամիս առաջ: Հաշվի առնելով, որ գործով հիմնավորվել է, որ նշված կետով սահմանված՝ հայցվորին աշխատանքից ազատելու մասին պարտադիր ծանուցման պահանջը գործատուի՝ տվյալ դեպքում պատասխանողի, կողմից չի կատարվել, ապա սույն դեպքում դատարանի կողմից պետք է կիրառվեր նաև սույն հոդվածի 2-րդ մասը, ըստ որի՝ սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված ժամկետները չպահպանելու դեպքում գործատուն պարտավոր է աշխատողին վճարել տուժանք: Նշված հոդվածի բովանակությունից երևում է, որ աշխատանքից ազատելիս աշխատողին նախապես գրավոր ծանուցման պարտականությունների չկատարման համար նախատեսված է միայն աշխատողին տուժանքի վճարման գործատուի պարտավորությունը, այլ ոչ թե նախկին աշխատանքում վերականգնելու պարտավորություն:

86. Քնարիկ Հարությունյան v. Մաղաթել Էլոյան և Մամիկոն Սիմոնյան, քաղ. գործ թիվ 3-1270/ՎԴ (ընկերությունից հեռացնելու պահանջներով):

Խնդիրը. Արդյո՞ք ընկերության գույքը հաշվեկշռային գնից ցածր գնով օտարելը հիմք է ընկերության անդամներին ընկերությունից հեռացնելու համար:

ՀՀ վճռաբեկ դատարանը որոշեց. «Սահմանափակ ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ընկերության մասնակիցը, որը գումարային առումով տնօրինում է ընկերության առնվազն տասն տոկոս բաժնեմասը, իրավունք ունի դատական կարգով պահանջել ընկերության այլ մասնակցի հեռացումն ընկերությունից, եթե նա իր գործողություններով կամ անգործությամբ դժվարացնում կամ անհնարին է դարձնում ընկերության բնականոն գործունեությունը: Դատարանը,

սխալ մեկնաբանելով օրենքի 13-րդ և 46-րդ հոդվածները, հաշվի չի առել այն հանգամանքը, որ պատասխանողները, օտարելով ընկերության գույքը հաշվեկշռային գնից ցածր գնով, փաստորեն չեն գործել ի շահ ընկերության և իրենց գործողություններով ծանրացրել են ընկերության ֆինանսական վիճակը: Նման պայմաններում ակնհայտ է, որ պատասխանողների գործողությունները հակասել են ընկերության գործունեության նպատակներին, և դրանք կատարվել են հաշվի չառնելով ընկերության շահը՝ անձնական շահագրգռվածությունից ելնելով: Պատասխանողները փաստորեն իրենց գործողություններով վնաս են հասցրել ընկերությանը՝ անհնարին դարձնելով դրա հետագա գործունեությունը, ինչն էլ Օրենքի 22-րդ հոդվածի համաձայն՝ հիմք էր նրանց ընկերությունից հեռացնելու համար:

87. Մեյրան Մելիքյան v. ՀՀ ԿԱ ՀՊԾ Կոտայքի տարածքային տեսչություն, քաղ. գործ թիվ 3-1261/ՏԴ (պաշտոնատար անձի գործողությունները վիճարկելու պահանջով):

Խնդիրը. Որո՞նք են հաստատագրված վճար վճարող համարվելու պայմանները:

ՀՀ վճարեկ դատարանը որոշեց. «Հաստատագրված վճարների մասին» ՀՀ օրենքի տրամաբանությունից հետևում է, որ հաստատագրված վճար վճարելու համար հիմք է հանդիսանում տնտեսվարող սուբյեկտի հայտարարագիրը և հաստատագրված վճարով հարկման օբյեկտի առկայությունը: Այսպիսով, Վճարեկ դատարանը գտնում է, որ անձը չի կարող համարվել հաստատագրված վճար վճարող, քանի դեռ պահպանված չեն վերը նշված վավերապայմանները, մասնավորապես՝ առկա չէ համապատասխան գործունեության իրականացման փաստը և ներկայացված չէ հայտարարագիրը:

88. «Կենտրոն-Կանաչապատում» ՓԲԸ v. «Ֆիրմա-Ա» ԱԿ, քաղ. գործ թիվ 3-1152/ՏԴ (գումար բռնագանձելու և հողի վարձակալության պայմանագրերը վաղաժամկետ լուծելու պահանջներով):

Խնդիրը. Արդյո՞ք գույքը վարձակալին չհանձնելը և նրա կողմից չօգտագործելը կարող է առաջացնել վարձավճարի պարտավորություն:

ՀՀ վճարեկ դատարանը որոշեց. ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 613-րդ հոդվածի 1-ից 3-րդ մասերի համաձայն՝ վարձատուն պարտավոր է գույքը վարձակալին տրամադրել վարձակալության պայմանագրի պայմաններին և գույքի նշանակությանը համապատասխանող վիճակում: Գույքը վարձակալության է հանձնվում դրա բոլոր պատկանելիքներով ու դրան վերաբերող փաստաթղթերով (տեխնիկական անձնագիր, որակի հավաստագիր և այլն), եթե այլ բան նախատեսված չէ պայմանագրով: Եթե վարձատուն վարձակալության պայմանագրում նշված ժամկետում, իսկ եթե պայմանագրում այդպիսի ժամկետ սահմանված չէ՝ ողջամիտ ժամկետում, վարձակալին չի տրամադրել վարձակալության հանձնված գույքը, վարձակալը, սույն օրենսգրքի 414-րդ հոդվածին համապատասխան, իրավունք ունի նրանից պահանջել տրամադրելու այդ գույքը և հատուցելու կատարման ձգձգման հետևանքով իրեն պատճառված վնասները, կամ պահանջելու լուծելու պայմանագիրը և հատուցելու պայմանագիրը չկատարելու հետևանքով իրեն պատճառված վնասները: ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 616-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարձակալը պարտավոր է ժամանակին մուծել գույքն օգտագործելու համար վճարը (վարձավճարը): Այսինքն՝ վարձավճարը վճարվում է գույքի օգտագործման դիմաց, այնինչ հողամասերը պատասխանողին չեն հանձնվել, վերջինիս կողմից չեն օգտագործվել, հետևաբար հողամասերը պայմանագրերում սահմանված կարգով

Կոոպերատիվին չհանձնելու և դրանք իրենց նպատակային նշանակությանը համապատասխան չօգտագործվելու հետևանքով վարձավճար վճարելու պարտականությունը, ինչպես նաև վարձավճարը պայմանագրերով սահմանված ժամկետներում չվճարելու հետևանքով տույժեր հաշվարկելու հիմքերը չեն ծագել: Վճարել դատարանը գտնում է, որ հիմնավոր է բողոքի պատճառաբանությունն այն մասին, որ դատարանը Կոոպերատիվի մասով սխալ է կիրառել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 347-րդ հոդվածը, քանի որ հողի վարձակալության պայմանագրերով ստանձնած պարտավորությունների խախտում է տեղի ունեցել ոչ թե Կոոպերատիվի, այլ՝ Վարձատուի կողմից:

89. ՀՀ ԿԱ ՀՊԾ Շահումյանի ՀՏ v. Գայանե Առյան, քաղ. գործ թիվ 3-1150/ՏԴ (4.955.100 ՀՀ դրամ բռնագանձելու պահանջով):

Խնդիրը. 2000 թվականի եկամտահարկի գծով վճարման ենթակա հարկի գումարի չվճարման համար 2001 թվականի մայիսի 2-ից մինչև նույն թվականի հունիսի 11-ը հաշվարկված տույժն արդյո՞ք կարող է հիմք հանդիսանալ «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 30¹-րդ հոդվածի ուժով հարկային պարտավորությունների առաջացման համար, եթե հարկային մարմինը դատարան է դիմել 2006 թվականին:

ՀՀ վճարել դատարանը որոշեց. «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 301-րդ հոդվածի համաձայն՝ հարկային օրենսդրության խախտումներ հայտնաբերելու դեպքում հարկային պարտավորություններ չեն կարող առաջանալ, եթե տվյալ խախտումը հայտնաբերվել է այն կատարելու տարվան անմիջապես հաջորդող երեք տարին լրանալուց հետո: Վերոնշյալ հոդվածից հետևում է, որ հարկատուի մոտ հարկային պարտավորություններ չեն առաջանում, եթե վերջինիս կողմից թույլ տրված հարկային օրենսդրության խախտումը դրան հաջորդող երեք տարիների ընթացքում հարկային մարմնի կողմից չի հայտնաբերվում: Հետևաբար անհիմն է բողոք բերած անձի պատճառաբանություններն այն մասին, որ իր կողմից 2000 թվականի համար հաշվարկված հարկային պարտավորություններ չեն կարող առաջանալ, քանի որ Հարկային տեսչությունը դատարան է դիմել միայն 2006 թվականին: Սույն քաղաքացիական գործով ֆիզիկական անձի ստացած եկամուտների 2000 թվականի հայտարարագիրը Գայանե Առյանի կողմից ներկայացվել է 01.03.2001 թվականին, որով 2000 թվականի համար վճարման ենթակա եկամտահարկի գումարը կազմել է 3.170.500 (երեք միլիոն մեկ հարյուր յոթանասուն հազար հինգ հարյուր) ՀՀ դրամ: «Եկամտահարկի մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի առաջին մասի համաձայն՝ հարկատուն պարտավոր է եկամտահարկի գումարը վճարել պետական բյուջե մինչև տվյալ հարկային տարվան հաջորդող տարվա մայիսի 1-ը: Այսինքն՝ սույն քաղաքացիական գործով 2000 թվականի համար հաշվարկված եկամտահարկի գումարի վճարման պարտավորությունը Գայանե Առյանի կողմից խախտվել է 2001 թվականի մայիսի 02-ին: Հարկային տեսչության կողմից ներկայացված՝ Գայանե Առյանից բռնագանձման ենթակա գումարի հաշվարկման տեղեկանքի համաձայն՝ 2000 թվականի եկամտահարկի գծով վճարման ենթակա հարկի գումարի՝ 3.170.500 (երեք միլիոն մեկ հարյուր յոթանասուն հազար հինգ հարյուր) ՀՀ դրամ չվճարման համար 2001 թվականի մայիսի 2-ից մինչև նույն թվականի հունիսի 11-ը հաշվարկվել է տույժ: Այսինքն՝ վերոնշյալ տույժի հաշվարկը Վճարել դատարանը դիտում է որպես բավարար հիմք արձանագրելու համար, որ Գայանե Առյանի կողմից թույլ տրված խախտումը Հարկային տեսչության կողմից հայտնաբերվել է դեռևս խախտման առաջին օրը՝ 2001 թվականի մայիսի 2-ին:

05.09.2007թ.

90. Կարապետ Գրայան v. Ատոմ Ղազազյան, քաղ. գործ թիվ 3-1091/ՎԴ (գումարի բռնագանձման պահանջով):

Խնդիրը. Արդյո՞ք օրինական ուժի մեջ մտած դատավճռով հաստատված բոլոր հանգամանքներն են նախադատելի քաղաքացիական գործ քննող դատարանի համար:

ՀՀ վճռաբեկ դատարանը որոշեց. Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 52-րդ հոդվածի 3-րդ մասի իմաստով, օրինական ուժի մեջ մտած դատավճիռը նախադատելի (պրեյուդիցիալ) նշանակություն ունի միայն հանցագործության քաղաքացիա-իրավական հետևանքներին վերաբերող քաղաքացիական գործ քննող դատարանի համար՝ հետևյալ շրջանակներում.

1. կատարվել են արդյոք որոշակի գործողություններ (հանցագործության օբյեկտիվ կողմը) ,

2. արդյո՞ք այդ գործողությունները կատարվել են տվյալ անձի կողմից:

Այլ հացերով դատավճիռը քաղաքացիական դատավարության կարգով քննվող գործով պարտադիր չէ: Օրինակ՝ դատավճռով հաստատված հանցագործությամբ պատճառված վնասի չափը, ինչպես նաև այդ վնասի հատուցման պահանջի առկայությունը կամ բացակայությունը նախադատելի չէ և այդ հարցը ենթակա է ապացուցման ընդհանուր հիմունքներով, չնայած որ դրանք հաստատված են դատավճռով: Բացի այդ, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ հանցագործությամբ պատճառված վնասի հետ կապված հարաբերությունները և սույն քաղաքացիական գործով կողմերի միջև կնքված փոխառության գործարքով սահմանված հարաբերությունները, չնայած դրա մասնակիցների նույնականությանը, այնուամենայնիվ ըստ էության բովանդակային առումով այլ հարաբերություններ են: Այդ գործարքով ծագած պարտավորությունները կարող են դադարել միայն կատարմամբ և ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 27-րդ գլխով սահմանված այլ հիմքերով, որոնք սույն գործի փաստերի համաձայն առկա չեն: Հետևաբար, հանցագործությամբ պատճառված վնասի հետ կապված կողմերի համաձայնությունը չի կարող տարածվել կողմերի միջև կնքված այլ՝ քաղաքացիաիրավական բնույթի պարտավորությունների վրա:

91. Լևոն Նազարյան v. «Տնտեսվարող սուբյեկտների միջազգային համագումար» հասարակական կազմակերպության նախագահ Արմինե Թևոսյան, քաղ. գործ թիվ 3-1373/ՎԴ (բնակարանից վտարելու, վարձավճարի և վճարված պետական տուրքի գումարը բռնագանձելու պահանջներով):

Խնդիրը. Արդյո՞ք հասարակական կազմակերպության նախագահը պատասխանատվություն է կրում կազմակերպության պարտավորությունների համար:

ՀՀ վճռաբեկ դատարանը որոշեց. ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 346-րդ հոդվածի երրորդ մասի համաձայն՝ պարտավորությունը պարտականություններ չի

ստեղծում որպես կողմ չմասնակցող անձանց (երրորդ անձանց) համար: «Հասարակական կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածի երկրորդ մասի համաձայն՝ կազմակերպության հիմնադիրներն ու անդամները՝ կազմակերպությանը որպես սեփականություն հանձնած գույքի (ներառյալ անդամավճարները) նկատմամբ իրավունքներ չունեն: Նրանք պատասխանատու չեն կազմակերպության պարտավորությունների, իսկ կազմակերպությունը՝ իր հիմնադիրների և անդամների պարտավորությունների համար: Սույն գործի փաստերի համաձայն՝ վարձակալության պայմանագրի կողմ (վարձակալ) է հասարակական կազմակերպությունը, ուստի սույն գործարքով հասարակական կազմակերպության նախագահ Արմինե Թևոսյան ֆիզիկական անձի համար (որն ի դեպ, պարտավորության կողմ չէ) պարտականություններ չեն կարող առաջանալ:

92. Ելենա Տայան v. Սամվել Տայան, երրորդ անձ «Կենտրոն» նոտարական գրասենյակի նոտար Աիդա Աբրահամյան, քաղ. գործ թիվ 3-1193/ՎԴ (առուվաճառքի պայմանագիրը մասնակիորեն անվավեր ճանաչելու և հակընդդեմ հայցով՝ ընդհանուր գույքից բնեղենով իր բաժինն առանձնացնելու պահանջներով):

Խնդիրը. Արդյո՞ք բնակարանի վաճառքի և այգետնակի գնման գործարքների միայն ժամանակագրական հերթականությունը կարող է բավարար հիմք հանդիսանալ պնդելու, թե վերջին գործարքը կնքվել է նախորդի հասույթի հաշվին:

ՀՀ վճռաբեկ դատարանը որոշեց. Դատարանը, հաշվի չառնելով այն փաստը, որ քաղաք Երևան, Բաբայան փողոցի 16-րդ շենքի թիվ 29 հասցեի բնակարանը ձեռք է բերվել ամուսինների համատեղ կյանքի ընթացքում, առանց հիմնավոր ապացույցների հաստատված է համարել այն հանգամանքը, որ վիճելի այգետնակը ձեռք է բերվել բացառապես Ելենա Տայանի միջոցներով և հանդիսացել է Ելենա Տայանի սեփականությունը: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ բնակարանի վաճառքի և այգետնակի գնման գործարքների միայն ժամանակագրական հերթականությունը չի կարող հիմք հանդիսանալ պնդելու, թե վերջին գործարքը կնքվել է նախորդի հասույթի հաշվին: Գործում առկա ապացույցներով չի հիմնավորվել այն հանգամանքը, որ վիճելի այգետնակը ձեռք է բերվել միայն Ելենա Տայանի անձնական միջոցների հաշվին:

93. Կիմա Սարգսյան v. Հարություն Սարգսյան, Վարդուհի Սարգսյան և Անժելա Սարգսյան, քաղ. գործ թիվ 3-1224/ՎԴ (փաստացի տիրապետման եղանակով բնակարանի ժառանգությունն ընդունած համարելու պահանջով):

Խնդիրը. Արդյո՞ք ժառանգությունն ընդունելու վերաբերյալ դիմումը այլ վայրի նոտարական գրասենյակին հանձնելը կարող է որակվել որպես ժառանգության ընդունում:

ՀՀ վճռաբեկ դատարանը որոշեց. ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1226-րդ հոդվածի համաձայն՝ ժառանգությունն ընդունվում է ժառանգությունն ընդունելու կամ ժառանգական իրավունքի վկայագիր ստանալու մասին ժառանգի դիմումը ժառանգության բացման վայրի նոտարին հանձնելով: Տվյալ դեպքում Մոսկվա քաղաքի նոտարական գրասենյակին ժառանգությունն ընդունելու վերաբերյալ Հարություն Սարգսյանի դիմումի հանձնելն ինքնին հիմք չէ վերջինիս այդ եղանակով ժառանգությունն ընդունած ժառանգ ճանաչելու համար, քանի որ ՀՀ Գյումրի քաղաքում բացված ժառանգությունն ընդունելու վերաբերյալ դիմումը պետք է ներկայացվեր Գյումրու տարածքի նոտարին: Սակայն Վերաքննիչ դատարանը պատշաճ գնահատման չի արժանացրել այն հանգամանքը, որ Հարություն Սարգսյանը Մոսկվա քաղաքի նոտարական գրասենյակում

Ժառանգության բացումից հետո վեցամսյա ժամկետում հայտարարություն է տվել Սամվել Սարգսյանի ժառանգությունն ընդունելու վերաբերյալ, այսինքն՝ կատարել է ժառանգատուի գույքի փաստացի տիրապետմանը և կառավարմանն ուղղված կոնկյուդենտ գործողություններ՝ կոնկրետ նպատակ ունենալով իր տիրապետման տակ վերցնել ժառանգական գույքը: Եթե օրենսդիրը դիմում տալու եղանակով ժառանգության ընդունման հատուկ ընթացակարգ է նախատեսել (ժառանգությունն ընդունելու կամ ժառանգական իրավունքի վկայագիր ստանալու մասին դիմումը ժառանգության բացման վայրի նոտարին վեցամսյա ժամկետում հանձնելը), ապա փաստացի տիրապետման և կառավարման եղանակով ժառանգության ընդունումը կարող է տեղի ունենալ ժառանգի կողմից ամենատարբեր բնույթի ակտիվ գործողություններ սկսելու հիմքով, որպիսիք ուղղված են ժառանգատուի գույքի փաստացի տիրապետման և կառավարման հնարավորությունների ապահովմանը: ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 1226-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ եթե այլ բան ապացուցված չէ, ապա ժառանգությունը ժառանգի կողմից ընդունված է համարվում, երբ նա սկսում է փաստացի տիրապետել կամ կառավարել ժառանգված գույքը՝ ներառյալ, երբ ժառանգը միջոցներ է ձեռնարկել գույքը պահպանելու և այն երրորդ անձանց ոտնձգություններից կամ հավակնություններից պաշտպանելու համար:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1226-րդ հոդվածի 3-րդ մասի հիմքով ժառանգի կողմից ժառանգությունն ընդունած կամ չընդունած լինելու փաստի գնահատման հարցում էական նշանակություն ունի այն հանգամանքը, թե արդյոք առկա են ժառանգի կամքը և ցանկությունը՝ ընդունելու ժառանգությունը, թե ոչ, և արդյո՞ք ժառանգությունն ընդունելու համար ժառանգը միջոցներ (ակտիվ գործողություններ) է ձեռնարկել գույքը պահպանելու և այն երրորդ անձանց ոտնձգություններից կամ հավակնություններից պաշտպանելու համար: Սույն գործի փաստերից ելնելով, Հարություն Սարգսյանը վերը նշված ակտիվ գործողությունները կատարել է գույքը երրորդ անձանց ոտնձգություններից կամ հավակնություններից պաշտպանելու և դրա նկատմամբ իր տիրապետությունը հաստատելու նպատակով:

94. ՀՀ ԿԱ ԱԳԿ վարչություն v. անհատ ձեռնարկատեր Արմենուշ Ավետիսյան, քաղ. գործ թիվ 3-1340/ՏԴ (գույքի վերադարձման և հակընդդեմ հայցը՝ բաց թողնված ժամկետը հարգելի համարելու պահանջներով):

Խնդիրը. Արդյո՞ք ՀՀ պետական գույքի կառավարման նախարարությունը բոլոր դեպքերում կրում է տարածամկետ վճարումների պայմանով մասնավորեցված օբյեկտների գնորդներին վճարման ենթակա տարածամկետ չվճարված գումարները միանվագ մուծելու դեպքում կիրառվող գեղչի մասին տեղեկացնելու պարտականություն:

ՀՀ վճռաբեկ դատարանը որոշեց. Համաձայն ՀՀ պետական գույքի կառավարման նախարարության՝ ««ՀՀ պետական գույքի մասնավորեցման 2001-2003 թվականների ծրագրի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքից բխող առաջնահերթ միջոցառումների իրականացման կարգը և մասնավորեցման պայմանագրի փոփոխությունների ձևը հաստատելու մասին թիվ 016-Հ հրամանով հաստատված կարգի 2-րդ կետի «բ» ենթակետի՝ ՀՀ պետական գույքի կառավարման նախարարությունը առաջին կամ հերթական վճարումը կատարելու ժամանակ սուբյեկտներին տեղեկացնում է վճարման ենթակա տարածամկետ մնացած

գումարները միանվագ մուծելու դեպքում կիրառվող զեղչի մասին՝ պարզաբանելով օրենքով սահմանված կարգը: Նշված նորմի տրամաբանության համաձայն՝ սուբյեկտը պետք է ներկայանար առաջին կամ հերթական վճարում կատարելու համար, որպեսզի ՀՀ պետական գույքի կառավարման նախարարությունը վերջինիս տեղեկացներ վճարման ենթակա տարածամկետ մնացած գումարները միանվագ մուծելու դեպքում կիրառվող զեղչի մասին: Այսինքն՝ նշված հրամանը սահմանելով ՀՀ պետական գույքի կառավարման նախարարության պարտականությունը՝ առաջին կամ հերթական վճարումը կատարելու ժամանակ սուբյեկտներին վճարման ենթակա տարածամկետ մնացած գումարները միանվագ մուծելու դեպքում կիրառվող զեղչի մասին տեղեկացնելու պարտականությունը, չի նախատեսել սուբյեկտի կողմից վճարումներ կատարելու համար չներկայանալու դեպքում վերջինիս տեղեկացնելու պարտականություն:

95. Լաուրա Ամիրյան v. Եղիսաբեթ Ալավերդյան, Գոհար Պողոսյան, քաղ. գործ թիվ 3-1311/ՎԴ (Ժառանգությունն ընդունած ժառանգ-սեփականատեր ճանաչելու և Վիլեն Գաբրիելյան v. Եղիսաբեթ Ալավերդյան և Գոհար Պողոսյան՝ սեփականատիրոջ իրավունքի խախտումը վերացնելու, Եղիսաբեթ Ալավերդյան v. Լաուրա Ամիրյան, Վիլեն Գաբրիելյան, Լիլիթ Սևոյան և ՀՀ ԿԱ ԱԳԿ ՊԿ Զեյթուն ՏՄ՝ սեփականության իրավունքի գրանցումն անվավեր ճանաչելու, անշարժ գույքի առուվաճառքի պայմանագիրը, դրա հիման վրա կադաստրի միասնական մատյանում կատարված գրանցումը և սեփականության իրավունքի գրանցման վկայականն անվավեր ճանաչելու, գործարքի անվավերության հետևանքներ կիրառելու պահանջներով):

Խնդիրը. Արդյո՞ք գույքի բարեխիղճ ձեռք բերող հանդիսանալու հանգամանքն ինքնին հիմք է օրենքի պահանջներին հակասող գործարքն անվավեր ճանաչելու և գործարքի անվավերության հետևանքներ կիրառելու պահանջը մերժելու համար:

ՀՀ վճարեկ դատարանը որոշեց. ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 275-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ եթե գույքը հատուցմամբ ձեռք է բերվել այդ գույքն օտարելու իրավունք չունեցող անձից, որի մասին ձեռք բերողը չգիտեր և չէր կարող իմանալ (բարեխիղճ ձեռք բերող), ապա սեփականատերն իրավունք ունի ձեռք բերողից տվյալ գույքը պահանջել միայն այն դեպքում, երբ գույքը կորցրել է սեփականատերը կամ այն անձը, ում այդ գույքի սեփականատերը հանձնել է տիրապետման, կամ այն հափշտակվել է մեկից կամ մյուսից, կամ նրանց տիրապետումից դուրս է եկել այլ ճանապարհով՝ անկախ նրանց կամքից: Նշված հոդվածից հետևում է, որ գույքի բարեխիղճ ձեռք բերող հանդիսանալու հանգամանքն ինքնին հիմք չէ օրենքի պահանջներին հակասող գործարքն անվավեր ճանաչելու և գործարքի անվավերության հետևանքներ կիրառելու պահանջը մերժելու համար, քանի որ գույքի բարեխիղճ ձեռք բերողն օրենքով պաշտպանված չէ սեփականատիրոջ՝ գույքը վերադարձնելու պահանջից, եթե գույքը վերջինիս տիրապետումից դուրս է եկել անկախ նրա կամքից:

10.10.2007թ.

96. «Կոնվերս Բանկ» ՓԲԸ v. «Ս.Ս.ԱՆԱՍՏԱՍ» ՍՊԸ, Անաստաս Մեդրակյան, քաղ. գործ թիվ 3-1489/ՏԴ (պայմանագրերի լուծման և գումարի բռնագանձման պահանջներով):

Խնդիրը. Արդյո՞ք պայմանագրում օգտագործվող «վարկ» բառը դատարանի կողմից կարող է մեկնաբանվել որպես կետանցված (ժամկետանց) վարկ՝ հիմք ընդունելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 447-րդ հոդվածը:

ՀՀ վճռաբեկ դատարանը որոշեց. Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Համաձայնագրի 4.7 կետի Դատարանի մեկնաբանությունը չի համապատասխանում ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 447-րդ հոդվածին հետևյալ պատճառաբանությամբ. Համաձայնագրի 4.7 կետի համաձայն՝ նույն համաձայնագրով տրված վարկի մարումները սահմանված ժամկետում չկատարելու դեպքում վարկառուն վճարում է տուգանք՝ վարկի 20 տոկոսի չափով և յուրաքանչյուր ուշացված օրվա համար տույժ՝ վճարման ենթակա գումարի 0,1 տոկոսի չափով: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ «վարկ» բառի բովանդակությունը միանշանակ չի ընդունվում Բանկի և Ընկերության կողմից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 447-րդ հոդվածով նախատեսված պայմանագրի պայմանների մեկնաբանման կանոններով և դրանց կիրառման հերթականությամբ՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ պայմանագրի 4.7 կետը պետք է մեկնաբանել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 447-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված կանոնով, այսինքն՝ համադրելով մեկնաբանվող համաձայնագրի այլ պայմանների հետ: Այսպիսով, «վարկ» բառը օգտագործվում է Համաձայնագրի մի շարք կետերում այդ թվում 1.2, 1.3, 2.1, 3.1.1, 3.1.2, 4.1 և այլ կետերում: Նշված կետերի վերլուծությունից հետևում է, որ «վարկ» բառի տակ Համաձայնագրում նկատի է ունեցվում 20.000.000 (քսան միլիոն) ՀՀ դրամը: Մասնավորապես քննարկվող համաձայնագրի 1.2 կետի համաձայն. Սույն լրացուցիչ համաձայնագրով Բանկը «Վարկառուին» տրամադրում է 20.000.000 (քսան միլիոն) ՀՀ դրամ վարկ: Վարկը տրամադրվում է կանխիկ: Այսինքն՝ նշված կետում կողմերն առաջին անգամ «վարկ» բառն օգտագործելիս նշում են նրա չափը՝ քսան միլիոն ՀՀ դրամ: Նույն կետի երկրորդ նախադասության մեջ արդեն ուղղակի նշվում է «վարկ» բառը՝ առանց դրա մեծությունը նշելու՝ նկատի ունենալով առաջին նախադասության մեջ նշված մեծությունը: Նույնը վերաբերում է նաև մնացած կետերին, որտեղ «վարկ» ասելիս կողմերը նկատի են ունենում 20.000.000 (քսան միլիոն) ՀՀ դրամ: Միննույն ժամանակ Համաձայնագրի այն կետերում, որոնցում կողմերը ցանկանում են նշել տրամադրված վարկի միայն որոշակի մասը, վարկ բառի փոխարեն համաձայնագրում օգտագործվում է այլ ձևակերպում: Այսպես, Համաձայնագրի 4.7 կետում նախատեսված տույժի հաշվարկման բազան որոշելու համար օգտագործվում է հետևյալ ձևակերպումը. «... յուրաքանչյուր ուշացված օրվա համար տույժ վճարման ենթակա գումարի 0,1 տոկոսի չափով»: Այսինքն՝ տույժի հաշվարկման բազան վարկի այն մասն է, որն ըստ մարման ժամանակացույցի ենթակա էր վճարման, որը, սակայն, չի վճարվել: Վերոնշյալ փաստերի հիման վրա Վճռաբեկ դատարանը գտնում է, որ համաձայնագրում օգտագործվող «վարկ» բառի տակ հասկացվում է ողջ վարկի գումարը՝ 20.000.000 (քսան միլիոն) ՀՀ դրամը, իսկ բոլոր այն դեպքերում, երբ կողմերը նկատի են ունեցել կետանցված վարկի գումարը, համաձայնագրով «վարկ» բառի փոխարեն օգտագործվել է այլ ձևակերպում:

97. Յուրի Թունյան, Վանուշ Կարապետյան, Լևոն Մանուկյան, Վարդան Մանուչարյան, Գագիկ Գևորգյան v. Անահիտ Կոտիկյան, քաղ. գործ թիվ 3-1577/ՎԴ (պատասխանողին որոշակի գործողություններ կատարելուն պարտավորեցնելու և

հակընդդեմ հայցը՝ սեփականատիրոջ իրավունքի խախտումը վերացնելու նպատակով ինքնակամ կառուցված դուռը քանդելու պահանջներով):

Խնդիրը. Արդյո՞ք խախտվել են բազմաբնակարան շենքի սեփականատերերի իրավունքները, եթե պատասխանողն իր կառուցապատման աշխատանքներն իրականացնելիս դրանք չի քննարկել բազմաբնակարան շենքի սեփականատերերի ընդհանուր ժողովում, և չի կայացվել համապատասխան որոշում:

ՀՀ վճռաբեկ դատարանը որոշեց. Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործին մասնակցող անձինք, լինելով վիճելի բազմաբնակարան շենքի սեփականատերեր, շենքը կրող կառուցվածքները, նկուղները, մեկից ավելի շինություններ (բնակարաններ, շինություններ) սպասարկող և բազմաբնակարան շենքի միասնական ամբողջական սպասարկման համար նախատեսված մուտքերը, աստիճանավանդակներն ու տարածքները, որոնք օրենքով նախատեսված կարգով չեն հանդիսանում այլ անձանց սեփականություն տիրապետում են ընդհանուր բաժնային սեփականության իրավունքով: Հետևաբար, բազմաբնակարան շենքի շինությունների (բնակարաններ, ոչ բնակելի տարածքներ) սեփականատերերը շենքի վերը նշված գույքի նկատմամբ ունեն ՀՀ քաղաքացիական օրենսգրքով և այլ օրենքներով ընդհանուր բաժնային սեփականության մասնակիցների համար սահմանված բոլոր իրավունքները և կրում են բոլոր պարտականությունները՝ բացառությամբ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 195-րդ հոդվածով և 197-րդ հոդվածի 2-6-րդ կետով սահմանվածների: Մասնավորապես, բազմաբնակարան շենքի սեփականատերերն ունեն ընդհանուր համաձայնությամբ ընդհանուր գույքը տիրապետելու, օգտագործելու և կառավարելու իրավունք, որն իրականացվում է ընդհանուր բաժնային սեփականության կառավարման բարձրագույն մարմնի՝ շինությունների սեփականատերերի ժողովի միջոցով, որին պատկանում է բազմաբնակարան շենքի ընդհանուր բաժնային սեփականության կառավարման բնագավառում ցանկացած հարցի լուծման իրավունքը՝ բացառությամբ այն հարցերի, որոնք սույն օրենքի համաձայն համարվում են կառավարման մարմնի բացառիկ լիազորությունը: Սույն գործի փաստերի համաձայն՝ պատասխանողն ընդհանուր բաժնային սեփականություն հանդիսացող տարածքում ինքնակամ կերպով քանդել է բազմաբնակարան շենքի կրող պատը և իրականացրել նկուղի 2-րդ մուտքի բացման աշխատանքներ: Սկզբնական հայցով հայցվորները, հանդիսանալով բազմաբնակարան շենքի բնակարանների սեփականատերեր, պատասխանողի կողմից վերը նշված գործողությունների կատարման վերաբերյալ համաձայնություն չեն տվել, նշված աշխատանքների իրականացման հարցը չի քննարկվել՝ բազմաբնակարան շենքի սեփականատերերի ընդհանուր ժողովում և այդ ժողովը՝ որպես ընդհանուր բաժնային սեփականության կամ դրա մի մասի կառուցապատման կամ փոփոխման, գույքային իրավունքների (օգտագործման, վարձակալության և այլն) ձեռքբերման վերաբերյալ գործարքների, ընդհանուր բաժնային սեփականությունն առևտրային նպատակներով օգտագործելու համար նախատեսված տեղի սահմանման հարցերի լուծման բացառիկ լիազորությամբ օժտված օրենքով սահմանված մարմին համապատասխան որոշում չի կայացրել: Հետևաբար Վճռաբեկ դատարանը գտնում է, որ խախտվել է բազմաբնակարան շենքի սեփականատերեր հանդիսացող հայցվորների՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքով և «Բազմաբնակարան շենքի կառավարման մասին» ՀՀ օրենքով սահմանված՝ ընդհանուր բաժնային սեփականության կառավարման իրավունքը:

98. Վոլոդյա և Միշա Նիկողոսյաններ ընդդեմ v. Մանվել, Սոֆիկ, Մելանյա, Սամվել Սարիբեկյանների և Քնարիկ Աղազարյանի, քաղ. գործ թիվ 3-1435/ՎԴ (բնակտարածության օգտագործման իրավունքը փոխհատուցմամբ դադարեցնելու և բնակելի տնից վտարելու և հակընդդեմ հայցը՝ ձեռքբերման վաղեմության ուժով սեփականության իրավունքը ճանաչելու, ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագիրը և սեփականության իրավունքի վկայականը մասնակի անվավեր ճանաչելու, ինչպես նաև Մանվել Սարիբեկյան և Քնարիկ Աղազարյան v. Վոլոդյա և Միշա Նիկողոսյաններ՝ հողատարածքի նկատմամբ սեփականության իրավունքի գրանցումը մասնակի անվավեր ճանաչելու պահանջներով):

Խնդիրը. Որո՞նք են ձեռքբերման վաղեմության ուժով սեփականության իրավունքի ձեռքբերման վավերապայմանները:

ՀՀ վճռաբեկ դատարանը որոշեց. ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 172-րդ հոդվածի 5-րդ կետի համաձայն՝ սույն օրենսգրքով նախատեսված դեպքերում և կարգով՝ անձը կարող է սեփականության իրավունք ձեռք բերել սեփականատեր չունեցող գույքի նկատմամբ, ինչպես նաև այն գույքի, որի սեփականատերն անհայտ է, կամ որից սեփականատերը հրաժարվել է, կամ որի նկատմամբ սեփականության իրավունքը նա կորցրել է օրենքով նախատեսված այլ հիմքերով: Նույն օրենսգրքի 280-րդ հոդվածի համաձայն՝ քաղաքացին կամ իրավաբանական անձը կարող է հրաժարվել իրեն պատկանող գույքի սեփականության իրավունքից՝ այդ մասին գրավոր հայտարարելով կամ այնպիսի գործողություններ կատարելով, որոնք ակնհայտ վկայում են գույքի տիրապետումից, օգտագործումից և տնօրինումից նրա մեկուսացման մասին՝ առանց այդ գույքի նկատմամբ որևէ իրավունք պահպանելու մտադրության: ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 187-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ քաղաքացին կամ իրավաբանական անձն, որն անշարժ գույքի սեփականատերը չէ, սակայն այն տասը տարվա ընթացքում բարեխղճորեն, բացահայտ և անընդմեջ տիրապետում է որպես սեփական գույք, այդ գույքի նկատմամբ ձեռք է բերում սեփականության իրավունք (ձեռքբերման վաղեմություն): Վերոնշյալ հոդվածների համադրումից հետևում է, որ ձեռքբերման վաղեմությունն իրենից ներկայացնում է օրենքով նախատեսված որոշակի ժամկետի լրանալու և որոշակի պայմանների վրա հասնելու ուժով **մեկ անձի կողմից սեփականության իրավունքի ձեռքբերման**, իսկ մյուսի կողմից **այդ իրավունքի դադարման** միջոց: ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 187-րդ հոդվածի 1-ին մասի վերլուծությունից հետևում է, որ ձեռքբերման վաղեմության ուժով սեփականության իրավունքի ձեռքբերման համար անհրաժեշտ է մի շարք վավերապայմանների միաժամանակյա առկայությունը: Մասնավորապես դրանք են՝

1. տիրապետումը պետք է լինի բարեխղճ: Տիրապետման բարեխղճությունը գնահատվում է գույքը անձի փաստացի տիրապետմանը անցնելիս: Գույքն անձի փաստացի տիրապետմանը պետք է անցնի առանց որևէ բռնության գործադրման: Տիրապետողի մոտ պետք է առկա լինի այն համոզումները, որ նա գույքը ձեռք է բերում օրինական հիմքերով: Տիրապետումը պետք է հիմնված լինի այնպիսի փաստի հիման վրա, որը տիրապետողին կարող է տալ բավարար հիմքեր ենթադրելու, որ նա այդ գույքը տիրապետելու է որպես սեփականություն:

2. փաստացի տիրապետողը գույքը պետք է տիրապետի որպես սեփականը, այսինքն՝ գույքը փաստացի տիրապետողը պետք է մասնակցի գույքի կառավարմանը, հոգ տանի դրա պահպանման համար, ինչպես իր սեփական գույքի դեպքում: Անձը

պետք է գույքը տիրապետի ինչպես սեփականը նաև երրորդ անձանց հետ հարաբերություններում:

3. տիրապետումը պետք է լինի 10 տարի և անընդմեջ: Այսինքն՝ 10 տարվա ընթացքում գույքի տիրապետումը չպետք է ընդհատվի: Տիրապետումը կարող է ընդհատվել կամ տիրապետողի կամքով, երբ նա հրաժարվում է գույքի հետագա տիրապետումից (գույքը դուրս է գալիս նրա տիրապետումից), կամ գույքի սեփականատիրոջ կամ այլ անձանց գործողություններով, որոնք ուղղված են գույքը վերադարձնելուն:

4. տիրապետումը պետք է լինի բացահայտ, այսինքն՝ փաստացի տիրապետողը գույքը չպետք է տիրապետի երրորդ անձանցից գաղտնի եղանակով:

99. «Նանա-Ար» ԱԿ v. «Արդշինինվեստբանկ» ՓԲԸ և համապատասխանող «Արդշինինվեստբանկ» ՓԲԸ-ի «Գյումրի» մասնաճյուղ, քաղ. գործ թիվ 1538/ՏԴ (գործարքներն անվավեր ճանաչելու պահանջով):

Խնդիրը. Արդյո՞ք շարժական գույքի գրավի իրավունքը գրանցման չներկայացնելը հանգեցնում է պայմանագրի անվավերության:

ՀՀ վճռաբեկ դատարանը որոշեց. Շարժական գույքի կադաստրի վարման, շարժական գույքի գրավի, լիզինգի պայմանագրով վարձակալության իրավունքի գրանցման մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի համաձայն՝ շարժական գույքի գրավի իրավունքը գրանցման չներկայացնելն առաջացնում է նույն օրենքի 10-րդ և 11-րդ հոդվածներով նախատեսված հետևանքներ, եթե օրենքով այլ բան նախատեսված չէ: Իսկ 10-րդ հոդվածի համաձայն՝ տրանսպորտային միջոցների գրավի առավել վաղ գրանցված իրավունք ունեցող գրավատուն ավելի ուշ գրանցված իրավունք ունեցող գրավատուների և գրանցված իրավունք չունեցող գրավատուների հանդեպ գրավ դրված գույքի արժեքից լրիվ ծավալով բավարարում ստանալու նախապատվության իրավունք ունի: Նշված օրենքով սահմանված չէ շարժական գույքի գրավի իրավունքի պարտադիր գրանցում: Այսինքն՝ շարժական գույքի գրավի իրավունքը գրանցման չներկայացնելը չի հանգեցնում պայմանագրի անվավերության:

100. «Ուռենի» ՓԲԸ v. ՀՀ ԿԱ ՀՊԾ Շահումյանի ՀՏ, քաղ. գործ թիվ 3-1462/ՏԴ (22.01.2007թ. թիվ 1022992 ստուգման ակտն անվավեր ճանաչելու պահանջով):

Խնդիրը. Ո՞ր պահից է կրեդիտորական պարտքը համարվում անհուսալի:

ՀՀ վճռաբեկ դատարանը որոշեց. ՀՀ կառավարության 19.12.2002 թվականի թիվ 2052-Ն որոշմամբ հաստատված «Կազմակերպությունների (բացառությամբ բանկերի) դեբիտորական պարտքերի հնարավոր կորուստների պահուստի (պահուստաֆոնդի) ձևավորման դեբիտորական և կրեդիտորական պարտքերի անհուսալի ճանաչման և դուրսգրման» կարգի (այսուհետ՝ Կարգ) 21-րդ կետի համաձայն՝ կրեդիտորական պարտքը կետանցված դառնալու 366-րդ օրվանից համարվում է անհուսալի: Նույն Կարգի 4-րդ կետի համաձայն՝ կրեդիտորական պարտքը համարվում է կետանցված, եթե այն չի մարվել Կարգի 2-րդ կետում նշված հիմքերով (պայմանագրով, օրենսդրությամբ կամ օրենքով նախատեսված այլ հիմքերով) սահմանված ժամկետում, ընդ որում, կրեդիտորական պարտքի մարման ժամկետը փոխադարձ համաձայնությամբ երկարաձգվելու դեպքում կրեդիտորական պարտքը համարվում է կետանցված նոր ժամկետում չմարելու դեպքում, իսկ մարման ժամկետ սահմանված չլինելու և ցպահանջ կրեդիտորական պարտքի պարագայում՝ այդ պարտքն առաջացնող գործարքի (գործառնության փաստի) կատարման օրվան հաջորդող 60 օրվա ընթացքում չմարվելու դեպքում: Վկայակոչված նորմերում պարունակվող բառերի տառացի նշանակությունից ակնհայտ է, որ կրեդիտորական պարտքի

անհուսալիության մասին դատողություններ անելու համար անհրաժեշտ է ստույգ տեղեկություններ ունենալ այդ պարտքի ծագման հիմքերի և մարման ժամկետի մասին, որպիսի տեղեկությունների բացակայությունը բացառում է պարտքի կետանցման փաստի ճշգրիտ արձանագրման հնարավորությունը: Սույն գործի փաստերի համաձայն՝ վիճելի պարտքն անհուսալի է համարվել 2005 թվականի դրությամբ: Իսկ պարտքի կետանցը որոշելու համար անհրաժեշտ է նախ պարզել պարտքի մարման վերջնաժամկետը: Իսկ վերջնաժամկետը որոշելու համար, անհրաժեշտ է համապատասխան ապացույց, որով կարող է հաստատվել պարտքի տրամադրման օրվա և այն մարելու ճշգրիտ ժամկետը: Միայն այդպես է հնարավոր որոշել պարտքի կետանցի օրը, իսկ դրա հիման վրա՝ պարտքն անհուսալի դառնալու պահը:

101. Սամսոն Շահվերդյան v. Ջոյա Գրիգորյան, Մարգարիտա և Սոննա Շահվերդյաններ, քաղ. գործ թիվ 3-1345/ՎԴ (ժառանգության և սեփականության իրավունքի գրանցման վկայականներն անվավեր ճանաչելու, ժառանգ ճանաչելու և բնակարանից վտարելու պահանջներով):

Խնդիրը. Արդյո՞ք, քրեական հետախուզման մեջ գտնվելը կարող է դիտվել որպես ժառանգությունն ընդունելու ժամկետի բացթողնման հարգելի պատճառ:

ՀՀ վճռաբեկ դատարանը որոշեց. ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1187-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ժառանգությունը բացվում է քաղաքացու մահից հետո, 1227-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ժառանգությունը կարող է ընդունվել ժառանգության բացման օրվանից վեց ամսվա ընթացքում, իսկ նույն օրենսգրքի 1228-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ ժառանգությունն ընդունելու ժամկետը բաց թողած ժառանգի դիմումի հիման վրա դատարանը կարող է նրան ճանաչել ժառանգությունն ընդունած՝ հարգելի համարելով ժամկետը բաց թողնելու պատճառները, եթե պարզվի, որ ժամկետը բաց թողնելու պատճառ է դարձել այն հանգամանքը, որ ժառանգը չգիտեր, և պարտավոր չէր իմանալ ժառանգության բացման մասին ու պայմանով, որ ժառանգությունն ընդունելու ժամկետը բաց թողած ժառանգն այդ ժամկետը բաց թողնելու պատճառները վերացվելուց հետո՝ վեց ամսվա ընթացքում, դիմել է դատարան: Այսինքն՝ ժառանգությունն ընդունելու համար սահմանված ժամկետի բաց թողնելու պատճառը պետք է հիմնավոր լինի: Այն կարող է դատարանի կողմից հարգելի ճանաչվել, եթե ժառանգության բացման, կտակի առկայության մասին ժառանգը տեղյակ չի եղել կամ ժառանգության ընդունման համար օրենքով սահմանված ժամկետը բաց է թողել այլ հարգելի պատճառներով (ժառանգի անչափահաս լինելը, ժառանգի ծանր հիվանդությունը, նրա անօգնական վիճակում գտնվելը, անգրագիտությունը, իրավաբանական գործողություններ կատարելու հնարավորությունը բացառող կամ սահմանափակող պայմաններում երկարատև գործուղման մեջ գտնվելը և այլն):

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ քրեական հետախուզման մեջ գտնվելը չի կարող դիտվել որպես ժառանգությունն ընդունելու ժամկետի բացթողնման հարգելի պատճառ:

102. Մարուսյա Աբրահամյան, Ռուբիկ Միմոնյան v. Միխաել Միմոնյան, Ջուլիետա Հակոբջանյան, Արթուր Միմոնյան, Լարիսա Գևորգյան, Արման, Անահիտ և Ջուլիետա Միմոնյաններ, քաղ. գործ թիվ 3-1451/ՎԴ (բնակելի տարածության օգտագործման իրավունքը փոխհատուցմամբ դադարեցնելու և վտարելու և հակընդդեմ հայցը՝ Միխաել Միմոնյանի սեփականության իրավունքի գրանցման վկայականը մասնակի անվավեր ճանաչելու, ձեռքբերման վաղեմության ուժով փաստացի տիրապետմամբ

գրադեցրած հողամասի և շինության նկատմամբ իր և ընտանիքի անդամների սեփականության իրավունքը ճանաչելու պահանջներով):

Խնդիրը. Արդյո՞ք ձեռքբերման վաղեմության ուժով սեփականության իրավունք կարող է ձեռք բերվել միայն տիրագուրկ գույքի նկատմամբ:

ՀՀ վճռաբեկ դատարանը որոշեց. ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 187-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ քաղաքացին կամ իրավաբանական անձը, որն անշարժ գույքի սեփականատերը չէ, սակայն այն տասը տարվա ընթացքում բարեխղճորեն, բացահայտ և անընդմեջ տիրապետում է որպես սեփական գույք, այդ գույքի նկատմամբ ձեռք է բերում սեփականության իրավունք (ձեռքբերման վաղեմություն): Նույն օրենսգրքի 178-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ տիրագուրկ անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքը կարող է ձեռք բերվել ձեռքբերման վաղեմության ուժով: Վերոնշյալ հոդվածների համադրումից հետևում է, որ ձեռքբերման վաղեմության ուժով սեփականության իրավունքի ձեռքբերման ինստիտուտի կիրառությունը սահմանափակված չէ միայն տիրագուրկ գույքով: Այսինքն՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 178-րդ հոդվածի 3-րդ մասը չի կարող մեկնաբանվել որպես ձեռքբերման վաղեմության ուժով սեփականության իրավունքի ձեռքբերման ինստիտուտի կիրառությունը սահմանափակող դրույթ:

103. Մարտուն Ազատյան v. «Ախթալայի ԼՀԿ» ՓԲԸ, քաղ. գործ թիվ 3-1321/ՎԴ (աշխատավարձը և ապրանքային արժեքների գումարը բռնագանձելու պահանջով):

Խնդիրը. Արդյո՞ք, 2003 թվականին առաջացած աշխատանքային վեճի նկատմամբ կիրառելի է նախկին ՀՀ աշխատանքային օրենսգրքը:

ՀՀ վճռաբեկ դատարանը որոշեց. Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն աշխատանքային վեճի նկատմամբ կիրառելի է ՀՀ նախկին աշխատանքային օրենսգիրքը, քանի որ սույն աշխատանքային վեճը ծագել է դրա գործողության ժամանակահատվածում: Անհատական աշխատանքային վեճը համարվում է առկա, երբ անձը դիմում է իրավասու մարմնին՝ տարաձայնությանը լուծում տալու համար: Քաղաքացին իր ենթադրյալ իրավունքի պաշտպանության համար դատարան է դիմել 2003 թվականին, այսինքն՝ նախկին աշխատանքային օրենսգրքի գործողության ընթացքում: «Աշխատանքային օրենսգիրքը գործողության մեջ դնելու մասին» 09.11.2004 թվականի ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի համաձայն՝ աշխատանքային վեճերի նկատմամբ օրենսգրքի դրույթները տարածվում են աշխատանքային վեճն օրենսգիրքը գործողության մեջ դնելուց հետո առաջացած լինելու դեպքերի վրա: Այսինքն՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ 2003 թվականին առաջացած աշխատանքային վեճը ենթակա էր լուծման ՀՀ նախկին աշխատանքային օրենսգրքի պահանջներին համապատասխան:

104. «Սաշիկ և Սևակ եղբայրներ» ՍՊԸ v. ՀՀ ԿԱ ՀՊԾ, քաղ. գործ թիվ 3-1459/ՏԴ (30.03.2007 թվականի թիվ 1023220 ստուգման ակտի 1-ին և 4-րդ կետերն անվավեր ճանաչելու պահանջով):

Խնդիրը. Ո՞րն է համարվում ավելացված արժեքի հարկի հետ կապված հարկային պարտավորության ծագման պահը:

ՀՀ վճռաբեկ դատարանը որոշեց. «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ ավելացված արժեքի հարկ վճարողների կողմից հարկվող գործարքների (գործառնությունների) իրականացման դեպքում ապրանքների մատակարարման և ծառայությունների մատուցման, անհատույց (մասնակի հատուցմամբ) սպառման, ինչպես նաև դրա հետ կապված հարկային պարտավորության (ավելացված արժեքի հարկի հաշվարկման) ծագման

պահ է համարվում այն պահը, երբ ապրանքները առաքվել կամ հանձնվել են գնորդներին, կամ ծառայությունները մատուցվել են պատվիրատուներին: Վերոնշյալ հոդվածից հետևում է, որ ավելացված արժեքի հարկի հետ կապված հարկային պարտավորության ծագման պահը հանդիսանում է աշխատանքների արդյունքները հանձնելու և դրանք պատվիրատուի կողմից պատշաճ ընդունելու պահը:

105. Քնարիկ Գևորգյան v. Արտեմ Ադիլխանյան, քաղ. գործ թիվ 3-1519/ՎԴ (ալիմենտի բռնագանձման պահանջով):

Խնդիրը. Արդյո՞ք դատարանը ալիմենտի ամենամսյա վճարումների չափը որոշելիս կարող է սահմանել 1000 ՀՀ դրամը գերազանցող չափով ալիմենտ:

ՀՀ վճռաբեկ դատարանը որոշեց. ՀՀ ընտանեկան օրենսգրքի 69-րդ հոդվածի առաջին մասի համաձայն՝ նույն մասով նախատեսված ամենամսյա վճարումների չափը յուրաքանչյուր երեխայի համար չպետք է պակաս լինի սահմանված նվազագույն աշխատավարձի չափից: «Նվազագույն ամսական աշխատավարձի մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի համաձայն՝ ՀՀ օրենսգրքերի, օրենքների, ՀՀ Նախագահի հրամանագրերի, ՀՀ կառավարության և վարչապետի որոշումների, նախարարությունների և գերատեսչությունների, տեղական ինքնակառավարման մարմինների, առանձին իրավաբանական անձանց ակտերի իմաստով որպես հաշվարկային հիմք չի կարող ընդունվել նույն օրենքով սահմանված նվազագույն ամսական աշխատավարձը: Նշված ակտերում որպես հաշվարկային հիմք պահպանվում է գործող 1000 ՀՀ դրամը: Վերոնշյալ հոդվածների համադրումից հետևում է, որ ալիմենտի ամենամսյա վճարումների չափը որոշելիս դատարանը որպես հաշվարկային հիմք պետք է ընդունի 1000 ՀՀ դրամը, այսինքն՝ 1000 ՀՀ դրամը ալիմենտի նվազագույն չափն է և ոչ թե առավելագույնը: Հիմք ընդունելով վերոնշյալը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ «Նվազագույն ամսական աշխատավարձի մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածը սույն քաղաքացիական գործով կիրառելի չէ, քանի որ դրա կիրառման անհրաժեշտությունը ծագում է բոլոր այն դեպքերում, երբ ՀՀ ընտանեկան օրենսգրքի 69-րդ հոդվածով նախատեսված ալիմենտի հաշվարկման կանոնի կիրառմամբ ալիմենտի չափը որոշելիս ամենամսյա վճարումների չափը յուրաքանչյուր երեխայի համար սահմանված նվազագույն աշխատավարձի չափից պակաս է դառնում:

09.11.2007թ.

106. Մամո Ամոյան v. «Ջեներալ տրանսուորդ մենյուֆեքչրինգ քամփնի» ՓԲԸ, քաղ. գործ թիվ 3-1603/ՎԴ (աշխատավարձը և հաշվարկված տոկոսները բռնագանձելու պահանջով):

Խնդիրը. Արդյո՞ք աշխատավարձը ժամանակին չվճարելու դեպքում չվճարված աշխատավարձի համար տոկոսներն ենթակա են հաշվարկման ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածով սահմանված կարգով:

ՀՀ վճռաբեկ դատարանը որոշեց. ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1-ին հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ ընտանեկան, աշխատանքային, բնական պաշարների օգտագործման և շրջակա միջավայրի պահպանության հարաբերությունները կարգավորվում են քաղաքացիական օրենսդրությամբ և այլ իրավական ակտերով, եթե այլ բան նախատեսված չէ ընտանեկան, աշխատանքային, հողային, բնական և այլ

հատուկ օրենսդրությամբ: Սահմանված կարգով և ժամկետներում աշխատողին աշխատանքի վարձատրության՝ գործատուի պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման դեպքում վճարման ենթակա տուժանքի չափի և վճարման կարգի վերաբերյալ կանոններ ՀՀ աշխատանքային օրենսդրությամբ սահմանված չեն, հետևաբար, այդ իրավահարաբերությունների կարգավորման նկատմամբ պետք է կիրառվեն ՀՀ քաղաքացիական օրենսգրքի համապատասխան դրույթները: ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ուրիշի դրամական միջոցներն ապօրինի պահելու, դրանք վերադարձնելուց խուսափելու, վճարման այլ կետանցով դրանք օգտագործելու, կամ այլ անձի հաշվին անհիմն ստանալու կամ խնայելու դեպքում այդ գումարին վճարվում են տոկոսներ: Տոկոսները հաշվարկվում են կետանցի օրվանից մինչև պարտավորության դադարման օրն ըստ համապատասխան ժամանակահատվածների համար Հայաստանի հանրապետության կենտրոնական բանկի սահմանած բանկային տոկոսի հաշվարկային դրույթների: «Աշխատանքի վարձատրության մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի համաձայն՝ աշխատավարձը գործատուների կողմից աշխատողներին նրանց կատարած աշխատանքի դիմաց դրամական կամ ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ ձևերով կատարվող վճարումն է: Հայաստանի Հանրապետությունում յուրաքանչյուր աշխատող ունի իր կատարած աշխատանքի համար աշխատավարձ ստանալու իրավունք: Աշխատավարձի վճարման օրվանից աշխատողի մոտ ծագում է գործատուից այն պահանջելու իրավունք: Այսինքն՝ աշխատավարձի վճարման համար սահմանված ժամկետից դրա նկատմամբ ծագում է աշխատողի սեփականության իրավունքը (սույն իրավական խնդրի վերաբերյալ նմանատիպ դիրքորոշում է հայտնել նաև ՀՀ սահմանադրական դատարանը՝ 04.10.2006 թվականի թիվ ՄԴՈ-649 որոշմամբ), հետևաբար, սույն գործով Ընկերությունը, ժամանակին չվճարելով հայցվորի աշխատավարձը, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածի իմաստով ապօրինի պահել է վերջինիս դրամական միջոցները (տես օրինակ՝ Մարտուն Ազատյան ընդդեմ «Ախթալայի ԼՀԿ» ՓԲԸ, 10.10.2007թ., քաղաքացիական գործ 03-1321(ՎԴ) (աշխատավարձը և ապրանքային արժեքների գումարը բռնագանձելու պահանջով)): Հիմք ընդունելով վերոնշյալը, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ գործատուի և աշխատողի միջև կնքված՝ աշխատանքի վարձատրության չափն ու պայմանները սահմանող պայմանագրով և իրավական այլ ակտերով աշխատավարձի չվճարման համար տոկոսների այլ չափ սահմանված չլինելու պայմաններում, Ընկերության կողմից չվճարված աշխատավարձի նկատմամբ տոկոսներն ենթակա են հաշվարկման ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածով սահմանված կարգով:

107. Միլվա Խաչատուրովա v. «ՎՏԲ-Հայաստան բանկ» ՓԲԸ, ՀՀ սոցիալական ապահովագրության հիմնադրամ, քաղ. գործ թիվ 3-1046/ՎԴ (ծառայությունների վճարովի մատուցման պայմանագիրը մասնակի անվավեր ճանաչելու պահանջով):

Խնդիրը. Արդյո՞ք Հիմնադրամն իրավունք ունի որոշելու, թե հաջորդ ամսվա որ օրերին պետք է կենսաթոշակատուն ստանա իր կենսաթոշակը:

ՀՀ վճռաբեկ դատարանը որոշեց. Կենսաթոշակի վճարումը սեփականատիրոջը սեփականությունը փոխանցելու միջոց է: Կենսաթոշակը սոցիալական ապահովության միջոց լինելով հանդերձ կենսաթոշակատուի սեփականությունն է: Հետևաբար, անհրաժեշտություն է ծագում դիտարկել Պայմանագրի վիճարկվող դրույթները նաև Սահմանադրության 8-րդ և 31-րդ հոդվածների պահանջներից ելնելով, որոնցից առաջինը հռչակում է սեփականության իրավունքի ճանաչումն ու պաշտպանությունը, իսկ երկրորդն հռչակում է անձին

սեփականությունից զրկելու անթույլատրելիությունը: Այս հարցի վերաբերյալ նույնպիսի դիրքորոշում ունի նաև Եվրոպական դատարանը: Այսպես՝ Եվրոպական դատարանն, անդրադառնալով վերոհիշյալ խնդրին, արտահայտել է հետևյալ տեսակետը. Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) 1-ին արձանագրության 1-ին հոդվածի առաջին մասում նախատեսված «սեփականություն» հասկացությունն ունի ինքնուրույն նշանակություն, որը չի հանգեցվում ֆիզիկական իրերի նկատմամբ սեփականության իրավունքին և որը կախված չէ ներպետական իրավունքի ձևական որակումներով: Գույքային մի շարք իրավունքներ և շահեր նույնպես կարող են դիտարկվել որպես «սեփականության իրավունք» (տե՛ս՝ Բեյեյլերն ընդդեմ Իտալիայի գործով Դատարանի 05.01.2000 թվականի վճռի 100-րդ կետը):

Մեկ այլ գործով Եվրոպական դատարանը նշել է, որ գործող օրենսդրությամբ սահմանված չափով նպաստ ստանալու իրավունքը Կոնվենցիայի 1-ին արձանագրության առաջին հոդվածի իմաստով հանդիսանում է գույքային իրավունք: (տե՛ս՝ Գայգուսուզն ընդդեմ Ավստրիայի գործով Դատարանի 31.08.1996 թվականի վճռի 41-րդ կետը):

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի 55-րդ հոդվածի 1-ին մասը պետք է մեկնաբանել վերոշարադրյալի լույսի ներքո, այսինքն, ոչ թե որպես կենսաթոշակառուի՝ յուրաքանչյուր ամսվա կենսաթոշակը կոնկրետ որոշակի ժամկետում ստանալու իրավունք, այլ որպես իրավասու պետական մարմնի՝ ոչ ուշ քան մինչև տվյալ ժամկետի ավարտը կենսաթոշակի գումարը թոշակառուին վճարելու պարտականություն: Տվյալ դեպքում, հաշվի առնելով այն հանգամանքը, որ Սիլվա Խաչատուրովան արդեն իսկ սեփականություն իրավունք ունի իրեն հասանելիք կենսաթոշակի նկատմամբ, ուստի տվյալ ձևակերպումը չի կարող մեկնաբանվել որպես Սիլվա Խաչատուրովայի պարտականությունը հենց տվյալ ամսին ստանալ հասանելիք գումարը և սահմանափակել վերջինիս՝ տվյալ ժամկետն անցնելուց հետո իր սեփականությունն ստանալու իրավունքը: Հետևաբար, Վճռաբեկ դատարանը ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 305-րդ հոդվածի խախտման վերաբերյալ վճռաբեկ բողոքի փաստարկը հիմնավոր է համարում:

108. «Նիյազյանների ընտանիք» ՍՊԸ v. ՀՀ ԿԱ ՀՊԾ, քաղ. գործ թիվ 3-1585/ՏԴ (ստուգման ակտն անվավեր ճանաչելու և հակընդդեմ հայցը՝ գումար բռնագանձելու պահանջներով):

Լնդիքը. Արդյո՞ք «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի հիման վրա հարկվող օբյեկտը կամ հարկային պարտավորությունը որոշելիս ապրանքի վաճառքի գնի և ապրանքի մաքսային արժեքի տարբերությունը կարող է դիտվել որպես հարկվող օբյեկտ (ապրանքային մնացորդ):

ՀՀ վճռաբեկ դատարանը որոշեց. 05.02.2007 թվականի թիվ 1 որոշմամբ ստուգում իրականացնող անձը որոշել է օգտվել «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված իրավունքից, և հարկվող օբյեկտը հաշվարկել է ՀՀ կառավարության սահմանած կարգով՝ կիրառելով մի բանաձև, որում որպես նվազելի է դիտել ապրանքների վաճառքի գները, իսկ որպես հանելի՝ ապրանքների մաքսային արժեքը:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ նման բանաձևի միջոցով հնարավոր չէ որոշել հարկվող օբյեկտը (տվյալ դեպքում՝ ապրանքային շրջանառությունը և ապրանքային մնացորդը), քանի որ ապրանքի մաքսային արժեքը չի ներառում ապրանքի ամբողջ ինքնարժեքը:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի հիման վրա հարկվող օբյեկտը կամ հարկային պարտավորությունը որոշելիս ապրանքի վաճառքի գնի և ապրանքի մաքսային արժեքի տարբերությունը չի կարող դիտվել որպես հարկվող օբյեկտ (ապրանքային մնացորդ) այն պարզ պատճառով, որ դրանից ենթակա են նվազեցման այն ծախսերը, որոնք մտնելով ապրանքի ինքնարժեքի մեջ, մաքսային արժեքի տարր չեն հանդիսանում:

109. Արմինե Հակոբյան և Մամվել Հակոբյան v. ՀՀ Կենտրոն նոտարական տարածքի նոտար Ալվարդ Մելքոնյան, Անահիտ, Մարգարիտ, Քնարիկ Հակոբյաններ, քաղ. գործ թիվ 3-1621/ՎԴ (ժառանգությունն ընդունած ժառանգ ճանաչելու, ժառանգական գույքն առանձնացնելու, ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագրերը մասնակի անվավեր ճանաչելու պահանջներով):

Խնդիրը. Արդյո՞ք ժառանգը, ժառանգատուի մահից հետո բնակվելով նրա տանը, սակայն չդիմելով նոտարական գրասենյակ և օրենքով սահմանված կարգով ժառանգությունը չձևակերպելով, կարող է համարվել ժառանգությունը ընդունած ժառանգ:

ՀՀ վճռաբեկ դատարանը որոշեց. Օրենսդիրը նախատեսել է ժառանգության ընդունման երկու եղանակ՝ ժառանգությունն ընդունելու կամ ժառանգական իրավունքի վկայագիր ստանալու մասին դիմումը ժառանգության բացման վայրի նոտարին հանձնելը և ժառանգի կողմից ժառանգությունը փաստացի տիրապետելը կամ կառավարելը: Ժառանգությունը ժառանգի կողմից ընդունված է համարվում, երբ նա սկսում է փաստացի տիրապետել այդ գույքը, ինչը հանդիսանում է ժառանգական գույքի նկատմամբ ժառանգի սեփականության իրավունքի ծագման նախապայման: Սույն քաղաքացիական գործում առկա Երևանի Աջափնյակ համայնքի թաղապետարանի 30.08.2006 թվականի տեղեկանքի համաձայն՝ Արմեն Հակոբյանը մինչև մահը՝ 27.04.2006 թվականը, բնակվել է Երևանի Ա.Վշտունու թիվ 65 տանը: Այսինքն, վեճի առարկա գույքը փաստացի տիրապետման ուժով ընդունել է ժառանգությունը: ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1186-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ ժառանգության զանգվածի մեջ է մտնում ժառանգության բացման օրը ժառանգատուին պատկանող գույքը՝ ներառյալ դրամը, արժեթղթերը, գույքային իրավունքները և պարտականությունները: Հիմք ընդունելով վերոնշյալը՝ Վճռաբեկ դատարանը արձանագրում է, որ վեճի առարկա գույքը Արմեն Հակոբյանի մահից հետո ներառված է եղել նրա ժառանգության զանգվածի կազմում: Հետևաբար, անհիմն է հայցի մերժման հիմքում դրված Վերաքննիչ դատարանի վճռի պատճառաբանությունն այն մասին, որ Արմեն Հակոբյանը Աղաբեկ Հակոբյանի և Մալաքսիմ Կարապետյանի մահից հետո բնակվելով վեճի առարկա տանը, նոտարական գրասենյակ չի դիմել և օրենքով սահմանված կարգով ժառանգությունը չի ձևակերպել, հետևաբար վեճի առարկա գույքը նրան չի պատկանել:

110. «Հայքրմուդկոյուդի» ՓԲԸ v. ՀՀ ԿԱ ՀՊԾ և ՀՀ բնապահպանության նախարարություն, քաղ. գործ թիվ 3-1655/ՏԴ (բնապահպանական պետական տեսչության ստուգման ակտերն անվավեր ճանաչելու պահանջով):

Խնդիրը. Արդյո՞ք տեսչության ստուգման ակտը, որը դրվել է Ծառայության ստուգման ակտով ընկերության նկատմամբ առաջադրված պարտավորությունների հիմքում «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի իմաստով կարող է գնահատվել որպես վարչական ակտ:

ՀՀ վճռաբեկ դատարանը որոշեց. Սույն քաղաքացիական գործով ծառայության ստուգման ակտով ընկերության նկատմամբ առաջադրված պարտավորությունների

հիմքում դրված տեսչության տրամադրած տեղեկությունները: Մինչդեռ, տեսչության ստուգման ակտով ընկերությանը որևէ պարտավորություն չի առաջադրվել, և որևէ իրավունք չի սահմանափակվել: Հետևաբար, տեսչության ստուգման ակտում բացակայում են «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 53-րդ և 55-րդ հոդվածներով սահմանված՝ վարչական ակտին բնորոշ հատկանիշները, որպիսի պայմաններում Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն վեճի նկատմամբ նշված օրենքի 71-րդ հոդվածը կիրառելի չէ: Տեսչության ստուգման ակտը վարչական վարույթի ընթացքում ընդունված և կոնկրետ իրավիճակ արձանագրող (տվյալ դեպքում՝ բնօգտագործման վճարի օբյեկտ համարվող ստորերկրյա ջրի պակաս հաշվարկված ծավալ) փաստաթուղթ է, այլ ոչ թե վարչական ակտ, քանի որ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 53-րդ հոդվածի իմաստով վարչական ակտը բնորոշող հատկանիշ են համարվում արտաքին ներգործությունը, հանրային իրավունքի բնագավառում կոնկրետ գործի կարգավորման նպատակ հետապնդելը, և այդ ակտը պետք է ուղղված լինի անձանց համար իրավունքներ և պարտականություններ սահմանելուն փոփոխելուն, վերականգնելուն կամ ճանաչելուն:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ տեսչության ստուգման ակտը «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի իմաստով չի կարող գնահատվել որպես վարչական ակտ, քանի որ այն անմիջականորեն ուղղված չէ անձանց համար իրավունքներ և պարտականություններ սահմանելուն, փոփոխելուն, վերականգնելուն կամ ճանաչելուն:

111. Սերոբ Ավագյան v. «ԱրմենՏել» ՓԲԸ, քաղ. գործ թիվ 3-1133/ՎԴ (նախկին աշխատանքում վերականգնելու և հարկադիր պարապուրդի ընթացքում աշխատավարձ վճարելու պահանջներով):

Խնդիրը. Արդյո՞ք հայցվորի մոր անկողնային հիվանդ լինելը համարվում է հարգելի պատճառ՝ հայցային վաղեմությունը բաց թողնելու համար:

ՀՀ վճռաբեկ դատարանը որոշեց. ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 342-րդ հոդվածի համաձայն՝ բացառիկ դեպքերում, երբ դատարանը հայցվորի անձի հետ կապված հանգամանքների (ծանր հիվանդության, անօգնական վիճակի, անգրագիտության և այլն) հաշվառմամբ հարգելի է ճանաչում հայցային վաղեմության ժամկետի բացթողումը, քաղաքացու խախտված իրավունքը ենթակա է պաշտպանության: Հայցային վաղեմության ժամկետի բացթողման պատճառները կարող են ճանաչվել հարգելի, եթե դրանք տեղի են ունեցել հայցային վաղեմության ժամկետի վերջին վեց ամսում, իսկ եթե այդ ժամկետը հավասար է վեց ամսվա կամ պակաս է վեց ամսից՝ վաղեմության ժամկետի ընթացքում: Այն հանգամանքը, որ Սերոբ Ավագյանի մայրը ծանր անկողնային հիվանդ է, որը հաստատվում է Սերոբ Ավագյանի մոր՝ Լուսիկ Ամիրխանյանի, հարևանների գրավոր վկայությամբ և հիվանդի ամբուլատոր բժշկական քարտերով, և որ Սերոբ Ավագյանը զբաղվել է մոր խնամքի և բուժման հարցերով, համարվում է հարգելի պատճառ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 342-րդ հոդվածի իմաստով:

112. «Ատոմսերվիս» ՓԲԸ v. ՀՀ ԿԱ ՀՊԾ, քաղ. գործ թիվ 3-1589/ՏԴ (ակտը մասնակի անվավեր ճանաչելու պահանջով):

Խնդիրը. Արդյո՞ք Հայկական ատոմակայանում սարքավորումների տեղադրման, կարգավորման և փորձարկման աշխատանքներ կատարելն «Աշխատանքի վարձատրության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասի իմաստով կարող է համարվել որպես աշխատանքի նորմալ պայմաններից շեղում:

ՀՀ վճռաբեկ դատարանը որոշեց. ՀՀ աշխատանքային օրենսգրքի 183-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ նույն օրենսգրքի 244-րդ հոդվածի 5-րդ կետով սահմանված աշխատանքի նորմալ պայմաններից շեղումների դեպքում աշխատանքի վարձատրությունը կատարվում է ավելի բարձր տարիֆային դրույքով, քան նորմալ պայմաններում կատարված աշխատանքի համար: Վճարման չափը որոշվում է կոլեկտիվ կամ աշխատանքային պայմանագրով: Նույն օրենսգրքի 244-րդ հոդվածի 5-րդ կետի համաձայն՝ գործատուն պարտավոր է ապահովել աշխատանքի նորմալ պայմաններ, որպեսզի աշխատողները կարողանան կատարել աշխատանքի նորմաները, մասնավորապես աշխատողների համար ապահովել առողջության համար աշխատանքի անվտանգ և անվնաս պայմանները: «Աշխատանքի վարձատրության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ աշխատանքի նորմալ պայմաններից շեղումների առկայության դեպքում գործատուների կողմից աշխատողներին տրվում են հավելումներ՝ նույն օրենքով և իրավական այլ ակտերով, ինչպես նաև աշխատանքային պայմանագրերով սահմանված կարգով և չափերով:

113. Ռիչարդ Հակոբյան v. Լուան Ավետիսյան, Արթուր Հակոբյան և Երրորդ անձ Արաբկիրի տարածքային նոտարական գրասենյակ, քաղ. գործ թիվ 3-1416/ՎԴ (Ժառանգական գույքում 1/2-րդ բաժնի նկատմամբ սեփականության իրավունքը ճանաչելու և կտակն անվավեր ճանաչելու և Տիգրան Հակոբյան v. Լուան Ավետիսյան, Արթուր Հակոբյան, Ռիչարդ Հակոբյան՝ ժառանգությունն ընդունելու համար նախատեսված ժամկետը բաց թողնելու պատճառները հարգելի ճանաչելու, ժառանգությունն ընդունած ժառանգ ճանաչելու և ժառանգական գույքի մասի նկատմամբ սեփականության իրավունքը ճանաչելու պահանջներով):

Խնդիրը. Արդյո՞ք, կտակում առկա փոփոխության անվավերությունը հանգեցնում է ողջ կտակի անվավերության:

ՀՀ վճռաբեկ դատարանը որոշեց. ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1211-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ կտակն անվավեր է ճանաչվում կտակի ձևի մասին կանոնները և գործարքների անվավերության մասին՝ նույն օրենսգրքի այլ դրույթները խախտելու հետևանքով: ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1211-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ անվավեր կարող են ճանաչվել ինչպես կտակն ամբողջությամբ, այնպես էլ՝ դրանում պարունակվող առանձին կտակային կարգադրությունները: Առանձին կտակային կարգադրության անվավերությունը չի հանգեցնում կտակի մնացած մասի անվավերությանը: Սույն քաղաքացիական գործով ներկայացվել է ամբողջ կտակը անվավեր ճանաչելու պահանջ՝ պահանջի հիմքում դնելով կտակում առկա ջնջումը: Այսինքն վիճարկվում է կտակային կարգադրություններից մեկը՝ Երևանի Վ.Համբարձումյան փողոցի 8/1 շենքի թիվ 44 բնակարանը Լուան Ավետիսյանին կտակված լինելը: Հիմք ընդունելով վերոնշյալը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ անվավեր է վեճի առարկա կտակում կատարված փոփոխությունը: Այսինքն՝ կտակում առկա փոփոխության անվավերությունը չի հանգեցնում ամբողջ կտակի անվավերության:

114. Աշխեն Ենգոյան v. Երևանի քաղաքապետ, քաղ. գործ թիվ 3-1670/ՎԴ (վարչական իրավախախտումների գործերով հանձնաժողովի 15.09.2006թ. որոշումն անվավեր ճանաչելու պահանջով):

Խնդիրը. Կրկնակի արձանագրության հիման վրա հարուցված վարչական իրավախախտման գործի վարույթը կարճված լինելու հանգամանքը կարող է արդյոք Հանձնաժողովի որոշումն անվավեր ճանաչելու հիմք հանդիսանալ:

ՀՀ վճռաբեկ դատարանը որոշեց. Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 247-րդ հոդվածի առաջին կետի համաձայն՝ վարչական իրավախախտման վերաբերյալ գործի վարույթը չի կարող սկսվել, իսկ սկսվածը ենթակա է կարճման, վարչական իրավախախտման դեպքի կամ կազմի բացակայության դեպքում: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն քաղաքացիական գործով կրկնակի արձանագրության հիման վրա հարուցված վարչական իրավախախտման գործի վարույթը կարճված լինելը չի կարող Հանձնաժողովի 15.09.2006 թվականի որոշումն անվավեր ճանաչելու հիմք հանդիսանալ, քանի որ վերջինս հարուցված է եղել Աշխեն Ենգոյանի կողմից տարածքը նախագծային տեսքին չբերելու համար և կարճվել է գործի նյութերով շինարական աշխատանքները դիմողի կողմից շարունակելու (իրավախախտման) հանգամանքը հիմնավորված չլինելու հիմքով: Այսինքն՝ երկրորդ արձանագրությամբ հարուցված վարչական իրավախախտման գործի վարույթի կարճման հիմքը որևէ առնչություն չունի մինչ այդ Հանձնաժողովի 15.09.2006 թվականի որոշմամբ արձանագրված խախտման հետ, հետևաբար այդ վարույթը կարճված լինելու հանգամանքը չի կարող հիմք հանդիսանալ Հանձնաժողովի 15.09.2006 թվականի որոշմամբ արձանագրված խախտման առկայության կամ բացակայության մասին եզրահանգումներ կատարելու համար:

115. Երեմ Հարությունյան v. Գագիկ Հարությունյան և Եղեգնաձորի տարածքային նոտար Սոնա Պողոսյան, քաղ. գործ թիվ 3-1762/ՎԴ (ըստ օրենքի ժառանգությունն ընդունած ժառանգ համարելու դիմումի մերժումն անվավեր ճանաչելու, բնակարանից վտարելու և հակընդդեմ հայցը՝ Գագիկ Հարությունյան v. Երեմ Հարությունյան՝ բնակարանը տիրագուրկ ճանաչելու և այն իրեն ի սեփականություն հանձնելու պահանջներով):

Խնդիրը. Արդյո՞ք գործի վարույթը կասեցնելու մասին դատարանի որոշման մեջ պետք է նշվեն շարժառիթները, օրենքները, այլ իրավական ակտերը, որոնցով դատարանը հանգել է նման հետևությունների:

ՀՀ վճռաբեկ դատարանը որոշեց. ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 105-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ դատարանը պարտավոր է կասեցնել գործի վարույթը, եթե անհնարին է տվյալ գործի քննությունը մինչև սահմանադրական, քաղաքացիական, քրեական կամ վարչական դատավարության կարգով քննվող այլ գործով կամ հարցով որոշում կայացնելը: ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 144-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետի համաձայն՝ առանձին ակտի ձևով կայացված որոշման մեջ պետք է նշվեն շարժառիթները, որոնցով դատարանը հանգել է հետևությունների՝ օրենքների և այլ իրավական ակտերի վկայակոչմամբ: Վերը նշված օրինադրությունների իմաստով դատարանի պարտավորությունն է կասեցնելու գործի վարույթը, եթե դրա քննությունն անհնարին է մինչև սահմանադրական, քաղաքացիական, քրեական կամ վարչական դատավարության կարգով քննվող այլ գործով կամ հարցով որոշում կայացնելը, իսկ գործի վարույթը կասեցնելու մասին դատարանի որոշման մեջ պետք է նշվեն շարժառիթները, օրենքները, այլ իրավական ակտերը, որոնցով դատարանը հանգել է հետևությունների:

12.12.2007թ.

116. «Գրանդ Քենդի» հայ-կանադական համատեղ ձեռնարկություն ՍՊԸ v. «Արարատ» ՍՊԸ, քաղ. գործ թիվ 3-1763/ՏԴ (բացառիկ իրավունքով պատկանող 9085, 8377, 8359, 8941, 7673, 7558, 8658, 8364, 8657, 8412, 11524, 7559, 9783 գրանցման համարներն ունեցող ապրանքային նշանների հետ նույնական կամ շփոթելու աստիճանի նման Իպ֎ՎիցՁՌՎՈ, իսպրվՈն րՍՈջՍՈ, ԹՊՏւվՏՉպվՌպ, Romantic, Անուշիկ, Սկյուռիկ, Արջուկ, Քարավան նշանների ապօրինի օգտագործումը դադարեցնելուն պարտավորեցնելու, առանց որևիցե փոխհատուցման ապօրինի օգտագործվող Իպ֎ՎիցՁՌՎՈ, իսպրվՈն րՍՈջՍՈ, ԹՊՏւվՏՉպվՌպ, Romantic, Անուշիկ, Սկյուռիկ, Արջուկ, Քարավան նշաններով մակնիշված ապրանքի փաթեթի ամբողջ ծավալն ոչնչացնելու պահանջներով):

Խնդիրը. Որոնք են ապրանքային նշանների շփոթության աստիճան նմանության որոշման կանոնները:

ՀՀ վճռաբեկ դատարանը որոշեց. Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ապրանքային նշանները համեմատելիս նախ և առաջ պետք է հաշվի առնվեն այդ նշանների նմանությունները (որն ունի տարբերակիչ նշանակություն), անկախ լրացուցիչ և աննշան տարրերի առկայության: Այսինքն, եթե ապրանքային նշանում կրկնվում է տարբերակիչ նշանակություն ունեցող տարրը, կարելի է եզրակացնել որ այն ունի շփոթելու աստիճանի նմանություն: Մինչդեռ, տվյալ դեպքում, Տնտեսական դատարանը, համեմատելով գրանցված և ընկերության կողմից օգտագործվող ապրանքային նշանները, գնահատել է դրանց տարբերությունները՝ ինչով էլ բավարար հիմք չի ստեղծվել դրանց՝ շփոթության աստիճան նմանության հանգամանքը գնահատելու համար: Այսպիսով, Տնտեսական դատարանը համեմատվող ապրանքային նշանների՝ շփոթության աստիճան նման լինելու հանգամանքը պարզելու համար, նախ պետք է համեմատել ընկերության կողմից օգտագործվող համակցված ապրանքային նշանները Կազմակերպության գրանցված համակցված ապրանքային նշանների հետ, իսկ այնուհետև՝ ընկերության կողմից օգտագործվող համակցված ապրանքային նշանները՝ Կազմակերպության գրանցված բառային ապրանքային նշանների հետ՝ առաջնորդվելով Կարգի 105¹-րդ կետով:

**Միաժամանակ, Վճռաբեկ դատարանն անդրադարձել է այն հարցին թե որ ապրանքային նշանների հետ կարող են համեմատվել համակցված նշանները:*

117. Միմոն Սարգսյան v. Երևանի քաղաքապետարան, քաղ. գործ թիվ 3-1835/Ս (սեփականության իրավունքը ճանաչելու պահանջով):

Խնդիրը. Արդյո՞ք անձը կարող է ձեռքբերման վաղեմության ուժով սեփականության իրավունք ձեռք բերել պետական սեփականություն հանդիսացող հողամասի նկատմամբ:

ՀՀ վճռաբեկ դատարանը որոշեց. Վճռաբեկ դատարանը հարկ է համարում արձանագրել է, որ ՀՀ հողային օրենսգրքի 72-րդ հոդվածով նախատեսվում է ոչ թե գույքի նկատմամբ սեփականության իրավունք ձեռք բերելու, այլ սեփականության իրավունքով հողամաս ձեռք բերելու նախապատվության իրավունքի ձեռք բերման հնարավորություն, հետևաբար, անհիմն է դատարանի վճիռը հայցվորի սեփականության իրավունքի ճանաչման վերաբերյալ:

118. ՀՀ ԿԱ ՀՊԾ v. «Յունիբանկ» ՓԲԸ, քաղ. գործ թիվ 3-1597/ՎԴ (գումարի բռնագանձման և հակընդդեմ հայցով՝ Ծառայության 12.05.2003 թվականի ակտն անվավեր ճանաչելու պահանջներով):

Խնդիրը. Արդյոք մասնաճյուղի միջոցով բանկային գործունեության իրականացումը «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդվածի 25-րդ կետի իմաստով համարվում է այլ վայրում իրականացվող գործունեություն և առաջացնում նույն կետով նախատեսված պետական տուրքի վճարման պարտավորություն:

ՀՀ վճռաբեկ դատարանը որոշեց. «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդվածի 25-րդ կետը կարգավորում է այն հարաբերությունները, երբ յուրաքանչյուր վայրում լիցենզավորման ենթակա գործունեություն իրականացնելիս հարկավոր է ստանալ նոր լիցենզիա: Օրենքի վերոնշյալ նորմը նպատակ է հետապնդում խրախուսելու ձեռնարկատիրական գործունեության զարգացումը և դրա իրականացումը մեկից ավելի վայրերում, որի դեպքում չնայած որ անձը չի ազատվում լիցենզիա ստանալու պարտավորությունից, սակայն այն տրամադրելիս պարտավորվում է վճարել ոչ թե համապատասխան լիցենզիայի համար նախատեսված պետական տուրքի ամբողջ գումարը, այլ այդ գումարի 50 տոկոսը: Այսինքն՝ հոդվածն ունի խրախուսող նշանակություն: Հետևաբար, «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդվածի 25-րդ կետից հետևում է, որ այն վերաբերում է այն դեպքերին, երբ.

1. անձի կողմից օրենքով սահմանված կարգով ստացած լիցենզիայի հիման վրա իրականացվում է լիցենզավորման ենթակա գործունեություն, և
2. նույն անձը ցանկանում է լիցենզավորման ենթակա նույն գործունեությունն իրականացնել մեկ այլ վայրում, որի համար նա պետք է ստանա նոր լիցենզիա:

«Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենքի 28-րդ հոդվածի համաձայն՝ ՀՀ տարածքում գործող բանկերի ՀՀ տարածքում ստեղծվող մասնաճյուղերը գրանցվում են Կենտրոնական բանկի կողմից՝ ներկայացնելով օրենքով սահմանված փաստաթղթեր: Կենտրոնական բանկը գրանցման մասին որոշում ընդունելուց հետո գրանցում է մասնաճյուղը, որի արդյունքում մասնաճյուղին տրվում է գրանցման վկայական: Վերոնշյալից հետևում է, որ բանկի մասնաճյուղերը գործում են Կենտրոնական բանկի կողմից տրված գրանցման վկայականների հիման վրա, իսկ բանկի մասնաճյուղի գործունեության համար լիցենզիա ստանալու անհրաժեշտություն որևէ իրավական ակտով նախատեսված չէ: Հետևաբար, հիմք ընդունելով այն հանգամանքը, որ «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդվածի 25-րդ կետը կարգավորում է այն դեպքերը, երբ յուրաքանչյուր վայրում լիցենզավորման ենթակա գործունեություն իրականացնելիս հարկավոր է ստանալ նոր լիցենզիա, Վճռաբեկ դատարանը արձանագրում է, որ այդ հոդվածով բանկի կողմից մասնաճյուղի միջոցով բանկային գործունեության իրականացման համար պետական տուրքի գծով պարտավորություններ չեն առաջանում:

**Միաժամանակ, Վճռաբեկ դատարանը նշել է, որ «Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածի աղյուսակում բանկային գործունեության սյունակում նշված «Վ» տառը, կիրառելի չէ բանկային գործունեության բնագավառում:*

119. ՀՀ ԿԱ պետական գույքի կառավարման վարչություն v. «Սպիտակի վերելակաշինական գործարան» ՓԲԸ, քաղ. գործ թիվ 3-1717/ՏԴ (աշխատավորական կոլեկտիվի գումարի բռնագանձման պահանջով):

Խնդիրը. Ընկերությանը սնանկ ճանաչելը կարող է արդյո՞ք հիմք հանդիսանալ նրա աշխատավորական կոլեկտիվի դեմ հարուցված քաղաքացիական գործի վարույթի կարճման համար:

ՀՀ վճռաբեկ դատարանը որոշեց. Մանկության մասին» ՀՀ օրենքի 39-րդ հոդվածի 2-րդ կետի «գ» ենթակետում սահմանված է սնանկության գործընթացի հիմնական առանձնահատկություններից մեկը: Դա այն է, որ պարտապանին սնանկ ճանաչելու մասին վճիռն օրինական ուժի մեջ մտնելու պահից սառեցվում է պարտատերերի պահանջների բավարարումը (մորատորիում): Այդ պահից սառեցվում են պարտատերերի բոլոր գործողությունները, որոնք ուղղված են պարտապանի նկատմամբ պահանջների բավարարմանը: Ընկերության պետական սեփականություն հանդիսացող բաժնետոմսերը մասնավորեցվել են «Պետական գույքի մասնավորեցման 2001-2003 թվականների ծրագրի մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով: Նշված բաժնետոմսերի առուվաճառքի պայմանագիրը կնքվել է Վարչության և Ընկերության աշխատավորական կոլեկտիվի (Գնորդ) միջև, ի դեմս լիազորված անձ Հ.Պողոսյանի: Առուվաճառքի պայմանագրով կողմերը ստանձնել են պարտավորություններ, որոնց կատարման համար ժամկետներ են սահմանվել: Սահմանված ժամկետներում Գնորդը պարտավորությունները չի կատարել: Տվյալ դեպքում պայմանագրով ստանձնած Գնորդի պարտավորությունները չեն կարող նույնացվել Ընկերության պարտավորությունների հետ:

120. Էլլա Հովհաննիսյան v. Անուշ և Լևիկ Կիրակոսյաններ, քաղ. գործ թիվ3-1560/ՎԴ (գույքն արգելանքից հանելու և հակընդդեմ հայցով՝ վնասի հատուցման պահանջներով):

Խնդիրը. Արդյո՞ք դատական պաշտպանության իրավունքի իրականացումը կարող է հիմնավոր պատճառ հանդիսանալ պայմանագրային պարտավորությունները չկատարելու և այլ անձի՝ իր սեփականությունից անարգել օգտվելու իրավունքը խախտելու համար:

ՀՀ վճռաբեկ դատարանը որոշեց. ՀՀ Սահմանադրության 18-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքները և ազատություններն օրենքով չարգելված բոլոր միջոցներով պաշտպանելու իրավունք: Իսկ 42-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ազատ է կատարելու այն, ինչն արգելված չէ օրենքով և չի խախտում այլոց իրավունքները և ազատությունները: ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1092-րդ հոդվածի համաձայն՝ անձը, ով առանց օրենքով, այլ իրավական ակտերով կամ գործարքով սահմանված հիմքերի ուրիշ անձի (տուժողի) հաշվին ձեռք է բերել գույք կամ խնայել է այն (ձեռք բերողը), պարտավոր է տուժողին վերադարձնել անհիմն ձեռք բերած կամ խնայած գույքը (անհիմն հարստացումը), բացառությամբ սույն օրենսգրքի 1099-րդ հոդվածով նախատեսված դեպքերի: Սույն գլխի կանոնները կիրառվում են անկախ այն բանից, անհիմն հարստացումը ձեռք բերողի, տուժողի, երրորդ անձանց գործելակերպի հետևանք է եղել, թե կատարվել է նրանց կամքից անկախ: Նույն օրենսգրքի 1093-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ եթե այլ բան նախատեսված չէ սույն օրենսգրքով, այլ օրենքներով կամ այլ իրավական ակտերով և չի բխում համապատասխան հարաբերությունների էությունից, սույն գլխում նախատեսված կանոնները ենթակա են կիրառման նաև սեփականատիրոջ կողմից իր գույքն ապօրինի տիրապետողից հետ ստանալու պահանջների նկատմամբ: Վերոնշյալ իրավական ակտերից հետևում է, որ անձի կողմից իր իրավունքների իրականացումը չպետք է խախտի այլ անձանց իրավունքները: ՀՀ Սահմանադրությունն անձի՝ իր իրավունքները պաշտպանելու

իրավունքի հետ միաժամանակ սահմանում է, որ յուրաքանչյուր անձ ունի սեփականության իրավունք: Սեփականատերն իր հայեցողությամբ տիրապետում, տնօրինում և օգտագործում է իրեն պատկանող սեփականությունը (ՀՀ Սահմանադրության 31-րդ հոդված):

121. Լիանա Կազկո v. Շենգավիթի թաղապետարան, երրորդ անձ Գայանե Սարիբեկյան և ՀՀ ԿԱ ԱԳԿ ՊԿ Շենգավիթի ՏՍ, քաղ. գործ թիվ 3-1581/ՎԴ (Շենգավիթ համայնքի թաղապետի և ավագանու որոշումները, աճուրդի արձանագրությունը, բնակարանի առուվաճառքի պայմանագիրը և սեփականության իրավունքի գրանցումն անվավեր ճանաչելու պահանջների և ըստ Թաղապետարանի հայցի ընդդեմ Լիանա Կազկոյի, Արամ, Ֆրունզ և Նարեկ Մարկոսյանների՝ բնակելի տարածության օգտագործման իրավունքը փոխհատուցմամբ դադարեցնելու պահանջներով):

Խնդիրը. Արդյո՞ք համայնքի ավագանու համաձայնությունը բնակարանի նվիրաբերության մասին, որի դեպքում օտարումը պետք է կատարվի բնակարանի վարձակալի դիմումի և կողմերի միջև կնքվելիք նվիրաբերության պայմանագրի հիման վրա, կարող է կաշկանդել ավագանուն չօտարել այդ գույքը այլ անձի:

ՀՀ վճռաբեկ դատարանը որոշեց. Շենգավիթ համայնքի ավագանու 17.05.2002 թվականի թիվ 56 որոշմամբ սահմանվել է տալ համաձայնություն համայնքի սեփականություն հանդիսացող բոլոր բնակարանների նվիրաբերության մասին: Միաժամանակ որոշվել է բնակարանի օտարումը կատարել բնակարանի վարձակալի կողմից Թաղապետարան ուղղված դիմումի հիման վրա, այդ բնակարանի բնակիչ հանդիսացող լրիվ գործունակ անձանց գրավոր համաձայնությամբ: Բնակարանի օտարումը ձևակերպվում է թաղապետի որոշմամբ և կողմերի միջև կնքվող բնակարանի նվիրաբերության պայմանագրով: ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 451-րդ հոդվածի առաջին մասի համաձայն՝ օֆերտան մեկ կամ մի քանի կոնկրետ անձանց հասցեագրված առաջարկն է, որը որոշակիորեն արտահայտում է առաջարկողի մտադրությունը՝ պայմանագիրը կնքված համարել առաջարկն ընդունած հասցեատիրոջ հետ: Նույն օրենսգրքի 457-րդ հոդվածի առաջին մասի համաձայն՝ եթե գրավոր օֆերտայում ակցեպտի համար ժամկետ սահմանված չէ, պայմանագիրը կնքված է համարվում, եթե օֆերտան ուղարկված անձն ակցեպտ ստացել է մինչև օրենքով կամ այլ իրավական ակտերով սահմանված ժամկետի ավարտը, իսկ եթե նման ժամկետ սահմանված չէ, ապա՝ դրա համար անհրաժեշտ ժամկետում: Վերոնշյալ հոդվածից հետևում է, որ օֆերտայում ժամկետի բացակայության դեպքում, ակցեպտը պետք է ստացվի ողջամիտ ժամկետում:

Սույն քաղաքացիական գործի փաստերի համաձայն՝ Շենգավիթ համայնքի ավագանու կողմից արվել է նվիրաբերության պայմանագիր կնքելու օֆերտա: Սակայն Լիանա Կազկոն ողջամիտ ժամկետում (մինչև 2006 թվականը) չի օգտվել նշված որոշմամբ իրեն ընձեռնված հնարավորությունից և Թաղապետարանին չի ներկայացրել նվիրաբերության պայմանագրի կնքման վերաբերյալ իր համաձայնությունը (ակցեպտ): Որպես վեճի առարկա բնակարանի սեփականատեր Թաղապետարանը, 07.07.2006 թվականին օգտվելով սեփականության իրավունքով իրեն պատկանող գույքը տնօրինելու իրավունքից, օտարել է այն:

**Միաժամանակ, Վճռաբեկ դատարանն անդրադարձել է, որ բարեխիղճ ձեռք բերողից գույքը հետ պահանջելու իրավունքն պատկանում է միայն գույքի սեփականատիրոջը:*

122. Հովհաննես Լալայան v. ՀՀ գլխավոր դատախազություն քաղ. գործ թիվ 3-1644/ՎԴ (պաշտոնատար անձի գործողությունները վիճարկելու պահանջով) :

Խնդիրը. «Դատախազության մասին» ՀՀ օրենքի 40-րդ հոդվածով նախատեսված միանվագ նպաստի վճարման դեպքում աշխատանքային որ ստաժն է հաշվի առնվում:

ՀՀ վճարեկ դատարանը որոշեց. «Դատախազության մասին» նախկին օրենքի 40-րդ հոդվածի համաձայն՝ դատախազների և քննիչների **թոշակավորումն** իրականացվում է ներքին գործերի մարմիններում ծառայության անցնող ղեկավար կազմի անձանց համար կիրառվող պայմաններով, նորմերով և կարգով: Դատախազների և քննիչների աշխատանքային ստաժի կամ հաշմանդամության, ինչպես նաև առողջության կամ հաստիքային փոփոխությունների կապակցությամբ կենսաթոշակի ուղարկելու դեպքում վճարվում է միանվագ նպաստ հետևյալ կարգով՝

10 տարուց պակաս աշխատանքային ստաժի դեպքում՝ 12 ամսվա աշխատավարձի չափով,

10-20 տարի աշխատանքային ստաժի դեպքում՝ 18 ամսվա աշխատավարձի չափով,

20 տարուց ավելի աշխատանքային ստաժի դեպքում՝ 24 ամսվա աշխատավարձի չափով:

Հիմք ընդունելով վերոնշյալը՝ Վճարեկ դատարանն անհրաժեշտ է համարում «Դատախազության մասին» նախկին օրենքի 40-րդ հոդվածը մեկնաբանել, հաշվի առնելով օրենքի մյուս նորմերի պահանջները, դրա ընդունման նպատակը և կարգավորման առարկան: «Դատախազության մասին» ՀՀ նախկին օրենքի 22-րդ հոդվածում գլխավոր դատախազի տեղակալ, Երևան քաղաքի դատախազ, մարզի դատախազ կամ համայնքի դատախազ լինելու համար պահանջվում է իրավաբանի առնվազն հինգ տարվա մասնագիտական ստաժ: «Դատախազության մասին» ՀՀ նախկին օրենքի 36-րդ հոդվածի համաձայն՝ դատախազության աշխատողներին իրենց զբաղեցրած պաշտոնի և աշխատանքային ստաժի համաձայն են շնորհվում դասային աստիճաններ: «Դատախազության մասին» օրենքի 40-րդ հոդվածի 13-րդ կետում օգտագործվում է, թե իրավաբանի մասնագիտական աշխատանքային ստաժ և թե դատախազությունում ծառայության ժամկետ հասկացությունները: Վերոնշյալից հետևում է, որ «Դատախազության մասին» ՀՀ օրենքն օգտագործում է երեք հասկացություններ՝ իրավաբանի մասնագիտական աշխատանքային ստաժ, դատախազությունում ծառայության ժամկետ և աշխատանքային ստաժ: Դրանք ունեն տարբեր իմաստ և բովանդակություն: Այսինքն՝ այն բոլոր դեպքերում երբ օրենսդիրը ցանկացել է նշել կոնկրետ աշխատանքային ստաժի տեսակը և դատախազության համակարգում ծառայության աշխատանքային ստաժը տարանջատել իրավաբանի մասնագիտության աշխատանքային ստաժից, ապա այդ դեպքերում օրենքում օգտագործվել է աշխատանքային ստաժի համապատասխան տեսակը: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ «Դատախազության մասին» ՀՀ օրենքի 40-րդ հոդվածում կոնկրետացված չէ թե միանվագ նպաստի վճարման դեպքում աշխատանքային որ ստաժն է հաշվի առնվում, և ելնելով այն հանգամանքից որ օրենքի դրույթը պարունակում է երկիմաստություն, Վճարեկ դատարանը գտնում է, որ այն չի կարող մեկնաբանվել նեղ իմաստով՝ սահմանափակելով դրա կիրառության շրջանակները: Նման եզրահանգման համար Վճարեկ դատարանը հիմք է ընդունում նաև այն հանգամանքը, որ բոլոր այն դեպքերում, երբ չկա համապատասխան հարաբերությունը համապարփակ կերպով կարգավորող իրավական ակտ, օրենքի ընդհանուր ձևակերպումը պետք է մեկնաբանվի հոգուտ քաղաքացու:

123. ՀՀ ԿԱ պետական գույքի կառավարման վարչություն v. «Արշո» ՍՊԸ, քաղ. գործ թիվ 3-1792/ՏԴ (գույքը վերադարձնելու և հակընդդեմ հայցով՝ օրենքով նախատեսված իրավունքը ճանաչելու պահանջներով):

Խնդիրը. Արդյո՞ք «Պետական ձեռնարկությունների և անավարտ շինարարության օբյեկտների սեփականաշնորհման և ապապետականացման մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածով նախատեսված արտոնությունները կարող են փոխանցվել ժառանգությամբ:

ՀՀ վճռաբեկ դատարանը որոշեց. «Պետական ձեռնարկությունների և անավարտ շինարարության օբյեկտների սեփականաշնորհման և ապապետականացման մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ սեփականաշնորհման (պետական գույքի ձեռք բերման) սուբյեկտներ են նաև ՀՀ քաղաքացիները և քաղաքացիների խմբերը, այդ թվում՝ սեփականաշնորհվող ձեռնարկության աշխատավորական կոլեկտիվի անդամները: Նույն օրենքի 9-րդ հոդվածով աշխատավորական կոլեկտիվի անդամների համար, ելնելով նրանց անձնական (ֆիզիկական) առանձնահատկություններից, նախատեսվել է որոշակի արտոնություններ, այն է՝ աշխատավորական կոլեկտիվի անդամների համար սահմանվել է իրենց հասանելիք բաժնեմասի վճարման գեղչեր՝ պատերազմների մասնակիցների և երրորդ կարգի հաշմանդամների համար արժեքի 40 տոկոսի չափով, երկրորդ կարգի հաշմանդամների համար՝ 50 տոկոսի չափով, առաջին կարգի հաշմանդամների համար 60 տոկոսի չափով: ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1186-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ և 4-րդ կետերի համաձայն՝ ժառանգության զանգվածի մեջ չեն մտնում ժառանգատուի անձի հետ անխզելիորեն կապված իրավունքները և պարտականությունները, մասնավորապես՝ անձնական ոչ գույքային իրավունքները և այլ ոչ նյութական բարիքները, այն իրավունքներն ու պարտականությունները, որոնց անցումը ժառանգությամբ չի թույլատրվում սույն օրենսգրքով և այլ օրենքներով: Հիմք ընդունելով վերոնշյալը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ «Պետական ձեռնարկությունների և անավարտ շինարարության օբյեկտների սեփականաշնորհման և ապապետականացման մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածով նախատեսված արտոնություններն իրենց էությամբ ֆիզիկական անձի հետ անխզելիորեն կապված իրավունք է և չի կարող փոխանցվել ժառանգությամբ:

25.12.2007թ.

124. «Գրվաչ» ՍՊԸ v. ՀՀ ԿԱ ՀՊԾ, քաղ. գործ թիվ 3-1799/ՏԴ (26.04.2007 թվականի թիվ 1107563 ստուգման ակտն անվավեր ճանաչելու պահանջով):

Խնդիրը. Արդյո՞ք նույն ապրանքները չգրանցելու համար պատասխանատվության ենթարկված լինելու պայմաններում դրանց չգրանցելը զանցանքի կրկնական փաստ պետք է դիտել:

ՀՀ վճռաբեկ դատարանը որոշեց. «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 28-րդ հոդվածը նախատեսում է պատասխանատվություն ձեռնարկատիրական գործունեության առարկաները չգրանցելու, ինչպես նաև չգրանցելու կրկնական փաստ արձանագրելու համար: Այսինքն՝ վերոնշյալ հոդվածից հետևում է, որ ձեռնարկատիրական գործունեության առարկաները չգրանցելը և նույն իրավախախտումը կրկին անգամ

կատարելն ինքնուրույն վարչական իրավախատումներ են, որոնց համար նախատեսված է պատասխանատվության տարբեր չափ: Սույն քաղաքացիական գործի փաստերի համաձայն՝ Ընկերությունը 16.11.2006 թվականին թիվ 1105464 ստուգման ակտով պատասխանատվության է ենթարկվել ձեռնարկատիրական գործունեության առարկաները չգրանցելու համար: Վերոնշյալ ակտով արձանագրվել է ձեռնարկատիրական գործունեության առարկաների չգրանցման փաստը, որը Ընկերության կողմից չի վերացվել, խախտումը շարունակվել է և կրկին անգամ արձանագրվել 29.03.2007 թվականի թիվ 1107563 ստուգման հանձնարարագրի հիման վրա կատարված ստուգման արդյունքում: Այսինքն՝ առաջին անգամ ձեռնարկատիրական գործունեության առարկաները չգրանցելու համար վարչական պատասխանատվության ենթարկելուց հետո անգործությունը փաստացի շարունակվել է, որն իրենից ներկայացնում է ինքնուրույն վարչական իրավախախտում:

125.«Ա.Ի.Ալիխանյանի անվան Երևանի ֆիզիկայի ինստիտուտ» պետական ոչ առևտրային կազմակերպություն v. ՀՀ ԿԱ ԱԳԿ ՊԿ Դավթաշենի ՏՍ, քաղ. գործ թիվ 3-1789/ՎԴ (Ալիխանյան եղբայրների փողոցի Հ12 վայրում գտնվող 7604 քմ մակերեսով հողամասի նկատմամբ Կազմակերպության սեփականության իրավունքը գրանցելու պահանջներով):

Խնդիրը. Արդյո՞ք «ՀՀ հողային օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» 04.10.2005 թվականի թիվ ՀՕ-199 ՀՀ օրենքի 23-րդ հոդվածը տարածվում է պետական ոչ առևտրային կազմակերպությունների վրա:

ՀՀ վճռաբեկ դատարանը որոշեց. «ՀՀ հողային օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» 04.10.2005 թվականի թիվ ՀՕ-199 ՀՀ օրենքի 23-րդ հոդված 1-ին կետի 2-րդ ենթակետի՝ մինչև սույն օրենքի ուժի մեջ մտնելը պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող հողերից օրենսդրությամբ սահմանված կարգով անհատույց (մշտական) օգտագործման կամ վարձակալության իրավունք ձեռք բերած և այդ իրավունքները գրանցած իրավաբանական և ֆիզիկական անձանց, ներառյալ՝ օրենսգրքի 118-րդ հոդվածի 4-րդ կետի հիմքով ձեռք բերված (բացառությամբ օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի)՝ սույն օրենքի ուժով սեփականության իրավունքով փոխանցվում են հասարակական և արտադրական օբյեկտների կառուցման և սպասարկման համար նախատեսված և սահմանված կարգով կառուցված, այդ թվում՝ կիսակառույց շենքերով, շինություններով զբաղեցրած հողամասերը՝ անկախ շենքերի, շինությունների ավարտվածության աստիճանից: Վերոնշյալ հոդվածը չի նախատեսում որևէ բացառություն պետական ոչ առևտրային կազմակերպությունների կողմից սեփականության իրավունքի ձեռք բերման համար: Հիմք ընդունելով վերոնշյալը՝ Վճռաբեկ դատարանը արձանագրում է, որ սույն քաղաքացիական գործով Կազմակերպությունն ունենալով իրավաբանական անձի կարգավիճակ, որն իր գործունեության ընթացքում կարող է ձեռք բերել իրավունքներ և կրել պարտականություններ, օգտվում է «ՀՀ հողային օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» 04.10.2005 թվականի թիվ ՀՕ-199 ՀՀ օրենքի 23-րդ հոդված 1-ին կետի 2-րդ ենթակետով նախատեսված սեփականության իրավունքի ձեռք բերման հնարավորությունից:

126. Բաբկեն Սահրադյան v. «Բնտրաքոմ Հայաստան» ՍՊԸ, քաղ. գործ թիվ 3-1848/ՎԴ (աշխատավարձի և դրան հավասարեցված վճարումների փոխհատուցման,

գույքի նկատմամբ սեփականության իրավունքը ճանաչելու, հրամանը և ծանուցումն անվավեր ճանաչելու պահանջներով):

Խնդիրը. Արդյո՞ք աշխատանքային պայմանագիրը գործատուի կողմից ստորագրված չլինելու հանգամանքը աշխատողին զրկում է ի հավաստումն այդ պայմանագրի առկայության այլ ապացույցներ ներկայացնելու հնարավորությունից:

ՀՀ վճռաբեկ դատարանը որոշեց. ՀՀ աշխատանքային օրենսգրքի 85-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ աշխատանքային պայմանագիրը կնքվում է գրավոր ձևով՝ կողմերի ստորագրությամբ մեկ փաստաթուղթ կազմելու միջոցով: Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ աշխատանքային պայմանագիրը կնքվում է երկու օրինակից: Աշխատանքային պայմանագիրն ստորագրում են գործատուն կամ նրա ներկայացուցիչը և աշխատողը: Սույն գործի նյութերում առկա է գրավոր ապացույց, որի վերնագրում նշված է «Իրավաբան/Փաստաբանի աշխատանքային պայմանագիր» N55, որպես կնքման ամսաթիվ նշված է 23.12.2005 թվականը: Նշված գրավոր ապացույցի բովանդակության ուսումնասիրումից Վերաքննիչ դատարանը հաստատել է, որ այն ստորագրված է միայն Բաբկեն Սահրադյանի կողմից: ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 298-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գործարքի հասարակ գրավոր ձևը չպահպանելը վեճի դեպքերում կողմերին զրկում է ի հաստատումն գործարքի ու նրա պայմանների՝ վկաների ցուցմունքներ վկայակոչելու, սակայն նրանց չի զրկում գրավոր կամ այլ ապացույցներ ներկայացնելու իրավունքից: Այսինքն՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ 23.12.2005 թվականին Բաբկեն Սահրադյանի և պատասխանողի միջև կնքված թիվ 55 պայմանագրի ձևը պահպանված չէ, քանի որ այն չի ստորագրվել պատասխանողի կողմից, ինչը ՀՀ աշխատանքային օրենսգրքի 85-րդ հոդվածի ուղղակի պահանջն է: Սակայն միևնույն ժամանակ ի հավաստումն այդ պայմանագրի և դրա պայմանների գոյության դատավարության մասնակիցները կարող են ներկայացնել ցանկացած ապացույցներ, որոնք վկայի ցուցմունք չեն: Սույն քաղաքացիական գործում նման ապացույցներ են (գրավոր ապացույցներ) վկայակոչված համաձայնագրերը, աշխատանքային գրքույկը, ինչպես նաև Ընկերության աշխատանքային պայմանագրերի գրանցամատյանը: Գրավոր ապացույց պետք է դիտել նաև 23.12.2005 թվականին կազմված, Բաբկեն Սահրադյանի կողմից ստորագրված և պատասխանողի կնիքով կնքված փաստաթուղթը:

**Միաժամանակ, Վճռաբեկ դատարանը անդրադարձել է աշխատանքային պայմանագրի լուծման կարգին:*

127.«Արարատի ոսկու արդյունահանման ձեռնարկություն» ՍՊԸ v. ՀՀ բնապահպանության նախարարության բնապահպանական պետական տեսչություն քաղ. գործ թիվ 3-1431/ՏԴ (ստուգման ակտերն անվավեր ճանաչելու պահանջով):

Խնդիրը. Արդյո՞ք «ՀՀ-ում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 3-րդ կետով սահմանված բացառությունը տարածվում է բնապահպանական տեսչական մարմինների կողմից տնտեսավարող սուբյեկտներում իրականացվող բոլոր ստուգումների վրա:

ՀՀ վճռաբեկ դատարանը որոշեց. Վճռաբեկ դատարանը գտնում է, որ օրենսդիրը սահմանել է միևնույն պետական մարմնի կողմից միևնույն տնտեսավարող սուբյեկտում օրացուցային տարում մեկից ավելի ստուգում իրականացման սկզբունքային արգելքը: Նշված կանոնից օրենսդիրը սահմանել է նաև բացառություն՝ «ՀՀ-ում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 3-րդ կետով սահմանված, ինչպես նաև հարկային օրենսդրությամբ սահմանված կարգով հարկային հաշվանցումներ և (կամ) վերադարձ ու պարտադիր

սոցիալական ապահովագրության վճարների՝ օրենքով սահմանված կարգով հաշվարկված պարտավորություններից ավելի վճարված գումարների վերադարձ իրականացնելուց առաջ տնտեսավարող սուբյեկտի մոտ կատարվող ստուգման դեպքերի:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ «ՀՀ-ում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 3-րդ կետով սահմանված բացառությունը տարածվում է բնապահպանական տեսչական մարմինների կողմից տնտեսավարող սուբյեկտներում իրականացվող բոլոր ստուգումների վրա: Հետևաբար, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ վերը հիշատակված բացառությունը վիճարկվող ստուգման դեպքի վրա տարածվում է:

128. Սեդա Մոնյան v. Իդա Էբզիմյան, քաղ. գործ թիվ 3-1778/ՎԴ (Երևանի Նոր Արեշ 42 փողոցի թիվ 22 տան նկատմամբ օգտագործման իրավունքն առանց փոխհատուցման դադարեցնելու և վտարելու և հակընդդեմ հայք՝ գումարի բռնագանձման, սեփականության իրավունքի վկայականն անվավեր ճանաչելու, սեփականության իրավունքը ճանաչելու և փաստացի տիրապետմամբ Երևանի Նոր Արեշ 42 փողոցի թիվ 22 հասցեում գտնվող ժառանգական գույքի բաժինն ընդունած ժառանգ ճանաչելու պահանջներով):

Խնդիրը. Արդյո՞ք ժառանգության բացմանը հաջորդող վեցամսյա ժամկետի ավարտից հետո ժառանգատուի պարտավորություններով պարտատերերի պահանջները ենթակա են բավարարման:

ՀՀ վճռաբեկ դատարանը որոշեց. ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1243-րդ հոդվածի համաձայն՝ պարտատերերն իրավունք ունեն ժառանգության բացման օրվանից վեց ամսվա ընթացքում ներկայացնել իրենց պահանջները: Պահանջները, մինչև ժառանգների կողմից ժառանգության իրավունքի վկայագիր ստանալը, կարող են ներկայացվել ժառանգությունն ընդունած ժառանգին կամ կտակակատարին, իսկ նշված անձանց բացակայության դեպքում՝ ժառանգության բացման վայրի նոտարին: ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1244-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ ժառանգները, ժառանգության իրավունքի վկայագիրը ստանալուց հետո, իրենց անցած գույքի արժեքի սահմաններում հատուցում են նույն օրենսգրքի 1242-րդ հոդվածում նշված ծախսերը:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ժառանգության իրավունքի վկայագիր ստանալուց հետո ժառանգը ժառանգատուի պարտքերով պարտատերերի առջև իրեն անցած գույքի սահմաններում կարող է կրել պարտավորություններ, եթե ժառանգության բացումից վեցամսյա ժամկետում (կամ մինչև ժառանգության իրավունքի վկայագիր ստանալը) պարտատերերի կողմից իրեն պահանջ է ներկայացվել: Պահանջների ներկայացման համար սահմանված վեցամսյա ժամկետի ավարտից հետո ներկայացված պահանջները, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1244-րդ հոդվածի 1-ին կետով սահմանված կարգով, ենթակա չեն բավարարման, քանի որ մինչև ժառանգության իրավունքի վկայագիր ստանալը պահանջի ներկայացման դեպքում միայն ժառանգը կարող էր որոշել ժառանգությունն ընդունելու նպատակահարմարությունը:

Միաժամանակ, Վճռաբեկ դատարանը անդրադարձել է այն հարցին, թե արդյո՞ք, ժառանգներից մեկի կողմից ժառանգական գույքի արժեքի սահմաններից դուրս ժառանգատուի պարտավորությունները մարելը, նրա համար մյուս ժառանգի նկատմամբ կարող է հետադարձ պահանջի իրավունք առաջացնել: